

Բազմի

ՓԵՏՐՈՒՄ 83




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1-- ԵՒ ՊՅԱՃԵԱՆ Մարդը նորից
- 3-- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ Մի օր իր կեանքի օրերից
- 6-- Ա. ՆՈՒՐԵԱՆ Հաագոյնը
- 7-- Մ. ՀԱՃԵԱՆ Օթելլոյէն բարեւ
- 14-- Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ Բանաստեղծութեան ճիւղ
- 15-- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 29-- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Վարագոյրը
- » » » Տնորք
- 30-- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ Մեռելներուն արդար իրաւունքը
- 33-- » » Իրենց սկնարկը
- 36-- » » Մեր երկիրը
- 37-- * * * Ա. Խսակեանի ճոր նամակները
- 38-- Մ. ՄԻՆԱՍԵԱՆ Աւետիք Խսակեանի նամակամուց
- 41-- ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ Նամակներ
- 52-- Գ. ԱՐԱՋԵԱՆ Մարօ Մարգարեանի ճնարը
- 59-- Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ Եղիայի «Իմ անկեանագրութիւնը»,
մեմօ եւ ուրիշներ
- 63-- Ե. ՏԵՄԻՐՃԻՊԼԵԱՆ Զարգացումն «Ես»ին
- 66-- » » Տնարք, — եւ Տիկնայք
- 67-- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Գալուստ Պապեանի հետ
- 72-- * * * Մշակութային լուրեր

Կողքի նկար՝ գործ Գալուստ Պապեանի



digitised by A.R.A.R. @

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԲՈ. ՅԱՐԻ. ԽՈՒՑ ՓԵՏՐՈՍԻԱՐ 1988 ԳԼԾՐԱԹ

Ե Դ. ՊՕՑԱՃԵԱՆ

ԴՈՒՆ. — ԳԻՐԵՐ ԱՆԾԱՆՕԹ

ՄԱՐԴԸ ՆՈՐԵՆ

— Իմացի՛ք զիս, արձանագրե՛, ներկայիդ մէջ, անհո՛ւն, անվե՛րջ,
Ներկայիդ մէջ հրապայծառ,
Լինելուկա՛ն:
Արձանագրե՛
Խորը խղի՛ղ, խորը գու՛թիղ,
Արարիչի մէջն աչքերուդ, արարե՛նքուդ,
Ստեղծական աւիշներուդ:
Վայրկեան ըլլամ, մասնի՛կ ըլլամ Գու ներկայիդ,
Ըլլամ քջիջ՝ սերդ կազմուդ, անհունօրէն գայն ֆաղցրացնող
Գաղտնի մեղրին...

— Ես մի՛շտ գիտեմ՝ Դուն աստուած ես եւ կ'ունկնդրես վայրկեան
վայրկեան

Քարե՛րն անգամ.

Իզձը գիտես ոչինչ չըսող, ա՛լ վերջացած մեռել բանին ու չեղածին,
Զըլլալիքի՛ն.

Ունկնդրութիւն, սեսողութիւն ու ճանաչում ես ընդհանուր,
Լինելական ու վերջնական հուր ընդհանուր.

Այսինքնով A.R.A.R.@

Ճակատագիր՝
Ամէնուրեք եւ ամէն ժամ ինքզինք բաշխող եւ չաւարտող...

— Այսուհանդերձ, փոխ առնելով ձայներ հօօր,
Նրկինք պատող ամպրոպներու,
Փոխ առնելով՝
Քաշողական, մագնիսական ձայն արգարի,
Մեղքէ հեռու մանուկներու,
Ձայն համոզուած եւ համոզիչ առաքեալի,
Հգնաւորի, բանաստեղծի,
Եւ դեռ շշուկ՝ ծաղիկներու, շող ու գոյնի, ու բոյրերու,
Եւ դեռ շշուկ՝ արցունքներու, սրտի, վշտի,
Հեւքեր յայտնի, նաեւ ծածուկ ամէն տարրի եւ էակի,
Փոխ առնելով բառեր մօտիկ, բառեր «Նս»ի,
Եւ բառ օտար մոլորակի, ծիր-կաթ-ինի, տիեզերքի՝
Կ'ուզեմ բերել պտուղի պէս քաղցր ու հասուն
Իդճեր Քեզի՝

❖

— Կեանքն ամբողջ, —
Սպասումի տենդ մը երկար, չիմացուելու վախ մը երկար,
Հասկցուելու, ու վերստին ու յաւիտեա՛ն հասկցուելու
Ձիս սպառող, զիս չփացնող միզ մը երկար...

ԵՒ. ՊՕՅԱՃԵԱՆ

(Անտիպ)

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Յ

Ս Ի Օ Ր Ի Ր Կ Ե Ա Ն Ք Ի Օ Ր Ե Ր Ի Յ

Չնայած փողոցից նուրբանը շրջուց Հինգերորդ պողոտայ, բայց զեր
 դէպի ամերիկեան քաղաքակրթութեան օրրանը, ուր համայնապատկերի փո-
 խարէն երկինքը մեղքուած էր մարդակերտ կիրճերով: Հանրային գրադարա-
 նի պարտէզում ցոյց էր տեղի ունենում, ցուցարարների հոտանքը եկեղ-թափ-
 մը էր պողոտայ: յոգնած, ջրանաթոր դէմքեր, մեքենայում ցուցատուխտակ-
 ներ, շահաւատար իրաւունքներ միասնականներին, երթը ցրիւ ու տն-
 կանոն, բողոքը մասնագիտութեան վերածուած, ժողովրդավարութիւնը ըն-
 թացքի մէջ, ամառուայ կէտին, կուպրի կարտի մէջ: Սրանց կը գնան, ու-
 թիշները կը դան, միշտ կը լինի ցոյց: Նա պէտք, որ իր ու ցուցարարների
 միջև անջրպետ կայ, ինքը դրսումն է, անմասնակից, կուշ եկած իր պատ-
 եանին մէջ, օտար ու անցորդ: Մ'ըր գնայ: Այլևս կոյս տարածութիւն շը-
 նաց: Քայիֆորնիան փողոց նուանուել, բողաքակրթուել, ալլադակուել է:
 Քալիֆորնիայում լինելիա նրան թուած է, թէ աշխարհի սակն է ընկել, որ
 իր մայրը ոչ ոք չի շտի, յատկապէս իսր Անթելուում իր երազը Ամերիկան
 էր, սակայն ո'ւր մնաց ամերիկեան ճրագը: Այդ երազը գրկած՝ ամէն օր Նոյր
 Աշխարհ են հասնում պողթականները, բայց մ'ըր են աղ պողթականները:
 Այդ չքացած՝ յանկարծ կուլ են գնում, սոսիմի պէս կողում են սուօրեային,
 մոտանալով ծառ ու ծաղիկ, աստղ ու աստղ, դու, արինակ, վերջին անգամ
 կ'ըր էր, որ վերջալույսը դիտեցիր, այս ամբողջ, մախրացող երեկոյի մէջ
 պալարուող այս մարդիկ, անհայեացք դէմքերով այս շարժուն արարածները,
 շէնքերի շուքերի սակ շուք դարձած այս խշտակները, մի պուտ երջանկու-
 թեան յետիւց ընկած ներքուստ այս խեղանդամները երկու բառից մէկը
 փաճ, երբ կարուել են հաղորդակցութեան մնացած թելերը: Ան Հինգերորդ
 պողոտայի մայթի վրայ այդ պուշին նուրբանը սոյնպիսի՝ մենութիւն զգաց,
 որ կարծես միակ մարդն էր համայն տիեզերքում: Տեղ չէր մնացել, նպատակ
 չէր մնացել, կիրք չէր մնացել, մնացել էր ինքը՝ համատարած աւերի մէջ
 յանձնապատան, կատարեալ միմա, ստացարանու մասունք բոյս: Նրա սու-
 քերը թուլացան, անպատեալ պայթիւնի հակադրեցութիւնն է, վիրապում
 նկատուած զարի պէս մայրը նոր է տեղ հասնում: Գիմացից մի մարդ անցու-
 քառակուսի դէմքով, անցան շատ քառակուսիներ, հասա թեւեր, հասա փո-
 լիք, հասա սրունքներ, կանայք՝ վայրագ ու գիշատիչ, թրոնքսի կենդանա-
 բանական աչքին, հանճարեղ մէկը գնացել մէկ-մէկ բացել է վանդակները:
 Ուզեց արշել: Թախիծ չէր, վիշտ չէր, ցու. չէր, ոչ էլ արամութիւն կամ նը-
 ման բաներ: Ինչ որ մարդիկնէր սուրայատակը ճեղքած հասել էին սաքերին

րենց համադրեստի մէջ, սակայն պողոտայից, շինութիւններից, ապակեպատ դարպասներից, ցուցանակներից, ներսի վտռուող ջահերից, անցորդների քայլուածքից հնութեան հոտ էր գալիս, փռչին նստել էր մարդկանց հայեացքում, ստուգ էր ներսը: Լոյս կար ու չկար: Յերեկը տակաւին մաքառում էր, երկնաքերների կատարները պղտորուել էին, դեղին-մոխրագոյն կափարիչը իջել էր ցած նստել քարքոն դիտարկի դուռը վրայ ու քանդում թռեցրը, յետագարձ չկար, յետագարձը կորուստ էր, ամբողջ մի հարիւրամեակի անձնաստուութիւն, ղերտդասելի էր թոյնը, աստիճանական անձնասպանութիւնը, ճարտարարուեստի վերջին զգայացունց ճիւղ: Նրանից յետոյ այդոնք-գիւլ-է-դամ: Այդուհանդերձ նա մանուկ ուղեքով դիտեց ամառային երթը: Պատմութեան ինչ որ անցողիկ պահին ինքը ներկայ էր, քայլում էր մուրակի վրայ, երկրի մի կէտի վրայ, ուր հորիզոն չկար, ուր մետաղեայ դասան ստուերները սրածայր եռանկիւններով հարուածում էին նահանջող միջոցը, տալուած քարերի յամբ բողոքը, յուլիսեան ուշացող երեկոն, ինքը, մի օր իր կեանքի օրերից:

ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՃ

(Հատուած մը «Արամի գիրքը» անտիպ վեպէն)

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Ը ...

Հրաշքի յայտով; երբ ամեն գիշեր
 Մեքրայի յարդգող ուզիմն նայիմ՝
 Կիս-գարու տեղով երազած աստղեր
 Կը տեսնեմ այդտեղ ու կը... վհատիմ:

Անոնց լծյան երբեք չհասա՛ւ գրչիս,
 Որ *Լաւազոյն*ին այնքան էր կարօտ-
 Բառերը, որոնք կախարդեցին զիս՝
 Գարձան... ամուսնեան կրակէ նարօտ:

Ձեմ յիշեր թնա գիշեր մը, որուն
 Մեղրայոյն անցած շրջայ կասկածով —
 Ո՛ւր է գազանիքը այն երկունքներուն,
 Որոնց խանձարուն հիւսուած է շողով:

Կարմիր տազերու փշաքելերուն
 Անցած բառերուս վերքերուն համար,
 Թախանձ դրկեցի յարայէզներուն,
 Ոյ գան ու կեանքի՛ կոշեմ տառ առ տառ:

Ուշ է բայց հիմա ու երկար՝ ուզիմ —
 Մնդարձ մեկնումի օրեր եմ արդէն-
Լաւազոյն ըսուած երեզէն քառիմ
 Ափ մը մոխիրն եմ՝ երգին փոխարէն:

ԱՇՈՑ ՆՈՒՐԵԱՆ

1982, Պէյրուք

Մ. Հ Ա Ճ Ե Ա Ն

ՕՐԹԵԼԼՈՅԵՆ ԲԱՐԵՒ

Որոշեցի յիմարանալ: Որոշեցի ճանչնալ ազատութիւնը:

Անշուշտ չկրցայ իսկապէս յիմարանալ, թերեւս ալ անոր համար, որ արդէն յիմար էի, բայց չէի անդրադարձած այդ մանրամասնութեան:

Քանի՞ անգամ կոխի, հազ, պնդութիւն, փորհարութիւն եւ նման հիւանդութիւններ ունեցած էի արդէն: Ժամանակն էր, որ յիմարութիւնն ալ փորձէի, քանի դեռ ծերութիւնը, թոքախտը կամ քաղցկեղը չէին յարձակած վրաս:

Հետեւեցէ՛ք ուրեմն որոշումիս գործադրութեան:



Նիւ Եորք կոչուած քաղաք մը կար Ասլանտեան ովկիանոսի եղբրքը, որ իր դոկտորութեան եւ ցուցամուտութեան զո՛ւ դացած պէտք է ըլլայ արդէն, երբ դուք կը կարդաք այս տողերը (թերեւս ալ չէք գիտեր, թէ ի՞նչ բան է կարգալը, քանի որ ամէն ինչ կը տեղեկանաք կոճակի մը վըրայ կոխելով եւ լսելով ու տեսնելով մեր գիմացի պատին վրայ):

Մենք, այսինքն՝ 1981 թուականի երկրաբանակիչներս, ատոր նման բաներ մը ունէինք, բայց յոճախ կը կարդայինք գիրքեր, հանդէսներ եւ լրագիրներ, անշուշտ՝ ո՛չ այնքան արագ, որքան մեր օրերուն, բայց կարծես թէ դիրքաւ կրնայինք միտք պահել մեր կարդացածը, ուելի գիրքաւ քան քիլովիթըն կոչուած նախնական գործիքին վրայ մեր տեսածները: Մեր օրերուն, պրիթէ անկարելի էր նշանաւոր հեղինակ մը ըլլալ, առանց հրեայ, համայնաւար, ահարեկիչ կամ միաստեական ըլլալու:

Նկատելով որ ես ո՛չ հրեայ, ո՛չ միաստեական ծնայ եւ ոչ ալ համայնաւար կամ ահարեկիչ դարձայ, կ'ենթադրեմ,

որ դործերս յոյս աշխարհ բերող մարդիկը հազիւ թէ երկու-երեք դար ետք պիտի յայտնուին՝ միայն գեղարուեստական արժէքիս համար: Հետեւաբար, ո՛չ թէ ժամանակակիցներուս, այլ այդ ապագային ընթերցողներուս պէտք է ուզղեմ խօսքերս:

Պահ մը ուրեմն խորհեցէ՛ք, որ շատոնց մեռած-զացած մարդու մը դրանն է մեր կարդացածը (միշտ կը յուսամ, որ մեր օրերուն դործածուած մեւով մը պիտի տեղեկանաք դարձիս):

Եթէ չէք լսած Նիւ Եորք անունը, հին համայնագիտարանի մը մէջ փնտռեցէ՛ք եւ տեղեկացէ՛ք, որ Միացեալ Նահանգներ կոչուած հսկայ երկրի մը արեւելեան եզերքը, Մէնհէթթըն կոչուած կղզիի մը վրայ, երկաթէ եւ պլաթինէ կառուցուած տնհամար շէնքերու տէր քաղաք մը կը բնակէի ես, յամի Տեառն 1981ին:

Հո՛ն է, որ տեղի ունեցաւ ամէն բան: Պատրաստ էք կարդալու կամ լսելու:



Նիւ Եորքի ամէնէն ճոխ, ամէնէն նըշանաւոր փողոցը ընտրեց, երեկոյան ժամը հինգին, երբ անցորդները կ'աճապարեն հասնել գետնափոր կայարան մը կամ ատոր պէս հանդրուան մը, որմէ պիտի յարողին ճամբայ ելլել դէպի տուն:

Ու բազմութեան մէջ, ինքզինքը թողուց մայթին վրայ եւ պատկեցաւ՝ սպասելով, որ ոտակիան մը կամ անցորդներ հետաքրքրուին իրմով:

Երկու աստիկաններու վիճակուեցաւ այդ բախտը:

— Պարո՞ն, պարո՞ն, անհամարժեք էք: Ի՞նչ ունիք:

Գատակերպութիւնը սկսած էր վերջտպէս:

— Ո՞վ էք դուք, որ կը հարցնէք:

Բժիշկ էք, թէ Գարրիէլ Հրեշտակը:
Ոստիկանները տատամօեցան:

Գինով էր արդեօք: Թժրեցուցիչէ մը
Թունաւորութեամբ էր, թէ պարզապէս յի-
մարութեան նուաջէ մը զգեցնուած:

Փորձեցին բռնել թեւերէն եւ սոքի
կանգնեցնել, մինչ քանի մը անցորդներ
կը հաւաքուէին, տեսնելով, որ վտանգ
մը չէր սպառնար պատկողը:

— Ի՞նչ կ'ուզէք ինձմէ: Հանդիստ
թողուցէ՛ք զիս անկողնիս մէջ:

Երկու ոստիկանները իրարու նայե-
ցան, աշնպէս՝ ինչպէս երկու ամերիկա-
ցի ոստիկաններ կրնային նայիլ իրարու:

— Պարո՛ն, ոտքի՛ կէտք: Կ'ուզենք օդ-
նել ձեզի:

— Բայց դուք ո՞վ էք, որ կրնաք օդ-
նել ինձի: Ես ձեզմէ օգնութիւն չեմ ուզի:
Այս ազատ երկրին մէջ իրաւունք
չունի՞նք արդեօք պուտ մը հանգիստ քը-
նանալու մեր հողին վրայ: Ըսէ՛ք տես-
նեմ: Ես ձեզմէ աւելի շատ իրաւունք չու-
նի՞մ մաս հողին տէր կանգնելու, քանի որ
ձեր տարիքներուն դուժարը հազիւ կը
հաւասարի իմ տուրք վճարած տարիներ-
ուս դուժարին:

Ոստիկանները այս անգամ տարբեր
կերպով նայեցան իրարու: Երբ երկու հո-
գի իրարու նային սովորականէն տարբեր
կերպով, կը կարծէ՞ք, որ աշխարհի վը-
րայ բան մը կը փոխուի, եթէ նոյնիսկ
անոնք ամերիկացի ոստիկաններ ըլ-
լան, Թերեւս՝ ոչ: Բայց այս անգամ
խկապէս բան մը փոխուեցաւ Յիօթ ա-
փրեկի մայթին վրայ: Ոստիկաններուն
այս վերջին նայուածքը նշանակութիւն
մը ունէր ապահովարար, քանի որ ստանց
լարունակելու խօսակցութիւնը, ոտքի
կանգնեցուցին պատկած մարդը:

— Քաշէ՛նք, բարեկամ:
Ու բարեկամը ինքզինքը դտաւ ոստի-
կանատուն:

Ի՞նչ գիտէք, որ քանի մը հողիի հը-
բաման արձակելու ոստիկանին հասած
ոեւէ պաշտօննայ միայն շատ կարեւոր
խօսքեր կրնայ արտասանել:

— Ձեր անձնը, — ըսաւ ուրեմն այն
համազղեստաւորը, որուն առջեւ տարին
զբարեկամը:

— Նախապահական թեկնածու եմ:
— Պարո՛ն, կատակը մէկ կողմ: Ժա-
մանակ չունինք կատակելու:

— Պակասութիւն մը կը տեսնէք վը-
րատ նախապահական թեկնածու դառնա-
ու համար:

— Պիտի բռնէ՞ք ձեր անունը:
— Հապա՞ ձեր անունը: Նախ դուք
բռնէք ձեր անունը:

— Հիւսիսը էք արդեօք:
— Ի՞նչ դո՞ւք, Բժիշկի չէք նմանիր:
Պաշտօնեան նայեցաւ մարդուն երկու

քովերը սպասող փոքրաւորներուն:
Նոյնուածքները տարբեր լիզու մըն
եւ տնշուշտ: Փոքրաւորները հասկցան ի-
րենցմէ ուղուածը:

— Լա՛ւ: Տարե՛ք սպասման սենեակ
մը, մինչեւ որ յիշէ իր անունը: Խե՛նթ
է արդեօք:

— Կեցէ՛ք տեսնեմ: Վերջապէս չը-
նարձքով խօսք մը բացի: Կը հարցնէք,
որ խե՛նթ եմ արդեօք: Հապա՞ դուք: Ե-
թէ դուք ալ խե՛նթ էք, կրնանք հասկըց-
ալի:

— Տէ՛ր Աստուած: Այս բաները մի-
այն մեղի կը պատահին: Բայց պիտի ը-
սէ՞ք վերջապէս: Ո՞վ էք: Ո՛ւր կը բնա-
կիք: Ինչո՞ւ պատկած էիք մայթին վրայ:
— Բայց դուք ինչո՞ւ համար կը շա-
հապողութեք ինձմով: Ո՞վ եմ ես, որ
կ'արժանանամ ձեր հողատարութեան:
Ձէ՞ք տեսնել, որ մարդ մըն եմ միայն:
Այսքանը չի՞ բուեր:

— Ձեր անունը կը հարցնեմ:
— Պատմադի՞ր էք, ի՞նչ էք: Ի՞նչ
պիտի բնէր անունս: Արդեօք պատմու-
թեան էջերուն մէջ անցընելու արժանի՞
կը նկատէք զիս:

— Հասկցուեցաւ: Տարե՛ք: Տարե՛ք,
որ խելքը գլուխը դայ:

— Խելք, գլուխ...: Տեսա՞ք: Այս բա-
ռերը բան մը կը նշանակեն: Կրնա՞մ հար-
չընել, թէ ո՛ւր կը ղրկէք զիս:

— Կը բուէ, պարոն: Ժամանակ չու-
նինք դուրսանալու:

— Բայց ինչո՞ւ համար կը բարկու-
նաք: Ես ձեզ նախատեցի կամ չհարուա-
ծեցի:

— Աստուած իմ: Համբերութիւն տուր ինծի:

— Այդ է, որ կը պակսի մեզի:

— Գոնէ ըսէ՛ք: Ամերիկացի չէ՞ք:

— Ամերիկա՞, բայց տակաւին կա՞յ այդ անունով երկիր մը:

— Կը բաւէ՛, կը բաւէ՛: Տարէ՛ք, տարէ՛ք:

— Բայց պարոն, ինչո՞ւ համար կը նեղուիք: Մենք տուրք կը վճարենք, որպէսզի դուք ազնիւ ըլլաք մեզի հետ: Այդ Ամերիկա կոչուած երկիրը չէ՞ր անհատացած քարտէսէն սա երբորդ պատերազմի տարիներուն, ասկէ դար մը առաջ:

Ձեռքին լուրջ շեշտը ազդեցութիւն գործեց:

— Լա՛ւ, ըսէ՛ք ուրեմն: Ո՞ր ազգին կը պատկանիք:

— Մարդազգի չե՞մ թուիք արդեօք:

— Դուք գուարճանալու եկած էք հաս: Պարո՞ն, ձեր անունն ու ազգութիւնը պէտք է ըսէ՛ք մեզի:

— Երբ ձեր այս խօսքերը կը լսեմ եւ ձեր դէմքերուն կը նայիմ, կապկազգի ըլլալու փափաք կը զգամ:

— Կը մտնաք, որ ամերիկեան դատարանի մը մէջ կը գտնուիք, որ կապկազգի չի դատեր: Դուք ամբաստանուած էք...

— Վայրկեան մը: Ի՞նչ կը նշանակէ ամբաստանուած:

— Քանի որ կը յամարեք որամիտ ըլլալ, դացէ՛ք, հանդտացէ՛ք:

Ոստիկանները առին-տարին, արգելափակեցին:

Ու տրամը սկսաւ:

Անտարակոյս լսած էք «ազատութիւն» բառը, որ ամէն քաղաքագէտի ամէնէն աւելի սորված եւ արտասանած բառն է՝ ամէն լեզուի մէջ ալ (գոնէ այսպէս էր մեր օրերուն):

Ապահովարար լսած էք նաեւ, որ մարդիկ երբեմն — ոչ-յամար — ազատ կը զգան իրենք զիրենք, բայց թերեւ չէք հաւատար, երբ ձեզի ըսեմ, որ իրական

ազատութիւնը կրնայ յայտնուիլ ճի՛շդ տն պահուն, երբ ծանրակշիռ յանցանք մը կը գործէք, անդարձանելի շարք մը կը հասցնէք ուրիշներուն, ձեր ազգին ու երկրին, կամ ոլորտայէս՝ ոճիք մը կը զործէք, ա՛յն ալ՝ կանխամտածուած կերպով:

Բայց այս բոլորը արգիլելու համար, այսինքն՝ մարդը ազատութեան հասնելէ արգիլելու համար՝ ընկերային, քաղաքական, կրօնական ու բարոյական կարգուարար շինուած էին: Մենք տակաւին չէինք իմաստացած այնքան՝ որ հասկրնանք այս կարգուարարները շինող իմաստուններուն ընթացքը, եւ առհասարակ ազատութիւնը կը փնտռէինք վախի, գերութեան եւ ամէն տեսակ ստրկութեանց մէջ:

Որ մը պիտի փաստուի (թերեւս ալ՝ ձեր օրերուն փաստուած է արդէն), որ ազատ մարդը ամէնէն վտանգաւոր արարածն է, եւ թերեւս ալ, ազատութիւնը ճանշուած է միայն «յանցապարտ» կամ «ոճրագործ» կոչուած մարդոց կողմէ, միայն այն պահերուն, երբ զործած են իրենց «յանցանքը» կամ «ոճիր»:

Պիտի փաստուի մեզի, եւ ո՛չ թէ օրէնսդէտներուն համար:

Մենք՝ սովորական, պարկեշտ քաղաքացիներս, յամի Տեառն 1981ին, բոլորովին հեռու պահուած էինք դէպքերու հիմնական պատճառներու իմացումէն ու պարտուոր էինք գոհանալ վարչի մը կամ կուսակցութիւն կոչուած իւրմերի մը կողմէ յայտնուած ու դարբնուած զազափարներով:

Դառնանք հիմա այն արգելաբանը, ուր իբրեւ կասկածելի յիմար՝ առաջնորդուեցայ եւ մնացի երեք ժամու շափ:

Երբ որոշեր էի յիմարանալ կամ յիմարութիւն փորձել, զրեթէ վստահ էի, որ յիմարութիւնը կը կայանար ընկերութիւն կոչուած ոստայնէն դուրս փախելուն եւ այդ ոստայնին մէջ հաստատուած կարդուատրքին հակառակ շարժելուն մէջ: Տեւական կերպով յանցապարտի դիրքը

պէտք է ըլլար այդ վիճակը:

Կը մնար դիտնալ, որ սա յիմարութիւնը ինչ առաւելութիւններ կրնար բերել ինձի, անկախ այն կացութենէն, որ շուրջիներուս առատ ծիծաղ կը հայթայթէր եւ ուրիշներու ալ՝ անակնկալ նեղութիւն, սրտաբեկութիւն կամ արգահատանք:

Յիմարութիւնը նոյնացնելով ազատութեան հետ, այդ արգելարանին մէջ անդրադարձայ, որ ես ճամբայ չէի կլած ազատութիւնը փնտռելու համար, այլ փախաքած էի պարզապէս զուարճանալ նոր զօյակելոյ մը: Բայց սա ազատութիւնը եկաւ թունաւորելու ամէն ինչ: Քանի որ չէի փնտռած, կրնայի հետեցնել, որ պէտք չունէի ես այդ ազատութեան: Անտարակոյս արդէն ունէի ազատութիւնը: Աւրիկ՝ հասաւ սակայն այս թոյնը: Թերեւս ալ նախընտրելի էր մտնալ ազատութեան գաղափարը, ուրիշ անգամ չլիարժեքիւ եւ չպատճուելու համար նմաններու կողմէ: Մինչեւ այդ պահը չէի խորհած, որ ազատութիւնը չէի ճանչցած: Թերեւս ալ աւելորդ պերճանք մըն էր անիկա, որուն մասին խորհողները ի վերջոյ բանտերու բնակիչ կը դառնան, ըստ իրենց խորհուրդներուն գործնական հետեւաններուն: Բայց պէ՞տք է ենթադրէի, որ ամէնէն զազատաները ամէնէն կատաղի յանցապարտներն էին: Այդ պարագային նախկին բռնակալներն ու աշխարհակալները ցանկին գլուխը պէտք է գային:

Այս խորհրդածութիւնները հազիւ քանի մը վայրկեան զբաղեցուցին զիս: Ընչ կրնայի ընել մնացեալ ժամանակի ընթացքին: Ապահովարար այս արգելարանին մէջ որոշ ժամեր պիտի անցընէի: Շուրջս լուռ ու տխուր քանի մը մտրդիկ կային, որոնք չէին հետաքրքրուեր ինձ մով: Անդադար կը ծխէին ու յուսահատօրէն դետին կը նայէին: Ահամարձակեցայ խեղկատակութիւնս շարունակել անոնց դէմ, ու լուռ՝ մխրճուեցայ թէ՛ անցեալս եւ թէ՛ ներկայիս մէջ:

Անցեալս ինչ կրնար ունենալ յսականշական, երբ ամէն մարդու անցեալն էր, քիչ թէ շատ տարբերութեամբ: Ար-

դէն ինչու համար պատժել այդ մասին, երբ դուք՝ ապագայի ընթերցողներս, չէք կրնար պատմութիւն կոչուած գրքին մէջ անցրնել մի ոմն սուտ յիմարի անուշը, պարզապէս անոր համար, որ ոչինչ ըրած է անսովոր, ո՛չ պատերազմ, ո՛չ սոճիք, ո՛չ օթեյլոյութիւն, ո՛չ նախօլէօնութիւն, ո՛չ հիթլէրութիւն՝ եւ ո՛չ իսկ արժանաքած է նոպչեան մրցանակի մը: Բայց վայրկեան մը: Արդեօք այս ոչինչներուն ներս գտնալն ալ չի՞ կրնար կարեւորութիւն մը ստանալ մեր պատմագիրներուն աչքին: Ի վերջոյ, նախապատմական օրերէն ի վեր, մեր երկրագունտի բնակիչներուն ջախջախիչ մեծամասնութիւնը չէ՞ն կազմեր ինձի պէս մարդիկը, որոնք կը շնչեն, կը սնանին, կ'ուտանին, կ'աշխատին որեւէ մարդի մէջ, կը սիրեն, կ'ատեն, կը խորհին, կը հնազանդին ուրիշներու հրամաններուն եւ օրէնքներուն, կ'ուրախանան, կը տխրին, կը հիւանդանան, կ'ուռողջանան, զտակ կ'ունենան, սուտ կամ լուրջ կերպով կը յիմարտան, ու մահուան կը սպասեն: Իսկ սա մահ կոչուած խայտառակութիւնը: Ի՞նչ է տակաւին պէք ալ կը մեռնիք որոշ ժամանակ ապրելէ ետք — որքա՞ն անհասցի պիտի ըլլար խօսիլ անմահներու հետ: Անտարակոյս, յաճախ կը խորհիք մահուան մասին, կ'ընդվզիք մահը ստեղծողներուն անճաշակ հնարքին դէմ ու իրաւունք կու տաք ձեզմէ ատաղ այս մասին բողոք բարձրացուցած մէկուն, հոգ չէ թէ այդ գործին լծուած ըլլայ Նիւ Եորքի մէկ պահականոցին արգելարանին մէջ, ատանց վկայի, եւ լուսութեան մէջ:

Ատեն մը, յետահ էի, որ մահը գոյութիւն ունէր միայն անոնց համար, որոնք կրնային խորհիլ մահուան մասին: Մեղի պէս հասարակ «մահկանացու» կոչուած մարդիկը, որոնց կեանքը մահուան սպասելէ տարբեր բան չէ, իրենց ծնած օրն իսկ համոզուած էին ատոր: Եւ որովհետեւ չէին խորհեր բնութեան երեւոյթներուն մասին, մահուան մասին ալ չէին խորհեր, որ կը նշանակէ՝ մահը գոյութիւն չունէր սպասումի բովանդակ չըրոջանին: Իսկ թէ ինչ կրնար պատահիլ մեր գիտակցութեան մէջ՝ մեր վերջին վայր-

կեանսներուն ընթացքին: Թողունք այս կէտը, որ տակաւին հետու պէտք է ըլլայ մեզմէ:

Ձեր շրջանին, չեմ գիտեր, որ կենդանիները կրցա՞ծ էք օտակ խորհելու կարողութեամբ, ինչպէս մեր շրջանի գիտունները, կը փորձէին օտակ հաշուիչ մեքենաները: Ամէն պարագայի՝ մեր օրերուն, ո՛չ պաշտօնները, ո՛չ միջոցները, ո՛չ բոյսերը եւ ոչ ալ կենդանիները ո՛չ մէկ զաղափար կրնային ունենալ մահուան մասին, որովհետեւ իրենց յար եւ նման յաջողութեան ծնունդ տալէ ետք՝ կանհետանային, ապահովարար մահկանացու մարդոց ցոյց տալու համար, որ յաւիտենապէս ապրելու զատապարտուած էին, որովհետեւ չէին կրնար տաքեր վերջաւորութեան մը մասին խորհիլ, կամ պարզապէս՝ չէին խորհեր: Տեքսթ պէտք է բաժն ըլլար. — կը խորհիմ, ուրեմն՝ պիտի մեռնիմ եւ ո՛չ թէ «Cogito, ergo sum» («— կը խորհիմ, ուրեմն՝ կամ»): Եթէ սակայն, մենք ալ բոյսերուն եւ կենդանիներուն պէս յաջողէինք մեր իսկական նմաններուն ծնունդ տալ անհետանալէ առաջ, ապահովարար մահը ոչնչացոյց չէր կրնար սեպտիլ: Բայց մարդը միշտ տարբեր մարդու ծնունդ կու տայ: Մահկանացու է, քանի որ չի կրկնուիր:

Այս տեսակ խորհողութիւնները միայն հասարակ մարդիկ կ'ընէին մեր օրերուն: Իսկ անոնք, որ կարելի եղածին չափ շատ զրամ գիզէլ եւ կարելի եղածին չափ շատ մարդոց հրամայել գիտէին, ո՛չ մահուան մասին կը խորհէին եւ ոչ ալ քովնախ մտածումներով կ'աղտոտէին կեանքը, որ պէտք է իրենց մատուցակէր՝ կարելի եղածին չափ շատ զգացական հաճութիւններ:

Ձեմ գիտեր, թէ ձեր օրերուն, ժ'ը հաճութիւններուն ետեւէն կը վազէք զուք, բայց մեր շրջանին, մարդոց համար հաճոյքի մեծագոյն ազդիւրը կ'ինքն էին: Անկարելի է, որ գիտական յառաջընթացութիւնը յաջողած ըլլայ մեր աչքին նուազեցնել սեռային վայելքներուն հրաշքը, բայց եթէ նոյնիսկ մեքենական գործունէութեան մը վերածած էք սերնդազործելը, պէտք է հին մատենաներուն մէջ

փնտռէք, կարգաք այդ մասին:

Մենք կ'եսով մեքենայ էինք: Արդեօ՞ք դուք ամբողջութեամբ մեքենայ դարձած էք: Ձեմ կրնար հաւատալ: Կ'ենթադրեմ, որ գոնէ ձեզ կառավարողները չեն հրաժարած մարդութենէ: Կ'ենթադրեմ ալ նաեւ, որ յիմարութիւն բառը այլևս ձեզի համար չունի այն նշանակութիւնը, որ ի զօրու է մեր մէջ: Բայց անշուշտ յիշողութեամբ մեքենաներ ունիք, որոնք ձեզի կրնան բացատրել, թէ մեր օրերուն, ի՛նչ իմաստով կը գործածէինք այդ բառը:

Այս հատուկտոր խորհողութիւնները հաղիւ քառորդ ժամ տեւեցին, մինչ սպասուէս կ'երկարէր եւ ո՛չ ոք կ'ըսէր, թէ ե՞րբ պիտի վերջանար:

Կ'ենթադրեմ, որ արդէն զղումի մասին սկսած էի խորհիլ, երբ բանտակիցներու ամէնէն յուսահատը ձեռքը գրգռանք տարաւ, սիկարէթի տուփ մը հանեց եւ ինծի երկարեց.

— Ձէ՞ք ծիսեր:

— Ո՛չ, շնորհակալ եմ, — պատասխանեցի, առանց անդրադառնալու որ յիմար մը այդպէս պէտք չէ պատասխաներ թերեւս:

— Փորձեցէ՛ք: Ձեռք գիտեր, որ մինչեւ կ'ըր պիտի սպասենք, Դիւրի՞ն է: Եթէ ուրիշ բան մը չունիք ընելիք, թերեւս կրնանք խօսակցութեան մը սկսիլ:

— Ոտակցութիւն կոչուածը աւելորդ գիւտ մըն է, սիրելի պարոն: Ես հրաժարած եմ այդ գործէն: Բայց եթէ կ'ուզէք խօսիլ, արդեւք չեմ ըլլոր ձեզի: Նոյնիսկ՝ մտիկ ալ կրնամ ընել:

Կրցա՞յ արդեօք արդեւցութիւն մը գործել այս խօսքերովս:

Մարդը զարմացած՝ նայեցաւ պահ մը ինծի, ապա ըսաւ.

— Ես ձեզմէ կէս ժամ առաջ բերուեցայ հոս եւ վստահ եմ, որ չուտով պիտի չմեկնիմ այս վայրէն: Լա՛ւ. թո՛ղ ձեր ուզածը ըլլայ: Նման պարագաներու՝ կարելի չէ մեղադրել ձեզի պէս մէկը: Վստահ եմ, որ շարագործ մը չէք: Արկածի՞ մը զուգալիք, թէ...

— ...

Հոսութիւնս խթան մը եղաւ իր լիզ-

ին: Շարունակեց.

— Ես յիմարութիւն մը գործեցի: Ատոր համար է, որ հոս ինկայ: Եթէ պատճեմ՝ չէք կրնար հաւատալ: Վատահ եմ, որ աշխարհի մէջ ինձմէ գտտ ո՛չ ոք կըրնար այս տխմարութիւնը գործել: Ո՛չ իսկ յիմար մը...

— Յիմար մը, ըսիք:

Անդալալարար արտասանեցի այս խօսքը:

— Այո՛, այո՛: Պարո՛ն. Երեւակայեցէ՛ք, որ առանց որեւէ պատճառի, փորձեցի կինս խեղդել:

Պահ՛ը հանդիսաւոր թնոյթ ստացաւ: Փորձեր էր կինը խեղդել, առանց պատճառի:

— Թո՛յլ տուէք, որ պատճեմ: Ահա՛ որ ճնշում մը կայ վրաս: Խնդրեմ, մըտի՛կ բրէք:

Յանկարծ լուց: Պահ մը ետք՝ շարունակեց.

— Անշուշտ Լթէ՛ ձեր յանցանքը աւելի ծանրակշիւ չէ: Ներեցէ՛ք, որ մոռցայ հարցնել:

— Աւելի ծանրակշիւ է անշուշտ, բայց էս շեմ խօսիր: Ինքզինքիս կ'արդիւնեմ խօսիլ մարդ կոշուած նմաններու հետ:

— Զարմանալի՛:

Ե՞րբ արդեօք մարդիկ պիտի հասնէին իրենց լսածը մէկ հարուածով հասկրնալու աստիճանին: Ապահովարար էս Լթէ՛ այս խօսակցիս տեղը ըլլայի, իսկոյն պիտի ըմբռնէի, որ յիմարի մը հետ էք գործու: Իսկ եթէ ըսածս բաւական չէր կրնար սեպուիլ յիմարութեան պիտակին արժանանալու համար... «Զարմանալի՛»: Ուրեմն, նախ՝ զարմանալի էր, որ արդիւնք ըլլայի ինքզինքս խօսիլ նմաններու հետ: Կ'արժէ՞ր այլեւս շարունակել այս խայտառակութիւնս, երբ դժբախտ մարդուն միայն գործանք կրնայի պատճառել, մինչդեռ կը կարծէի, որ յիմարութիւն փորձելով հիանալի կերպով պիտի յաջողէի գուարճանալ քանի մը ժամ:

— Վայրկեան մը յիշեցէ՛ք Օթելլոն, — ըսաւ խօսակիցս, որ չէր հետեւած լուր խորհրդածութիւններուս: — Ինչո՞ւ

համար նշանաւոր է այդ գործը ամբողջ աշխարհի մէջ:

Յանկարծ կասկածեցայ, որ այդ մարդը կրնար իսկական յիմար մը ըլլալ: Ո՛չ, ո՛չ: Չէր արժեք այլեւս մրցումի ելլել իսկական յիմարի մը հետ. մանաւանդ՝ որ այս կատակերգութեան սկզբնէն առջև պէտք եղած չափով չէի ուսումնասիրած յիմարութիւնը եւ իր տեսակները:

— Եէջօփերի բանաստեղծական հանճարին համար չէ՞ արդեօք, — պատասխանեցի:

Ուրեմն՝ մտնամ աս յիմարութիւնը: — Աւելի լա՛ւ խորհեցէ՛ք: Ես Եէջօփերիի մասին չեմ խօսիր, Օթելլոն է խնդրոյ առարկան: Երկրադունտին վրայ ձեր կարծածին չափ մարդիկ չեն հետաքրքրուիր Եէջօփերով, բայց զրեթէ ամէն մարդ ծանօթ է Օթելլոյին: Այդպէս չէ՞ արդեօք:

— Քանի որ կը պնդէք, Բայց Օթելլոն երեւակայական անձ մը չէ՞ արդեօք:

— Կարելորը այն է, որ երբ Օթելլոյ ըսէք, ամէն մարդ գիտէ, որ նշանաւոր հերոս մըն է:

— Թատերգութեան մը հերոսը, ըսել կ'ուղէք անշուշտ: Աւելի լաւ չէ՞ փոխանակ հերոսի, ուրիշ անուն մը ապլ անոր:

— Բառերը կարեւորութիւն չունին, այս պարադոքսին: Կարեւորը այն է, որ երկիրներ փրկող մեր հերոսներէն աւելի նշանաւոր մէկն է: Հիմա ըսէք ինձի: Ի՛նչ ըրած է Օթելլո՞՛ այս համալիրարհային համբաւին տիրանալու համար:

— Կինը խեղդած է, ըսաւ Եէջօփերի երեւակայութեան:

— Նորէն կը փորձէ շեղիլ նիւթէն: Բա՛կք պարզապէս, որ կինը խեղդած է, և ատոր համար ալ աշխարհահռչակ դարձած է:

— Տրամբանելու ձեւ մըն է, անշուշտ:

— Բայց իրականութիւն է:

— Պահ մը այդպէս ենթադրեմք: Արդեօ՞ք փորձեցիք ձեր կինը խեղդել, որովհետեւ կը նախանձէիք Օթելլոյի համբաւին:

— Վերջապէս, Ես գիտէի, որ խելացի մարդու մը հետ էք գործու:

— Տէ՛ր Աստուած :

— Ձեզո՞ւ : Ինչո՞ւ համար օղնու-
թեան կը կանչէք անծանօթ մը :

— Ներեցէ՛ք : Բերանս վարժուած է :
Ա՛յս էր ուրեմն ճշմարիտ յիմարու-
թիւնը : Կարելի՞ էր ուրեմն զուարեանալ
յիմար ձեւանայով , աշխարհի մը մէջ եւ
ժամտնակի մը ընթացքին , երբ տիմար
մաւրիտանացիները հերոսներու կը վե-
րածուէին հանճարեղ զրոզի մը արուես-
տին շնորհիւ եւ անհեթեթ մարդասպա-
նութիւնը կը բարձրանար տրամաբանու-
թեան սահմաններէն վեր :

— Պիտի լսէ՞ք շարունակութիւնը ,—
սինդեց իօսակիցս :

— Պարունակեցէ՛ք ,— պատասխա-
նեցի մեքհնարար , մինչ կը զգայի , որ
այլևս իրաւունք չունէի յիմարութեան
զիմելու՝ ո՛չ զուարճանալու եւ ոչ ալ ու-
րիշները զուարճացնելու համար :

— Օրեր ամբողջ աղաչեցի , պաղա-
տեցայ կնոջս , որ իր սիրոյն ապացոյցը
տար , թոյլ տալով , որ խեղդէի զինք :
Հնարեցի բազմաթիւ պատմութիւններ , ու-
րոնք , ըստ ծանօթութիւններու՝ կրնա-
յին դաշապուստի զէպքի մը վերածել ը-
նելիքս : Ձերցայ համոզել զինք , որ տ-
պահովարար ինքն ալ պատմութեան պի-
տի անցնէր , ինչպէս Տեղտէմոնան , որ ա-
պուշութենէ զատ ոչինչ ունէր իբրեւ ա-
ռաւելութիւն , բայց յաջողած էր անմա՛-
համբախտի տիրանալ :

— Բայց չէք խեղդած խեղճը : Այն-

պէս չէ՞ ,— միջամտեցի անհամբերու-
թեամբ , որովհետեւ մեր արգելարանին
դուռը կը բացուէր եւ ոտսիկան մը կ'ե-
լուէր մեր դէմ :

— Պարոն անանուն , հետեւեցէ՛ք ին-
ծի :

Օթիկուն լուած էր արդէն , եւ յուսա-
հատ նայուածքով մը՝ կարծես թէ կ'ա-
զաչէր ինծի սպասել վայրկեան մը , որ-
պէսդի ամբողջացնէր իր պատմութիւնը :

**

— Եթէ կարծեցիք , որ հոս պտնդով
է եւ կրնաք դիշերը անցընել , կը սխա-
լիք : Գացէ՛ք , հետացէ՛ք եւ ո՛ւր որ կ'ու-
ղէք՝ պառկեցէ՛ք : Բայց , ուշադրութիւն :
Նրկորդ անգամ , երբ ձեզ գտնեմ ան-
պատշաճ վիճակով , ուղղակի բանտ կը
դրկեմ ձեզ :

Երբ ոտսիկան մը զիս գէպի դուռ
կ'ոտաջնորդէր , հարցուցի ամէնէն քաղցր
չեղտովս .

— Արգելարանի մարդը իսկապէս
խեղդած է իր կիներ : Գինով է , յիմա՛ր ,
թէ ոճրագործ :

Ոտսիկանը զարմացաւ կարծես ձա-
նիս շեւտէն , որ պէտք եղածէն աւելի բը-
նականոն թուեցաւ իր ականջներուն :

— Կը կարծեն , որ դիւրին է ոճրա-
գործ դառնալ կամ յիմարանալ : Կը տես-
նէ՞ք , որ դժուար է մեր դործը :

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ա Կ Ա Ն Ն Ի Ի Թ

Կամայ աչքերուդ հայնացքը խորունկ
 ծիծեռնի գոյններուն երանգով
 կը բազմապատկէ ուրախութեանս երանգապնակը

Կոխարդանքդ մասններուս կու տայ շնորհքը
 եւ կտուրք դիմացս կը վերածուի երազիս այն պատկերին
 որ արձագանգն է ներաշխարհին

Աղբիկ ես դուն վերացական անշուտփնիկ երազ

Թիթեռնիկ ես կապուտաչեայ որ գոյութիւն չունի
 իրական աշխարհին մէջ
 երազներու մէջ կ'երեւի աչքերուս
 իբրեւ աղբիկ կանայ աչքերու հայնացքով
 մոզական եւ ուրախացնող թիթեռնիկ իբրեւ .

Զկաս գիտեմ
 սչ երազիս մէջ ոչ ալ իրական տուրեայիս մէջ
 բանաստեղծական նիւթ եւ միմիայն
 գրուելիք շշուկ
 գեղեցիկ հնչող կապուտաչեայ թիթեռնիկ

Հերման ու մաքուր կտաւին վրայ կը գրեմ անունդ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

Ս Ա Հ Ա Կ Դ Ա Ր Գ Ե Ի Ե Ա Ն

Գ.

Սահակ Պարզեւեան, իր սերունդին մէկ քանի կարեւոր դէմ-
քերուն հետ, մեր ցեղը յուզող ստալին փոթորիկներէն բռնաժար՝
քշուած էր օտար ափեր:

Պոլսէն, ահ կը տանէր պարթեւ մարմին մը, անհունարազձ աշ-
քեր ու ջղախին ահաւոր դրութիւն մը, որոնք ամէն արկածախնդիր
բաւ են յօրինելու, երբ անդամ մը դէպքերը մեզ հարկադրեն այդ
ուղղութիւնը: Մի մոռնաք, որ բոլոր զառաժանները սկսած են իրր
ճամբորդ հարթ պողոտաներու: Աւելին: — Քիչերու շնորհուած ար-
ւեստի զգայարանք, դուք ըսէք՝ դրական տաղանդ: Տարբերութիւնը՝
իր ու բնկերներուն: — Հիմնական: Ինք պիտի չխորհէր այդ տա-
ղանդին, արիւնը կանխող աստաշէկ օրերուն, երբ նոյն այդ Պոլիսը,
իր դուրսը մեր ժողովուրդին, առնուեր էր Երազին զճարտար գե-
ղեցկութիւնէն ու երիտասարդները վերածեր մէջ-մէկ հերոսներու,
զործողութեան գիծէն ու շատախօսութեան կրկէսէն: Քաղաքական
հասունութիւն: — Պօսքն իսկ չըլլար ասոր, երբ այսօրուան մեր
փորձառութիւնները թափենք մէջտեղ ու փորձենք դատել Պարզեւեա-
նին վրայէն չրջանին ընդհանուր մտայնութիւնը, — անտարազելի
միամտութիւն, զարձեալ միամտութիւն: Ինչպիսի գո՞րծ . այսինքն՝ Եւ-
րոպա: «Հետուէն» ազատելու համար մեր ցեղը: ... Անիկա օտա-
րութեան մէջ էր բացեր ստալին ընձիւղները իր տաղանդին: Ա՞տ էր
պատճառը, որ տարբերէր այնքան իր սերունդէն: Մինչ իր անմիջա-
պէս երկցները ասրինքով չկրցան իրենց տարագրութիւնը թօթա-
փել իրենց ուսերէն ու մայրաքաղաքէ մայրաքաղաք, շարունակեցին
Թափափել, ազգային պատրիարքարանի եւ պոլսական թերթերու հո-
տերով չըջապատ, անիկա շուտով ազատեց ինքզինքը իր չունեցած
անցեալէն, յիդափոխութեան մշուշներէն, ու խորաթափանց իր տա-
ղանդին զգայարանքովը ինքզինքը յարգարեց, լարեց նոր իր պայ-
մաններուն: Անիկա յանձնեց ինքզինքը իր մարմինին ստեղին ու...
իջաւ րայ ծով:

Դժբախտ էր ծնած:

Անիկա հոյակապ օրինակ մըն է դասական ու հին կը-
րօճքներու խորհուրդովը բիւրեղացած երկուութեան, ու չքեզ

փաստ մը՝ մարդկային այն ըմբռնումէն, մեր ժամանակներէն, որուն կենսայորդ, մուսյ միգամածը կը սաւառնի Տոթոնեւսկի վէպերուն վերեւ: Քոյ քոյի էին անոր մէջ, մեր ու թերեւս բոլոր ժողովուրդներուն զոյգ մարմնառութիւնները: Ան՝ — զոր ընթացիկ լեզուով կ'որակենք ազնիւ: Ու ա՛ն՝ — զոր նոյն այդ լեզուով կ'որակենք ցեխ: Այս դասական անջրպետումը, մակաղացումը հիմա դիւրին է ենթարկել տարակոյտի, հեզնութեան անգամ, բայց ասիկա չի նշանակեր լուծել դժբախտագոյն հարցը արդի խղճմտանքներուն: Ամէն հայ, իր տարագրութեան որջէն, անշուշտ քիչ-չատ ճշգրիտ դասաստան մը կը ճարէ, մեր Դատին արդի հանգամանքէն, իջնելու համար ազգերուն իսկ անջրպետումին: Ժողովուրդները իրար կոտորելու ատեն վեր են մեր խղճմտանքէն: Բայց ապրելու ատեն: Ընկերութիւն մը, տեւելու համար, զինքը յօրինող ցեխն ու ազնուութիւնը զիտէ ենթարկել իրարու, կամ անջատել իրարմէ, իւրաքանչիւրին համար սահմանելով տանթէական պարունակ մը, դժոխքէ, արքայութենէ: Անհատ մը կ'ընէ նոյնը մօտաւորապէս: Քիչ չեն մարդեր, որոնք երիտասարդութեան պարունակը կը մտնեն, մեղքին դէմ բոլոր դեզահասաններով կանխահոգեւած, առանց խորհելու իրենց հօրմէն բերածներուն կշիռին, քանի մը տարի կը պահեն դոց աչքերը իրենց շարաւանքին, ու յետոյ, բոլորովին հասուն, դեղնած՝ ինչպէս սլայթելու վրայ պալար մը, կը նետուին գլխիփայր, անոր հեղեղէն: Անոնք եթէ իրենց մեղքերուն քարերովը չքաշուին վար, դէպի յասակը, սիտի եօրոացուին, հանուին հաւանաբար այն եզերքները, ուր Արդարութեան (գլխադրեցէք, որպէսզի տնոր պաշտօնակալներուն, դատաւոր ըսուած արարածներուն մենագար ու իմար սպիտութիւնները, հիմնովին անարդար արդարութիւնը փրկուին) կատոյցները կը ծամածուն իրենց հաստ պատերը, երեսին ծակերով այնքան կծծօրէն լուսամտուած, դաժանատես, կախադանի խորհրդանի: մը բակին առաջ ամբարձիկ: Անոնք պիտի քաւեն իրենց յորձանքները: Ուրիշներ, որոնք նոյն այդ հեղեղին մէջէն պիտի քաւեն մուրճին, դրոհին տակը իրենց մեղքերուն, ծեծուին ու ծեծուին, ժայռէ ժայռ, սփէ սփ, խորաչափելով ալքերը երկրին դայռն ու ճճատանը անոր ընդերքին ու պիտի նետուին դուրս, ողորկ ու մաքուր, ինչպէս կը հանդիպինք այնքան անգամներ, հեղեղատներու մէջ երբ թափառինք: Սահակ Պարզեւեան բացատրութիւն մը չէ: Ան մտորն է, որ զոյգ այդ կերպերը միացուցած պտըտեցաւ: Անոր ալ ձեռքը կը թափէր ամէնէն կեղեցիկ զգացումները, սրտատուչ փափաքները անփերաչիւր բընականութեամբ մը: Ու անոր ձախը՝ ստիպուած էր արձանագրելու ամէնէն տխուր կորուստները: Դասական հեքիա՞թը: Այլ ուսին հրեշտակ, ձախին Բեհեղդերուդ: Արեւելեան կրօնքներէ այսքան յաջող խորհրդանշուած այս պատկերը կարելի է այս մէկուն ճակատագրող յարդարել: Ու եղաւ անիկա նոյն ատեն դեռն ու հրեշտակը: Անշուշտ, երբ խորացուի վերլուծումը, հեքիաթը կը ստանայ ահաւոր ընդարձակութիւն, պարփակելու չափ ամբողջ մարդկութիւնն անլամ: Բայց կենալով հարցի եզերքին, պարտաւոր ենք զոհանալ հաւասարակըւստութեան պարտանքով մը, որ կեանքը կարելի կ'ընէ այս անհեթեթ մեղքերու ու անշքազնիք մաքրութեանց կամ յիմարութեանց գուպարին իսկ ծոցը: Ո՞րն է մարդը, որուն մէջ օրը քանի մը հեղ ցըցուած չըլլայ ստանան: Սուրբ՞բը: Բայց մեծագոյն մեղաւորներն են անոնք, քանի որ այդ ճակատամարտը պարտաւոր են միայն մղելու,

անընդմէջ, զօ՛ւն թէ արթուն: Մեղքը անոնց դերագոյն իրականութիւնն է: Ձայն չգործելը աւելի խոր տառապանք մըն է յաճախ: Ձրկա՛յ անարատ մարդը: Ո՛վ ըսաւ ատիկա: Բայց ամէն ազնիւ մարդ թող ամբօրէն փաթթուի իր մշտնջին մէջը: Արեւի ճառագայթ մը — որքան բարակ բան է երբեմն նայուածքի թել մը — բաւ է՝ լուծելու մեծ մազաղաթները սրբութեան մատաններուն, վարչամակները առաքինութեան պատգամներուն եւ կը պարզէ աշխարհին որդն ու մըրուբը մեր ներակառոյց դամբարաններուն:

Սահակ Պարզեւեան աստուածարանական պարունակէն տարազելի տիպար մը չէ: Որպէսզի խոռուն բարոյախօսները անոր վերլուծումովը բացատրել ձգտին Ամենագէտին անհաս օրէնքները: Բայց նմոյշ մըն ալ չէ այնքան բացառիկ, ինչպէս ուզեց Հաւատաւ ու տարազել իր ժամանակը, անոր աստուածային տուրքերուն եւ տղամկուռ անկումներուն երաշտանկարին առջեւ սահմակած: Անիկա տըրտում մարդ մըն է, արուեստագէտ մը ու մեղաւոր մը, որուն աստղը կ'իյնայ դժբախտութեան կենդանակերպին մէջ: Հին Եփեսոսցի մը, միամիտ ու խոր ճշմարտութիւններ կ'ըսէ մեր կորսնցները կամ յաղթանակները բացատրող, մեկնելով ծնունդներու ամիսէն: Ինծի անծանօթ կը մնայ օրը Պարզեւեանի ծնունդին, բայց Հաւանաբար Յունիսին կամ Յուլիսին կրնայ ըլլալ անիկա, քանի որ Էփեսոսի տղայ ամիսները կ'ընդունի իբր խառնուրդի շրջաններ:

Ջրկանքի, անօթութեան, շուտութեան ու խնէշականքի արքունի մտպաւէն, որ ծրարն է անոր օրերուն: Գիտէ՞ք անցեալը: Ու գիտէ՞ք կնիքն այ անոր տաղանդին այդ անցեալին վրայ: Կանխագիր էջի մը մէջ անիկա կ'ողբայ Պսիտը, անկէ Հետամալուն կակիծին մէջ կարծեա ուզելով զգալի ընել դժոխքը, որուն կը հրաւիրուէր իր երիտասարդութիւնը: Մեր Հոգին, անկամ մը աղտո՞ դարաւոր իր պահպանակներէն, որ մեր տունն է, ժամը, թաղը, գեղը, կարճ՝ մեր ժողովուրդը, որ անուր գիւրութեամբ կ'ընդարշուի օտար, քայքայիչ Հոփերէն: Ու կը դառածի: Ուրիշներ, իր երէցները, կաղապարած Հոգի մը, շիւշառ ծալքի ինկած միտք մը կը սանձին օտար ոտաններուն ու անոնց քայքայիչ Հոփերուն: Պարզեւեան իր կեանքը առաւ բոլորովին օտարէն: Ու այդ կեանքէն՝ իր տաղանդը: Ուրիշներ գրեցին, իրենց շունչածին փոշին ցանկաւ Համար աշխարհի աչքին ու եղան իրենք իրենց անծանօթ կեղծաւորներ: Գրելու ջանքը Պարզեւեանին մէջ Հակառակն իսկ է այդ երեւոյթին: Անոր տաղանդը արտաքինացումն է անոր սպրումին, գաւերազրումը՝ անոր շիղկերուն: Այս է պատճառը զուցէ, որպէսզի առաջին ակնարկով թուի այնքան կեղծ, այնքան մանուածոր, պատկերելու Համար դառնահամ ծուառութիւնները իրեն պարտադրուած մեղքերուն, իրմէն ու դուրսէն, որոնց վրայ սակեւուռ շարքի մը պէս կը փռէ գիւթը իր ոճին: Բայց որ ըլլայ այնքան իրա՛ւ՝ երբ իյնայ թափանցող վերլուծումի: Սուտ այդ ոճին սակ ի՛նչ տխուր դառնութեամբ կը բարախեն ու կ'որները անոր կիրքերուն: Սուտ այդ ոճին մէջ ի՛նչ ծիրանի կը քալէ անոր մէջէն սիւնակը, երակը, յղի գոհարով ու գայտով: Բացառիկ, ժամայտ, տարօրինակ, զրեւու աղ ախտը, տեղահարումը, որ սեւային սփառմի կը նմանի այնքան մօտէն ու միտերու դարձի՛ւն է, բաւարու շկանիւնին ընդմէջէն:

Անուշա, վարկարագի բառ մը չէր գրագետի խառնըմանք բացատրութիւնը: Կայ անիկա, ինչպէս կան միւսներն ալ: Գերակէի՞րը՝ Պարզեւեանին մօտ: — Երբ դէմընդդէմ մենք իր կեանքին փորձանուտ հասորները ու գրականութեան ճշգրիտ գրքոյկները, մենք կը հակինք դէպի յուզումները անոր արկածներուն: Ապրած է անիկա այնքան տուտ, խոր ու հծծազին, որ քիչ բան է թողած թուղթերուն: Այս իսկ հանգամանքով անիկա կը մեռնանայ մեր դրողներուն ստուար փաղանչին մէջ, գրեթէ բացառաբար թուղթի համար ապրողներ ու ասոր համար ալ անհարգատ ստփիւմնուններ: Ուրիշ ժողովուրդներ, կողմնակի խուզարկումներով, սնցեայը շիշ—շատ սեւեռող, անլի դիմացնող միջոցներով կը յաջողին դրողի մը ապրումը, արիւնտ մաստախտակը վերակազմել առանց տուժումի: Են՞ որ մէջ: Ի՞նչ ալ ըլլան մեր դիտողութիւնները կամ գնահատական ուսուցիչ տարազները, մեր քննադատութիւնը անբաւարար է մարդ մը հանկու մեր թուղթերէն: Ու հիմա, որ չըկայ կեանքը Սահակ Պարզեւեանին, ստիպուած ենք գոհանալ միւսյութեամբը իր թուղթերուն: Ու սա կենդանադիրը լրացնելու աշխատանքը — այս մէջին գերազոյն զսպանակը — հարկադրուած, կ'աղդրէի անոնցմէ: Ըստ այս թուղթերու թաքուն ցուցմունքին, անոր մէջ տիրական են կեանքին, բայց անգուտ կեանքին ամէնազգի ձայներն ու մղումները: Հետաքրքրական է, որ իր պատմութեանը, զորս յաւանանք է ճարտարագետի իր ժամանակին ամէնէն տիրական արեւստի հանգանակներով, անանձն յեղումին հանդարտ կատուցումովը, ըլլան լեցուն, ո՛չ, կարելի միմիայն իր անձովը: Անկէ զատ ոչ մէկը պիտի տար այս կիւնը այդ ԻՊՂԻՍՎ: Ու սպասարարաւոր իր էջերը ուրիշ բան չեն, եթէ ոչ ինքնասփոռումը արիւնազանդ տրամի մը գիմաց: Անիկա ուրիշները պատմելու զիջած ատենն անգամ ինքզինքն է, որ կը գետնիէ ատաղին փլանի ու կը շարժէ իր մարդերը իր իր: Իր գրականութիւնը, այս իսկ խրամատէն, թանկագին նըստա է, ու պատմանաւոր՝ իր կեանքին կարեւոր իրադարձութիւններով, արիւնէն ու սեւեռէն, անթուրթիւնէն ու ստիպումէն հեղուած գոյի մը մէջ, եփումի, թրծումի, կիտուածումի տանելով ընդունին շնորհներ, որոնք մեր քոյրերն մէջ հում կու գան աշխարհ, ու պարտաւոր են անցնել փորձ(առ)ութեան հնոցէն, որպէսզի սաստափունն ու փայլին: Տաղանդին արեւոյցովը ոչ աւելի ոչ պակաս՝ իր սերունդին վաւերական վարպետներէն, կը զատուէր անոնցմէ զայրազնուած ապրումի ապշեցուցիչ ընդարձակութեամբ մը: Այս առատութիւնը, գմեղակ, ընդբարշոյ, խորտակող պատահարներու, անոր օրերէն ներս, մա՛նուանդ արագութիւնը, որով կ'ընդունէր, կ'իւրացնէր շրջապատին մէջ թեւող յոյզերն ու սարսուռները, ինչպէս նաև ուրուադրուող, ենթաթրթիո մտայնութիւնները զայն կը փլուզեն տփոյն մեղազրանքէն, որով վիրաւոր է մեր գրական ստեղծագործութիւնը վերջին դարուն: Անոր զարմանալի հոտառութիւնը՝ քերծէի մը դիմէն, իջնալու դէմքին ու բառերու թաւուտէն անդին, դանելու համար խղճմտանքին նեարդացանցիքը, զանոնք վարող հովերուն նկարագիրը ու հոգեկան մերձատպութեամբ (affinité)՝ այդ լարերուն ուղունքուած քիւրեղներուն կեղծիքն ու աղամանդը կ'ուելու իր անհասարելի ճարտարութիւնը, կը վերածեն անոր տողերը թանկալին փաստաթուղթերու ու անոր գէճքին կ'ապահովեն

առնուազն վաւերացական, յատկանշող արժէք: Մեղք, որ անփութութիւնը, իրազանցումը, շնականութիւնը ու անապարանքը միտ սեղաններուն ուշ մնալու, փնասած ըլլան հող ալ իրեն ու պակտեցուցած շատ բան տնոր սեւեռումներուն յետահայաց շահեկանութենէն: Անշուշտ որ աստէն լուսէր ինքզինքը պաշտպանելու օրերուն մեծ զիջումէն ու սեղանի գլուխ անցած աստեղ կերքին շղարչը չէր կրնար վանել աչքին սփիւռէն: Գրականութիւն չընելու հանդիսուոր իր յանձնառութենէն յետոյ, անիկա հակառութեան ներդաշնակ քառս, ոճի օտարքերուն փաստակցաւ ինքզինքը ու յիմարացաւ, ու պաշտութիւն ձգելու ճիգին հարկատու: Բայց ի հեծուկը իր մեծ մեղքերով ապագայ խոցոտուած արձակին, թանկագին է, կը կրկնեմ, ինչ որ կայն է իր գրիչէն, փտտիտարակ ու մազազաթեայ դիմութեամբ ու մանրանկար աղաներու օգնութիւն հեղուսումով, հոգեկան դժնդակ լիորձարկութեանց իր անդրադարձ: Կարգացէք, այս տողերէն ետքը, իր պատկերները: Անոնք կը բերեղանան իրենց այն մասերուն մէջ, որոնք զրոյցին անձնական հեղուսմը եղան: Ըսի մեղի, թէ ուրիշները տալու պատրուակին տակ, ան ինքզինքը զբաժն է, հեշտութեամբ և յոյզով, երբեմն այնքան անասն, որ մոռցած է արուեստը, թուղթն ու զրիչը կնշուցած պատմութի, պոթկալու համար ինքզինքը: Բայց չըսի, թէ այդ բեկորները, պատկերէ, տպուորութենէ ճիտական, միտպազող իրենց զորութեամբը, զաժան հարազատութեամբ մը, ամբողջ չըլնան մը, միտքի զրութիւն մը, սաւառնութի ու սողոսկութի մոզայիք արուեստ մը կը խորհրդանշեն ու կ'ըսեն չընանէն խոր ու վճռական բաներ:

Ինկած, կլած, նորէն ինկած, նորէն կանգուն, եղկելի ու փարթամ, ինչպէս նկարագրին էր ըլլալ իր օրերուն, ձգուած օտար հոփիւն, անիկա պիտի անցնէր մեղքի մեղք, ինչպէս վարդապետն էր ուրիշ: Բնագրաչելով իր կոնքերուն կապկպուած տնուքն իր ձանձրոյթին, շքեղ իր մարդաստեղութիւնը, անզգամութիւնը: Գիտէք կեննը, որոնք հիմնական նոթը տուին անոր զգայարաններուն: Ամէն զգայութիւն անոնց պարունակէն միայն մատուցի եղաւ անոր: Իր հացն ու արուեստը անիկա առաւ անոնց բազմապիսակ մարմիններէն, մեքենայ ու անտիրտ, ու ատոր համար ալ այնքան իշխանօրէն վարձատրուած, մեկուն սեւ կամ կապոյտ մելուն ընելով: այդքան կանուխ, իր աչքերը աշխարհին վրայ, աղբ, սերմ, թուք, ապակտեցութիւն միայն սեւեռելով իր շուրջը ու շխորհելով իր իսկ մատուցումին: Գիտէք կեններու Եցան զէմքերը: Անպա կէօրիկէօփան: Յորորդ Երամեանը, Տիկին Գուհարեանը: Անպաշտն ու պաշտօնական աղիճները: Գթացուած թշուառութիւնները, բանուար կամ աւելի խոնարհ: Որոնք իր կեանքին մեծ ընթացքին վրայ իրենց կիտաղէմքերը կ'ամբարտաւեն: Ու... Յորորդ Աննա Գուհարեանը:

Մարդիկ ըսին կարգ մը բաներ, որոնք թելադրուեցան զրազէտին համար ընթացիկ ընդհանրացումներէն: Ըսին՝ նախանձելով՝ այդ ծաղկափթիթ աշունին, որով կանչուորեցան զրազէտին վերջին տարիները, երբ անիկա ալ կոտորած էր զփառքին ամանները ու կոտորած վերջին աչքն ալ բախտին սանդուխէն: Ըսին այդ փափուքները, նախանձելով տեսնելուն՝ այդ վիրաւոր, անթի, քայքայուն ծերութեան շուրջ հրաշալի փթիթումը օրտատուչ աղջկան մը, որ զկեղեցկութեան իր խոռոչին կը միացնէր հազուադէպ պարզութիւն, ջերմութեամբ:

թիւն ու կը հասնէր անոր լքումին, առակին ոգիին նման, դնելով իր նայուածքին սիրտարար քաղցրութիւնը, իբր կենդանի սասան՝ ընդ- մէջ իրերուն ու դէպքերուն ցեխակոյտին, սանելով անոր կորանքը, բաւութեան նոխազի մը նման, աշխարհիկ լքութիւնէն, ու պատշա- պարել ջանալով անոր շիջումը աղոցէն ձանձրախտին, որ ողնուղեղին մէջը բոյժի գրուած սեւ ծաղիկի մը պէս, կ'անէր թունալից ու պզը- խող, դեռ պատանութեան օրերէն: Անիկա զուր տեղը չէր սիրած ժաշերին ու բորբոսին, սեղոյրին ու բոյրին վատաւուզ քերթողու- թիւնը Պօպլէրին: Մեծ մարդերու կուշտին, անոնց դանդաղ էջքը ի- բնոց անձին զուգը փրկել ջանացող մատաղ աղջիկներու այս դէմ- քերքը, պատմութեան էջերէն իր յուշին մէջ: Ի՞նչ փաստ, որ բարձե- բու աստիճանները ասրբեր տիրութիւններ արձանագրած ըլլան: Ազ- րագոյնութիւնը մի մտնաք, որ սէր է ի վերջոյ:

Մե՞ր: Սպառա՞ծ:

— Ով ի՞նչ գիտնար:

Իրողութիւն է, որ սա պատմութեան տարին, անիկա ինքզին- քը անկարող կը գլուր տպատելու թախիծի, այրող մեղամաղձոտու- թեան մը թանձր հովիտէն, որուն մէկ շրթունքը կը խոնարհէր դէպի աւելի սեւ գոտիթափ մը: Իրողութիւն էր միւս կողմէն, որ ամբողջ երեսուն տարի անիկա ճարար խողարկութեամբ մը դեկավարած էր այդ արտութիւնը, զայն գործածելով կիներու ջիղերուն համար իբր անփէյզ հաշիչ, որոնք անոր մարմինէն կը ծծէին այդ դառնահամ, ստեղծաւ ջէնը կեանքին ու անոր սիրականներուն դէմ: Հիմա՞: Այդ թախիծը կ'անէր նոր երանգ: Տուած էր վրայ՝ ազի հոտող իր հին նկարագիրը ու վանած իրմէ՞ պարտադիր պատմաճանաւածը, որ պատ- տարագուարը կ'ընէր անոր անձը զոհի մահիճներուն առջեւ: Ինչ որ դիտելի էր այս այլ-յուճէն, ասիկա հերքումն իսկ էր անոր ստա- ջին բազադրութեան, երկարող պատանութեան կապոյտը մինչեւ:

Ինչպէ՞ս, ո՞վ զգետներ էր զինքը:

Տարի՞ք, լքո՞ւմ՝ ներսէն ու դուրսէն:

Բայց անոր ընկերները, աւելի երէց, միշտ պատանէլի վրայ, կը գործէին աննահանջ, դիւցազնորէն, խորապէս գոհ, հաւատարիմ՝ աստաղանդ իրենց փառքին, ինչպէս կը խորանէր անիկա գրիչէն շրտմուտելու աղեկտուր յամառութիւնը անոնցմէ մէկ քանիներուն, իր արտաճանաչումովը՝ շատոնց պարպուած իրենց ծուծէն: Ըստ փոխանակ ասեղծելու, գիջանալ գիջելով: Ամէն զգացումի հանդէպ սխալագրի՝ անոր այս կրացումը տկար էր միայն նախանձին դէմ: Թերեւս անոր համար, որովհետեւ կը գերզնահատէր իր արժանիքնե- րը, նոյն հարուածով իր վիճակին ալ ողորդութիւնը գերանցեցնելով: Կը հեզնէր զանոնք պատահական ակնարկութիւններով ու կը հայհո- յէր անոնց առաջատաներուն, լարուած մեծ ճարտարութեամբ դէպի անքոյթ, պսակուոր արտակութիւնը յորելիանին, որ անոնց հեւ- քին, հենուքին, հացի սարսափին պիտի դնէր փառահեղ վախճան մը:

Իրողութիւն էր, որ անոր գրիչը կը դադրէր իր գկատաղութե- նէն՝ հեազհեաէ, յիշատակ մը, պիղծ անցնալ մը գատուելու լստի իր հակառակորդներէն: Օրիորդ նրամեան, շատոնց մեծ գրագիտուհի, վիպակի մը մէջ գծած էր անոր զգաւած՝ արուեստը, ու աւելի գէշ՝

անոր ժշտագրութեամբ հոգին, որ ծնած էր ծե՛ր, ատելութեամբ միայն
 դո՛սն անող ու փակ՝ ուրիշ ամէն յուզումի: Ուրիշներ գինքը կ'ընէին
 Կանդոյն, ուրանալով երբեք եղած ըլլալն իսկ: Ազգը, Գոլիս, ինչպէս
 նգիպտոս, մոռցաւ զինքը ամուլ շորութեամբ ու ստիպեց կործանած
 զազանը գոթին դիմելու իր այն թշնամիներուն, որոնք ամէնէն աւելի
 թիրախ էին եղած իր ուժգնութեան շանթերուն: Կազմակերպուեցան
 դաստիարակութիւններ, ներկայացումներ, որոնք անոր ատելութիւնը
 հրահրելու ծառայեցին ու սպաննեցին անոր վերջին կորովը:

Դաւանանուած իր իսկ տաղանդէն, ինչպէս էր արդէն իր կեն-
 ցազովը՝ «Նոյակապ» անհաստատութեամբը գրչի ու կոտի իր բոլոր
 ընկերներէն: Դուք գիտէք անոր տառապանքը ք խնդիր իրապաշտ
 խաղերու: Ձէք գիտէք անոր ինքնախարութիւնը, երբ պիտի իր բար-
 բառին ապաստանած՝ ոտմանթիք խաղի բեմադրեց, տոնուած մեր
 վերջին աղէպէն — խաղեր, ուր կը կրկնուէին Դուրեանի եւ Պէլի-
 թաշիանի միամիտ ու ճամբարակ պարագութիւնները, ու թակալին
 շատ թարձ, թրթուռն վերքի մը ցար կը շահագործուէր սպանցու-
 ցիչ միամտութեամբ մը՝ Կարգուեց կորզելու» հանդիսականներէն: Ու
 տխուրը հոն էր, որ ամբոխային այդ յուզումը անիկա բաւարար կը
 կարծէր արուեստին խղճմտութիւնը փոխարինելու: Դրամի, լլացը-
 նելու, «վարկի» համար «չեքրուած» այդ «յաղթանակները» անկա-
 րող եղան վերագործնելու իրեն զընդհիշատ թաած մուտաները: Անի-
 կա տարիներէ ի վեր իր տաղանդին արժանի ոչինչ էր գրած հրապա-
 րակ: Պատերազմի տեւողութեան, անոր գրիչը զիջէր էր ընկերանալ
 Կանխատեսող սոց ու յիմար վարժապետներու բաշխուանքներուն ու
 յաւանդարաններու գրականութեան, սյնքան տխուր, այնքան ճշդող,
 — գրամի փոխարէն առ ու ան սղան գրականութեան ասպետ մկըը-
 տելու այլապէս անլուր կնքահայրութեան: Դրամէ անյաղ իր տխուր
 ժակը արաւ գինքը, դուք գիտէք ասիկա, ճան Եվարձու հանելու»
 իր գրիչը, պատմական, տեղագրական, իրեն բոլորովին օտար նեւ-
 րութիւն խմբագրութիւնը՝ յանձն անելով մեր հրապարակին վրայ
 նոր անուններ անեցնելու: Իր գրիչը այսպէս ազականիէ, իր ոճը
 այսպէս վաճառելէ յետոյ, անիկա զործածեց իր միւս գէնքը՝ խօսքը,
 որ երիտասարդութեան տարիներուն, հասարակական հաստիքարեք
 Հոգմազացը եղաւ անոր անգործ, անաշխատ կենցաղին: Բեմեր, սը-
 բաններ, նոր տեղերու մէջ կազմակերպուած հանդիսութիւններ անոր
 վրիպանքը պահ մը փորձեցին հակակշռել: Իր ձայնը, ուժգին, շեթ,
 լատերու գիտութիւնը, Փրագին տաղանդը, այսինքն՝ զգե՛տալը, որ
 գնա կը գիտանայ հոգիին մահէն ետքը, սպաւորեցին: Բայց հիմնա-
 կան իր անբարեխղճութիւնը հոն ալ հալածեց զինքը: Տրամելու, սի-
 բիլու, ատելու, կրագելու արարքները — տուած կ'ըլլամ անոր կեն-
 ճին գերազոյն զբաղանքները — անոր ատեն ու կարելիութիւն չձե-
 ցին գրեթէ զարգանալու: Ու քաննէն-քաննրհինգ, մտքի բացութեան
 շրջանի մը իր մէջ ինկած դադարները շանցուց անիկա: Ձկար-
 դաց՝ ինքզինքը հանելուն: Ձկարդաց՝ ուրիշներու մեծութեան պատ-
 կերը իր գողիք, պղերգ ծուլութեան խնայած ըլլալու համար: Ու
 սպասած էր անիկա իր խօսքին սեռուդը: Գան այս մարդերը, գրեթէ
 մեն մտք խօսողներուն: Որոնք քանի մը հիմնական դադարներու
 վրայ քառորդ զար կը ճառախօսեն: Երբ մեն է շրջանակը, տեղափո-
 խութիւն մը պիտի նպաստէ, միշտ թարձ, նոր երեւալու արտաքին

պատրանքին: Մերիննին նման անձկուկ Հասարակութիւն մը երկու անգամ մտիկ շընեք նոյն բանը: Այնպէս որ՝ ստիպուեցաւ անիկա նոր երակներ շահագործել: Գուք գիտէք իր տարեցոյցները: Զանոնք նակը: Անիկա օրերով, շարաթներով կը պտըտէր քիչ-շատ գպրոց տեղաւորելու կերպէն աւելի ողբերգական էր հեղինակութեան եղա-տեսած ու Եգիպտոսի շուկային մէջ դիրքի մը տիրացած ամէն կար-գի մարդոց մօտ: կը թելազրէր անոնց յաշուածի մը զազափարը, որ շնափէր անոնց ասպարէզը, յանձն կ'անէր սրբազրութիւնը ու քա-նի մը ոսկիի ու լուսանկարի ծախքին փոխարէն, ձեւի, շնորհի կը գնէր այդ գանձաւորաց մտքի վիժուկը ու կը գետեղէր իր վերձակին ասկ: Պարզեւեան Մարման մէկ-երկու տարի զբաղեցուց գրագէտին քտակը՝ ինչպէս ապակեան փտտախրութիւնը: Մարդիկ զարմանալ ունէին, յիշիով անցեային անոր խոյանքները, խարազանումները, խարանումները, հրապարակի վաւերական տաղանդներուն դէմ, երբ կը տեսնէին հիմա անոր «ատտիկեան» ճաշակը, որ կը հանդուրձէր ձերբը, սկոնակները, մեծ ներողամտութեամբ ու կ'աճեցնէր մակա-րուծային անունները: կը տառապէ՞ր մեծատաղանդ արձակադիրը հիւանդութեամբ իր արձակին, աշտապարտումով իր տաղանդին: Ըտի արդէն, թէ տարինեղէ ի վեր անիկա երկու սիւնակ շունէր ստո-րագրած արժանի իր համբաւին, որոտուու Հաւատարմութեամբ մը հետեւող իր վերիվայրումներուն, թայց լզգեսնուելով աղտին ու պղծութեան ալիքներէն, օրոնք անոր մարմինը խարխուլ նաւակի մը նման պտրտուցին աշխարհէ աշխարհ:

Գաւանձուում՝ մա'նա:անդ՝ իր ճշգրտոյն տուրքէն, առնա-զեղ իր հմայքէն:

— Իրողութիւն էր, որ անիկա կը յաճախէր Եգիպտոսի մէջ շտապութեան հանդէսները, գէր ու զզուած անասունի մը անզգամ աշ-լուրութեամբ «Քմաւաճ», անփստահելի, «ախորժաթափ» անոր առ-նութիւնը, Ծերախաւառը ու ամբած, հետգնետէ կը հակէր դէպի տե-տողական վայելքներ, գուցէ հաւատարիմ մը անոր մէջ արուեստի հորազոյն դոյւարանքին, որ ձեւերու խոր յարոյց մըն էր անոր մօտ, կը շոյէր կիները, իրենց մերկութենէն անհուն պօզանքով աշ-քերը ըրած նետեր, կամ կը կեցնէր անոնց արձանաձեւ Հոյանու-թիւնը, նեղասեան նաւերու յարգարուն յարախաղաղութեանց մէջ ու կը հետեւէր անոնց ձեւահոլովոյթին:

Իրողութիւն էր, որ անիկա կը մեղադրէր «գաւամ» Տիկինը, Գոհարեանը, որ Եգիպտոսի մէջ, ներկի, խնամքի անխելք վատնու-մով, խաշեր էր շատ արազ, տուած վրայ՝ պայծառ ու ոզորկ իր հը-լապոյրը, ու հովը՝ որ տարիքին, թարմութեան գուն է մեր վրայ-ու կը հոտէր քրտինքեալի կծու, զգուազին ձանձրոյթ մը, «ժամ մը հոտուէն», ընելով շրջապարը հեղձուցիչ, սրտեղ ու վատախաղաղակ Գանի տարի է անիկա իր մահիճին մէջ լէր ընդունեք ալ քանցածը կիկը ու հաւու պէս, արեւին հետ կը մտնէր քուն, երբ արուն ըլլար, կամ կ'անէր գէմը անոր աղջկը ու կ'ընէր մտիկ անոր ընթերցումը, մինչև որ ծանրանային թարթիչները: Եթէ զնոտանկանք այս գար-շահու մթնոլորտին մէջ զուք բանաք տակաւին բերանները ուրիշ կիրքերու, կրծող ու աննահանջ, որոնք կը պոսան մեր վրայ մեր ազ-գատութիւնը՝ հոգիէն ու նիւթէն, մեր յուսախարութիւնները՝ կեան-

բէն, մեր ուժերէն, ուրիշներու անաշխատ յաջողանքը, որ կը նախնացընէ, մեր իսկ տուրքերու կրկնէն մեր պարտութեանը դիմաց ուրիշներուն յաղթանակը, երբ մեր աւելի թանկ տողանդը կ'արժեքորուի ու կ'ընդունուի, այն ատեն Հասկնայի կը դառնայ անյոտակ ողբերգութիւնը սա վրիպանքին: Անիկա յիմարական իր գիշութեանն ատեն զրեթէ ամէն օր ըրեր էր այս հաշուեկշիռը, բայց իրեն ընդունին փառութեան բերումով ընկրկած՝ Հակադեցութեան փոքր իսկ նիւթէն: Կը զայրանար, բայց ինչպէս գինեով մը, ու կը հաւաքէր Տիկինին պատրաստած գումարը, իջելու համար շուկայ ու ժամ մը տեսող մանրակրկիտ հաճելիտուգութեամբ մը իր ակուններուն տակ կը ծածկէր խորտիկին հետ անհուն իր թլուստութիւնը, մախանքն ու պարծանումը: Եւ այն ատեն բացառիկ էր անոր մէջ կակիճը աղբ քայքայումին գէժ: Ուրիշներու նման անամիտ, փառամոլ յիմար մը չէր ու զիտէր տարուցութիւնը իր տաղանդին: Չայն օգտագործելու համար, փորձեց զեղերու զրգռիչ ուժերը մորֆինէն ու Հաշիշէն: Իր մարմինը հետուներու ժահրէ մը պատրաստուած, տուժեց մեծ շտապով: Իր զոյրութեան հարցը կրկէս կը մտնէր այս արհեստական զրգռութիւններով տկարացած զգայարունքներուն վրայէն: Կիները կրկին անցան առաջին գիծի, բայց ընկրկումի, խուսափումի անդամ ման ազէտով: Վերութիւնն: Ինչ գիտնար հզոր մարմինով փարթամ դրողէտը: Մեռական զոյրութիւններու այս նուազումը անիկա միամիտ եղաւ վերադրելու «գորայուցիչներու» շարաշար գործածումին: Չկեցաւ աղբ գիտին վրայ ու տարաւ առաջ, իր «հանդուժ» բացարձակ պատճառարանութիւնները, օգտագործելու չափ բարոյական իր շփոթանդը լքումը: Միւս կողմէ՝ այլասերական, մանուսանդ ազգային մեծ յուզումներ կը հաստատէր իր մէջը: Իր ցեղին ողբերգութիւնը, Երեսուն տարուան իր հուլիսիթովը, կը յանգէր ամէնէն անփառունակ, անպատեհի պատրանքին: Ու այս պատճառքը իր, մեր յոյսերուն զայն ըրաւ խորապէս զգայուն: Անպատեհի սարսափներէն ազդուող իր հայրենասիրութիւնը զինք ըրաւ թատերադեր ալ: Գիտէք, որ բեմադրեց տաղանդէ գուրկ, բայց մտադրութեամբ հարուստ մէկ-երկու խաղ: «Միրելէն կը յոգնի՞նք» բնութանով իր մէկ բանախոսութեան մէջ անիկա իր ստանած սիրտէն ինչ բնականութեամբ հաներ էր Հրեղէն սիւնը հնգամատեանին, պաշտամունքի տարազը մեր գրականութեան, որով դիմացեր էր այդ ազդը դարբերու մաշումին: Այդ գերզգայութեան պահերուն անիկա ոչ ոքէ վար չէր իր սերունդէն:

Յիտունէն անց, աւելի քան մինակ, աւելի քան աղքատ, Պուշէն դարձէ մը ետքը, ուր կը բախէր զինքը ամէն աստղի տակ հալածող չկամութեան, անիկա կը մտար «չղթայուած» դիակին հետ կնոջ մը, զոր «ատած» էր գորտի ձագու մը նման: Զոր սիրած չէ՞ր երբեք, ինչպէս պոռայ օր մը երեսին:

Կա՞ւր. պեղձա՞ն կապր, որ զայն պահէր կեանքի ակօսին:
 — Օրիորդ Սոնա Գոհարեան:
 Սահակ Պարզեւեանի զգացումները՝ հանդէպ այս աղջկան:
 Կը հասնինք այս պատմութեան մութ ու թախտոտ մասին:

Դիւրին չէ, բարձրու պատկերացման մէջ ներքին արձակու-
 թեամբ մը մտնել ներս այս աշխարհէն, զոր ենթադրումը, սուտը,

Հաշիւներ, բաժրասանքի մեր սուր փափաքները ներկայացուցին իրենց ուզած գոյնին տակ: Իրականութեան բաժի՛նը: — Ամբոխները ո՛ւրքէ կը հարցնեն, երբ կը տարազեն իրենց ախորժակները: Ու անգութ է սուտը, յողնած չըլլալուն:

Պատերազմի տեսողութեան, Սահակ Պարզեւեան ունեցաւ տանելի կենցաղ: Ազգային Միութիւն, Կամաւորական Ետքում, աստեղաբաշտութիւն, Տիկին Գոհարեանի դուշարեղէնները Համեմատաբար մեղմ բրին անձկութեան այդ շրջանը անոր գլուխին: Կիներու հետ իր ճակատումը ուրիշ պատճառ մըն էր, որ մարդիկ շատ չամենայն անոր տունին մէջ կազմուող Օրիորդին խոսվիչ առեղծուածովը: Կա՛սպը: Անը՛ւշտ: Եզրպատոսի մէջ Հաճոյքը թանկ է՝ հնազիտական աստրականերու նման: Ու ամէն աղջիկ, որ կիտաշխարհիկ մայր մը միտայն ունի կոնտկին, վիճակահանութեան պարզեւ մըն է, ամէնէն շատ վճարողին: Ելան բախանք, ծխախոտի գործարաններու անօրէններէն, ապահովադրական հաստատութեանց վարիչներէն, որոնք գրուեցան ճամբու սկիզբները բիրտ, հեազհեաէ բարուբանքով: Միւս կողմէ՛ ուղքատութեան խոտանալը, ու կանխահաս ծերութիւնը կ'անէին, ասունց հարցնելու գրադէտին: Երբ մէկ կողմէն Տիկին Գոհարեանը բիշ-բիշ կ'ընկրկէր անոր դաշխարաններէն, Սոնա Գոհարեանը իր լրտմին կը հասնէր, իրբ դէժք ու իրբ հրապոյրը: Կա՛սպը: Մա՛նստանդ հիմա, կը հարցնէին ասիկա մարդիկ, հանգիտօրէն, երբ Գուհիբէի մէջ տեսան տրեւելաւայ անզուգական վիպասան-թատերադիրը, որ իր աղջիկը գրեթէ դրկած կը պտըտէր ու եպալաւում էր իր Ռիթան, Երբաւարտ Մարկիթը, իր իսկ Հոգիէն բխած թանկագին ծաղիկ: «Ենթադրութեամբ կեղծիքով թատերադիրը ցոյցի՞ էր հանած իր աղջիկը, թէ կը սիրէր զայն: Մարդոց լեզուն ամէնէն անարդ բանն է սխարհին, անըւշտ Եզրտոնէն շատ ետքն ալ:

Սահակ Պարզեւեանի զգացումները սկիզբ կ'անէին շատ հեռուներէն, խելայեղ յուզումի ու տենդի այն շրջանէն, երբ անիկա «Գլխուտա՛ծ» (ինչ քաղցր է սուտը զգացական կալուածէն) այդ աղջիկանը մօրմէն, կը ճառագայթէր, տիրակալ ու միահեծան, Ազնաւոր էֆենտի սրահներուն մէջ: Ամէն կերք, ուժգինը, անում մըն էր, այսինքն՝ բաղմապատկումը մեր տուրքերէն: Պոր է իմաստը ճանաչանութիւն հատիկին չափս հաւատքին: Ու զեղեցկացում մը. դուք զիտէք ասիկա: Այս անկիւնէն դիտուած՝ սիրահարը, ինքնին, կը յօրդի իր ճարտարապետութենէն ու կ'ըլլայ քառակուսուած գոյացութիւն մը, ներքին հեղումներով մշակուած, քաղցրացած, հաղորդական: Այդ է պատճառը դուցէ, որպէսզի սեռային պարունակէ մը ամէն պատահար օտարը յուզէ անպայման ու չպարտկուն խնթութիւնները: Ոճրադործը, այնքան հնարամիտ՝ ուրիշ կալուածի վրայ, ձախանք բան մը կը զառնայ կենդ մը ծոցին առջեւ: Օտար կին մը զինէ հանող երիտասարդը, անգիտակցաբար կը հանէ դիտէ նաեւ անոր աղջիկը: Գրէք ասիկին փաստն ու նպատը, որպէսզի հրապոյրը քայէ անխուսափելի իր արդիւնքին: Կարճ այն շրջանին, որ կը փակուէր փախուստով, ոչինչ անը՛ւշտ, որ ըլլար պարզ: Սոնան ասունէն վեր ու ասանըհինդէն վար: Այսինքն: Այո՛ւ: Երբ ատաղին բիրեղացումները կը սկսին պարմաններուն: Այո՛, երբ հասունները յետ դիտեր ինչ յարեթէ քաշուած, մանկանալ կը փորձեն ու կը դան-

յազին այդ ձեւերուն հոսումին առջեւ: Քառասունէ՛ն վեր: Ատիկա պիտի հասկնան անոնք, որ անցած են հրուանդանը: Անիկա, մեծատաղանդ արձակադիրը, եղելի պէս տկար էր խորհուրդին առջեւ այդ ոյարմանութեան, որ իրեն կը դարձնէր իր երիտասարդութիւնը, պատանութիւնը, երբ դպրոցական տղայ, աղքատիկ, բայց լուսնի պէս սղուոր, կը պտըտէր կամ կը խաղար Գատը-Դեղի Մասան, չըջուպատուած Սոնիկին պէս թարմ, թերիաշ ձեւերէ ու կը մնար Հիացիկ՝ տրտում, դաշուկ, սրտազրու ժայելչութեանը առջեւ թրքուհիներուն, իշխանազաւթ բայց տարօրէն քաղցր իրեն տարեկից կամ վեր, նայելու անգամ վախնալով՝ կարծր հայնացքին տակ սեւուհիներուն: Հիւսկուան քիչ մը ազօտ, բայց դեռ մատղաշութեան զովութենէն չհեռացած, այնքան անթերի կաղապարուժով այդ աղջիկը, արդէն սնցած տասնըհինգէն, զօտած էր իր իմաստը ինքը իր աչքին: Ու հոսո՛ւմը անոր, անկշտելի, բայց այնքան իրական, ու այնքան տարբեր՝ մամային ալ զբացիած» հովէն: Առա՛նց դիտակցութեան, թէ անոր պատրանքովը, մեծատաղանդ ապրողը ենթարկուած էր այդ գազդունեաներուն», այնքան ունիլի անպաշտպան ինքնիրմէ, որքան իրապէս պատեր էր պաւհովութիւնը, որ զանոնք կը մօտեցնէր իրարու տարիքին սանդուխէն: Զանոնք իրարմէ քաժնող այս անընդհատ տարիքին զուցէ առաջին մթնոլորտն է աղէտին: Սեռէ սեռ տարիքի ա՛մէն անդունդ պայմանաւոր է նոյն աղէտով: Ամէնէն անպաշտպան մա՛տը մեր Հոգիին: — Այդ նախազաւթ թը, որ մեզ կ'առաջնորդէ սեռին տաճարները, մեծակամար կառուցանիքու մէջերէն: Մի կենաք շատ, անգրադներ — ու դրադումը հասկցէք մարմնական աշխատանք — պզտիկներու մօտ, որոնք մ'առաջադ կ'են ամէն երեսէ ու պատարո՛ւն են բաներով, որոնցմէ ալ հեռու եղաք: Դիտեցէք ձեր պատանութիւնը ու տեսէք յասակ, թէ ինչ էր դորովը ձեր ոտքերուն, երբ սեւային զառթափին առաջին խորատրորաքերը կը նուանէիք: Ու յիշեցէք միւս օրէնքը, որ կ'ըսէ. «Սեւային յոյզը խոտոր կը Համեմատի տարիքին»: Հնուց խօսք է, թէ սիրտը կը մանկանայ, քանի ժամանակին մէջ յառաջանայ: Սեւայի՛ն մարդին վրայ: Հարցուցէք ծերերուն, թէ ինչո՞ւ կ'ամուսնանան աղջիկներու հետ, որոնց տարիքին շորս-հինգ անգամը ունին երբեմն, դիպուա՛ծ՝ իրենց զգայարանքունն:

Օրիորդ Սոնա Գոհարեան, գրողէտէն վերածուած փաղաքուչ «Սոնիկի»ն, որչափով կը շահադրգուէր արեւմտեան ոտանոցներու պատրանքաթափ «ժայելչախոյզը», ուսանողութիւններու ու աշխատող աղջիկներու հետօրհայ ասպետը: Բաներ կան, որ կը հարցունին, բայց չեն ամբողջացուիր պատասխանով: Երողութիւն էր, որ դպրոցական դօր, կնիքը վրան, իմաստին ու միսին զոյգ խոսովներովը դուռնաւոր, Սոնիկը խոր հանոյք էր անոր միտքին՝ ինչպէս աչքին: Ուրիշներէ՛ զովեստն ու հիացումը անտարբեր ընդունող մեծատաղանդ արձակադիրը մանուկի մօտ միամիտ վայելքով կը փնտռէր անոր տպաւորութիւնները, որոնք աւելի բան մը ունին, քան սովորական հրապրողը, յաճախ աւելի արտայայտիչ՝ վասնոր՞ փաստը կը բերեն դրական գործի մը թաքուն կողմերուն: Սահակ Պարպեւեան զայն խօսեցուցած ատենը կը հեռանար իր պեթերէն ու տրամական զանութեանէն: Տղան չի հասկնար մեր վիշտը: Միւս կողմէն՝ անպայման ունի զատուժ ու տարապ: Ամէն աղջիկ կարծիքներու հատընտիր փունջ մը

կը պտըտցնէ իր Բարսամին վրայ: Կը խորհի՞, թէ այդ կարծիքներուն տարազը կու գայ իրեն՝ անակնկալ զգայարանքէ մը: Ինչ ճարտարութեամբ, այդ տարիներուն, սեօը զիտէ շահագործել փոքրագոյն ծուկներն իսկ մեր շնորհներուն: Ճանրհիւղէն յետոյ ամէնէն զրկուելու արարածն իսկ կը գունաւորուի այդ սուրբ հեղուակէն: Ու սարուածին ճարտարապետութիւն մը կը հակէ, որպէսզի արուեստէն հիմնովին անմասն աղջիկներ ճարեն, ճարճարեն այդ զիծէ զգայնութիւն, երբ սեօային պատրանքը նման պէտք մը թելադրէ: Ի՞նչ աղամազէն իսկ շագատուած մօրթը Սոնիկին: Որ, հոծ, շարժուն, զհրախրակն ցոլցումներով կը տպաւորէր ձեռի ու փափկութեանց մեծ արդոնաւորդ Սահակ Պարգեւեանը:

Այժմէն ու հողիէն հասասարակէս բացուած, խոհուն բայց բնական մօտիկութեամբ մը, անիկա կը հելտանար, վաւարանէն ախորժող կատուի մը նազանքովը, գրագէտին ընտանութեանը մէջ, ժամերով զանդաղելով իր թերխաշ խօսակցութեան ուղիներէն: Կը թափանցէ՞ր իմաստին, ձգողութեան, որով կապուած գիտէր զայն իրենց արահին: Միքտերը պզտիկ եղած են երբեք, որպէսզի վարանինը նման հարցականի մը առջեւ: Անշուշտ ոչինչ կայ ստոյգ զգացումներու այն խորհրդաւոր արապէտքին մասին, որ պզտիկներուն տպաւորութիւններով կը հիւսուի անոնց հողիի մարմարներուն: Բայց մոռնալ չէ կարելի խուլ հրապոյրը, որ մանուկները կը նետէ դէպի մանուկները: Մեծուցէ՞ք ոչ թէ շարժումը — անիկա չի կրնար անել — այլ՝ զայն կշռող, ընկալող զգայարանքները: Ըսել կ'ուզեմ՝ արպաւորութիւնները զատուած վերածող գործիքը նետէ՞ք կրկէս: Աղջիկ մը ե՞րբ կը գատէ իր մայրը: Ու ե՞րբ՝ անոր սիրահարը կը տեսնէ իսկական տարազով: Պորունի ու ողբերգական էջեր ծնունդ են այս հարցումին ազդերու գրականութեան մէջ: Կ'անցնիմ: Անտանելի անոր հայրը — ոչինչ յստակ է տղու մը համար, զգացական աստիճանացոյցին առջեւ, որքան իր տունէն շախտող մարդու ձգողութիւնը գէպի գուրա, երբ ազատելու համար ինքզինքը, անիկա դրամով կը ջանայ շահիլ տղուն հաւանութիւնը, առնուազն լուծիւնը —, որ դրեթէ կ'ատէր զայն, իր աղջիկներուն տղիկութեանը պարունակէն, գրագէտին շուքովը, անկէ գտած նոյնիսկ կեղծ շահագրգռութեամբը, ջերմացու անոր սրտին: Պորթ հայրը խուլ աստիճանէն է տունին: Բայց դրագէտը զայն մօտեցուց անոր զգայարանքներուն ու ըրաւ քաղցր: Անդիմազրելի էր անիկա, երբ թղթախաղի բուրակին շուրջը, նեղսիրտ թափառող զրագէտը առնելով ձեռքէն տանէր զայն նամուր, մեղծ զպիւրով, կախուելով ուտերուն, որ նօտի: Ու մինչ իրազը կը շարունակուէր անոնց կոնակին, անիկա թեթեւ ժպտելով ու աւելի արժող նայուածքով մը կու տար մասնիկը ստեղծներուն, յուրջ, ազուր, զգայուն ու թրթոռուն կէս այն բանով, որ կաղճուսը աղջիկն է սրտէն, մոռցնելու շափ կիներուն փաթեամ հանգոյցը, որ կը երճոար գոհհիկ բարառը բախտին: Սահակ Պարգեւեան ատենց թուղթը, ով զիտէ ո՞ր նուաստութեան կնիքով, վասնզի կը յիշէր խաղցած ըլլալ: Ականջներէն խիտ զգայուն — գէր մարդու յանախաղէպ տկարութիւն — անիկա կը մնար տարուած խաղաղ ու հեշտանիւթ կիսազէմքէն ու անոր անձին շուրջ թուրացող փափուկ խաղերէն: Օ՛, անշամանգաղ, արձանային շնորհը աղջիկներուն, երբ զէմք շեն անոնք, այսինքն՝ երբ սեօին ու մանկութեան մէջտեղերը

կը թափափուն, քիչ մը բարակ, բայց խորախորհուրդ:

Բայց ոյզ զգրաւումը, ինչպէս կը հեզնէին խաղցող տիկիւնները, կ'ըլլար նշմարիտ իրերատուգում, երբ նուազէն յոգնած, գառնային օրուան փոքր հարցերուն: Սոնիկը ունէր, անպակաս՝ մանր, երբեմն բարդ, որոնք աւելի պզտիկներու բերանէն կը նեղեն, բայց դէպի ասանճհիւղ հրապուրիչ ևն յաճախ: Տղոցմէ եկած այս հետաքրքրութիւնները հանդուրժելու եղանակը մարդոց նկարագրէն կը պատմէ շատ բան: Իր պաւակն իսկ ուրոցող գրագէտը յիմա՛ր ըլլալու էր ականջ կախելու ստէն բաներու, որոնք լին ինձար շահի ստեղին, ու ձգելու փարթամ շրջանակը հասուն կիներուն, բոլոր սփիտնի ու թուրի մեծահարուստ վաճառականներէն: Անիկա չէր ուզեր լսել անոնց նայուածքները, մա՛նսաւնդ ձօրը յաճախակի կկոտցումը ու կը խօսէր, քաղցր հանոյթով, ընկողմուն ու կիտախուփ, Փարիզէն, արուեստի մեծ գործերէն, հոյակապ զգուհար շէնքերէն, աղջիկներէն, որոնք ուրիշ աշխարհի կը պատկանին, արդուպարզէն, ժամբիրներու մոյնքէն ու գիծերէն: Այդ մարդին վրայ, անիկա անդիմադրելի թովչութիւնն էր, անձնական, հակայ տարբերէն պատ, բառերուն հետ փոխուելու իր կախարդ կոտնելիութեամբը, դիւրութեամբը իր անցեալը հագնելու, անով պատմուհանուելու, իր անցեալը՝ հեղեղ վարդի ու կիներու, որ կ'անդրադառնար անոր ձայնին, արտայայտումին, շինելու զոգնուհարին, ինչպէս պերճանուանով: Անիկա կը մտնէր մա՛նսաւնդ նոյն անբիային այլուրութեան մէջ, երբ ստիպուէր պատմելու Պոլիսը, Գաւա-Գիզը, իր խորունկ ու դաւիկապէս հանճմանով, իրենց իշխանազն կաթնահար մարմինները, երբ կը շարունակ անունն ըզճաւորութեամբը իրենց փափաքներուն ու կը նային զգալիակար համբոյրիկն, նման բանաստեղծին սակեթիկն աթոռներու վրայ հանդիպուցած իրենց զմեղրամտէ անդրինները, հրուանդանին շրթուներուն, մինչ վարը, ջուրերուն խաղճուանը մէջ նուակ մը կը ճերմկի ու մէջէն սողայ մը կ'երազէ: Գրագէտը այդ տեսիլները կ'ողեկոչէր արտասովոր պայմանութեամբ, տալով զէճքերուն՝ այն բարախուն ու իրաւ բանը, որ աուրքն է անձնական ապրումին: Յայտնի էր, որ պատասնութեան տարիներու բիւրեղացումը մեծ դեր ունէր անոնց թելադրող, խոսիչը, զկաթիլը-թող իզուրեանը մէջ, երբ պատկերները մեկնէ կաքը մատղաշ աղջրնակը մտովի կը մտնէր անոնց պայատներէն ներս, արքեմի պարակներով, ուր վարդերը շին մեռնիք ու աղջիկները շին թոտիք ու նե՛րս՝ անոնց գրուններէն, զանելով, հմայքէն նուաղման ժօտ աղջիկին հոգիին, պերճութիւնները վանդակուած զարդախուցերուն, Արեւելիքին բոլոր հոտերովը հերկուած ու ոսկիովը նապաշուած: Որոնց կիտաստուերէն մէջ, սեւ սատանաներ, մերկամարմին ու օծուն, իրենց մարմնումները կը բանին անոնց միտերուն զալիակար մարմարին վրայ, բուսցնելու համար կտոր մը արիւն ու կտոր մը կրա՛կ: Անիկա չէր վարաներ այդ զէճքերուն թելադրանքը հչղելու համար, որինակ, վերցնել թղթախաղին բոլորակը կազմող կիներէն: ... Բաղցր, պճրուուն այս հարցաբանը նոյնութեամբ կաղապարուած է, գեռ այս նախաժողովի օրերէն, անջնջելի գիծերով, Պարզեւեանի զգայաբաններուն վրայ: Անիկա չէր եղած այդ պայատները, բայց եղողէ մը աւելի լաւ կը զգար զանոնք ու իր պատումը, անգամ մը առարկայուն յետոյ, կը դառնար ստուգութիւն: Ու անոնց անդրադա՛րճը՝ սպաւհար ունկնդրող աղջկան վրայ: Աւեւուած, նեարդներուն մէջ

ասեղնադործուած նկար է ասիկա, զոգնոցաւոր այս պարմանու-
թեան հեռանկեալ այդ սառնձը իր նայուածքին ներքեւ, կծկուն ու
հեւացող, շունչ առնելու անգամ վախճալով: Ամէնքս ալ ունինք, յու-
շերու մեր թանգարանին մէջ, այդ «մասունքներէն»: Մեր սիրածնե-
րուն ճակատադիրն է մարմնանալ զժուար, մարմնանալ ցանցաւ:
Մայր մը, երբ իր աղան փեսայ կ'ընէ, անոր թագն ու պսակը համ-
բուրած ասեղն, հոգիի աչքին առջեւ սենի՛ անոր ուրիշ պատկերնե-
րը, դիմաշիղուժները որանէն սկսած: Թերեւս ասիկա անոր համար,
վանդի տարրեր բաներ են ասորիւր ու այդ ասորիւր բեւեռելը: Մեր
սիրելիները շնք տեսներ, վանդի կ'ապրինք զանոնք, ամէն բոպէ
կրելով զանոնք մեր ջիղերուն վրայ: Անոնց շնք տուած ասեղն, որ-
պէտքի նետունն ետեւը ուղեկին, կազմաւորուելու համար իբր յուշ
ու բիւրեղ: Մեր շուրջը հարմուող կեանքն ալ կը միջամտէ, խախ-
տելու համար անուղութեան ու դադարով կարելի ալ թերեղացու-
մը: Անձանօթ դէմք մը, առաջին հանդիպումով, երբ ունի ուշադրաւ
կողմ մը կը սեւեռուի շատ յաճախ, ասանց ուրիշ նպատի: Շատ
սիրելի՛ն: — Հարցուցէք ձեր շուրջը, ու պատասխանները պիտի լու-
սաւորեն ձեզ: Տարիներ հաջն իսկ, պզտոր մշուշով արտակում այդ
անցեալէն Սահակ Պարզեւեան փնտելք պիտի զօգնոցաւոր սա տե-
սիլքը, երբ արտաութեան ու նողկանքի ալիքը զգար բարձրացած մին-
չեւ իր պուկը — կը պատահէր ասիկա, ցաւէն ու անօթութենէն,
յափրանքէն ու «լուծումէն» (անոր ուղեղը երբեմն կը լքէր զինքը
«լուծուելով» անասելի անզայտութեան մը մէջ, գայն ընելով սուտ)
վեր պահերու, թառամ Տիկիինն թշուառ, լուս, անկարող աղերսան-
քին հզերքէն — ու պատմելու համար ինքզինքը ճաթելէ կամ հա-
լելէ, պիտի դիմէր այս զուգնոցաւոր մասպատկերին, ամփոփ ու յըս-
տակ, մի՞նակ ու խորհրդաւոր, նայելով իր աղօթումին, հո՛ւմ նայ-
ւածքովը հասնելի փութացող աղջկան:

(Շար. 9)

Յ. ՕՇԱԿԱՆ

ՎԱՐԱԳՈՅՐԸ

Կը վառես լռյանքդ համարձակ
Աշխարհի խաւարոյին այս պահում,
Որ փութով կը դառնայ ակնքարք
Օրերու լուսնաշիթ այտերում...



Դէմքերու միանիւս ստուերէն
Մերկացած՝ կը ցոյսն առօրեան.
Ափերու խորշումս ծաղիկերէն՝
Անծանօթն ինձմէ ներս կ'արթննայ:

Ծուարած՝ աչքերու մէջ ահա,
Փամանակն անինչ կը փակէ
Տեսանողն իր գիւտին մէջ յաւէտ:

Ու չկայ փրկութեան այլ ճամբայ.
Օրերու լուսնամբ ծանրացած՝
Վարագոյր մը դանդաղ կ'իջնէ ցած...

ՅՆՈՐՔ

Անցեալին թեքումս դէմքով կիսամութ,
Ես կը շօշափեմ բառերդ ազօտ
Ու միջօրէի գգուանքն ափերուս՝
Ես քեզ կը պահեմ մինչեւ առաւօտ:

Ու կ'ամբողջացնեմ ես կիսումս դէմքով
Կրկններեւոյթը անցնող ժամերուն,
Ու գիւս հալածող փախուստիդ երգով
Կ'անուանակոչեմ մարդերն անանուն:

Ու կսկիծներուդ մայքերուն ծագած՝
Հեքիաթի ծառերն անգուսպ կը պատմեն,
Թէ ծով ծամերուդ մութով է ներկուած

Իմ մէջ տրոփող ստուերն անծանօթ,
Մինչ կուպերուս տակ գիշերդ փակած՝
Ես կը մահանամ մինչեւ առաւօտ:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՍՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՆ

ՄԵՌԵՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԱՐ ԻՐԱՒՈՒՆՔԸ

*Վազգէն Շուշանեաններն եւ իրուած զՄարտիկն ընդ իրենց
Հարկադրարք զուրա ձուած զբաժնիներու շարքին կը դանձ-
ւէին Նաեւ Հետազոյ էջերուն սրուած երկը կուրծիկը, որոնքն
տառլին երկուքը տանուած են Վարսակոցէն, իսկ երբորդը՝
Վնայիքի՛նք լոյս ընծայած ՎՅրագիրքէն:*

*ՎՄարտիկոցի մէջ, Գաշնակցութեան աճ օրերու կարգ մը զե-
կազմներուն զէ՛մ Վազգէն Շուշանեան ասորագրեց գանձ մը թուած
յաղուածներ, որոնց ողբով Հասուածական աճարկութիւններ կան
Նաեւ այս երկու գրութիւններուն մէջ, բայց ինչպէս պարզ կ'ե-
րեւ, առեւ առաջը զազափարակած ասորագրութիւնը չէ, գրու-
ած յանդիմանի՛նք է, Նաեւ զբաժնի ծառայելու ոճը, այլ երբեք
ասորքը գրուած մը պարզելու մզումը:*

*Յաջորդաբար պիտի տանք Շուշանեանի ամբողջ կենսագրականը
— եւ իր ձեռամբ կազմուած երկերուն յուշակը:*

ԿԱՐՄԻՐ՝ ու հրացայտ, յամուկն ազատութեամբ քափուած զաղջ
արեան նման, կարմիր՝ սեւ տարածութեանց եւ տարիներու մառա-
խուղիմ դէմ ալեծածան՝ մեր դրօշին պէս, կարմիր ու վայրագ՝ սր-
բազան ու նուիրական գայրայթի պէս, որ պէտք է շատաչէ քշնամիլին
անայի կողերուն վրայ, մեր աչքերը կարմիր պէտք է տեսնեն այժմ,
ինչպէս ջղուտ, սրբնաց ու գեղեցիկ այճերով ցուրը, որ կը խոյա-
նայ, պրկուած ամբողջ իր սեւ մարմնով՝ կարմիր պատաստիլն վրայ:

Կարմիր՝ բունձ մը, ափ մը արիւնքաքաւ հոգիմ պէս բանաս-
տեղծին, քրջած վաղածամ մեռած մանուկներու արեամբ, քրջած ու
գեղեցկօրէն տխուր՝ անուշ արտասուէնվը դստերց հայոց ու նրբիւրան
եւ սեւաչեայ ազգիկներուն, կարմիր՝ ինչպէս քրքում առուօտը Յո-
րածուց ու ցոզաքաքախ, իերանց ու սարերուն հայոց, մեր աչքերը
կարմիր պէտք է տեսնեն այժմ, որպէսզի խաղաղութեամբ շնչեն մե-
ռելները, ասու ու անդ, հայրենի կիրճերու եւ նժդեհն ու կիպիչ անու-
պատներու մէջ:

Եւ այժմ, ա՛յս է մեռելներուն արդար իրաւունքը մեր արեամ
վրայ, որ տարիներէ ի վեր ծուլութեամբ ու վատութեամբ կը հոսի
մեր սեւ երակներուն մէջ, մեր դեռ հիւանդ ու պատար արեամ վրայ,
որ չնանցու գուարք ու հանգարտ քաջութիւնը արի մարդոց, որ քամ-
ծրացու ազտեղի հեղուկի մը պէս՝ լալը շատաչեանք, փողոցայիլ
հեշտասիրութեամբ ու սրտում սնունդներով, մեր արեամ՝ որ կը կրէ
հեղց ու ստոր երկիւզով՝ մյուրը դարերու անարգ ստրկութեան...

Պէտք է այժմ մաքիլ մեր այլուրը:

Հայոց ազգ, որ կը կողկողա վաս լացովը ջրերուն վրայ հա-
կած ուռիներուն, որ կը դողդոջ ֆակտուսգրիդ անտի աւազուսնե-
լուն դիմաց, հայոց ազգ, ո՞ր է վաղեմի եւ ոսկեփրփուր, արշաք ու
մաքուր արիւնդ: Արիւնդ, որ կը խայտար՝ ինչպէս գոգքան գինի,
ինչպէս քարմ ու տաք ֆաղցու գաւակներուդ բոյր ու խտորէն քուլս
մարմիններուն մէջ, որ կը յորդէր ջերմ ու ուրախ ցայտնով, երբ
կ'երթայիք մարտի, ասիական հորդաններու եւ արեւմտեան չարախիւնդ
ու շահախնդի բանակներուն դէմ, որ կը ցայտէր լեռնախան ուղիւ-
նառա ու գորեզ քրի ճիզակներուն պէս այրաններուդ, ասպետներուդ
ու շինական մարտիկներուդ հողագոյն ու բերրի կեզերէմ. արիւնդ
այ ջերմ էր, մաքուր եւ արդար՝ մաքուրեամբ ու պտուղներուդ գի-
նիին, ո՞ր է այժմ:

Դարերու անարգ լուծը պղտորեց անոր գորեզ ու ջինջ ցայտը:
Իր տաք ու գուարթ ֆայութեան խառնուցաւ ասրկութեան քայնը:
Միմչեւ Պոստոս ու Կոպտոզովիւս, մինչեւ հեռու արեւմտեան Թրակիոյ՝
աստիճանաբար իր մէջ մղուցաւ մէկուն խենէշ ու լոփիշ խաւթիւնը
ու միւսին անարի վախը: Բիզանդիանի մէջ՝ պղտորեցիր քայն պալա-
տական հոսքիւններու, հանդիսատար եւ արժայական աղաշներու, հի-
ւանդ կայսրերու եւ պրնտոփներու ջրախանն ու ներմակ այնտեք,
դաշտային Կիլիկիոյ եւ Իլլիւնոյ անբերրի տաքերուն վրայ, ուր ֆա-
ղաքները կը նմանէին մահմեդական գերեզմաններու՝ անոր խառնը-
ւցաւ պղտոր ու աղտոտ ծուլութիւնը իսլամ խուժանին, որ միայն ու-
նայ գիտէր կիներու սպիտակ մարմիններուն շուրջ եւ իր մարմինը
պարարտացնել չարաշ ազգաց արեանք:

Հայոց ազգ, ո՞ր է այժմ վաղեմի գաւակներուդ արեան ֆաղցը
ու տաք ուժը Ատրայատականի եւ Պարսկաստանի պարտէզներուն մէջ,
ուր կը հուսէր գիւնով հեշտութեամբ Հաֆրոփի եւ Խայրամի ֆաղցորէն
յուսուֆուդ ու տրտմորէն պատրաճաքափ երգը, ինչպէս գինին՝ որ
տարիներու ընթացքին կը քափանցէ արեւեցնող ջրային դրութեան եւ
հոգւոյն մէջ. ուժաքափ ընելով արի մարդը ու գայն վերածելով յա-
րախափոխ էգի. ֆու արիւնդ այ դանդաղութեամբ ու չէզոքութեամբ
կրեց Արեւելիի անայայլ, յօրանչուդ ու գէշ քայնը: Ձայնիդ մէջ, իբ
երկարածից ու ծոյլ լացով երգեց պարսիկ ապանբաժ յեզուն, շար-
ժումներուդ մէջ նստաւ ծանրաշարժ եւ յարստեանականութիւնը անփա-
ռուսիկ կերպով հեզնող սօք միջօրէն ու նայումաճիւղ սազուր ու սեւ
շողը՝ վերածուցաւ ազօտ ու անբոշ ակնարկի, Հայոց ազգ իմ...

Այժմ հարկ է մաքրել արիւնդ ու ասիկա մեռելներուն արդար
իրաւունքն է ձգչերան վրայ: Ու այժմ հարկ է վերադարձնել քնդի
ճաւ սկզբնական ու յանդժօրէն ստոյգ ջերմութիւնդ: Փեփ պէտք է
նուկրել կրկին՝ ֆու առաջին ու ֆաղցը շնորհդ, հայու արիւն, արդար՝
գինի:

Դո՛ւն՝ որ վեհափառ ու տէրումական գնացնով մը կը կարկա-
չէր, ի խնդիր բարձունքներու յափտեանական ու անյեղիմ գեղեցկու-
թեան, ի խորոց սրտի եւ Հայոց պատմութեան դարաւոր խարէն՝ մեծ
նարեկացիին ջինջ երակներուն մէջ, դո՛ւն՝ որ կ'երգէր անգուգա-
կան ու եզակի ջերմութեամբ Հայոց սպարապետներու, ֆաջերու,
քոչելիներու եւ գորակամներու սրտին մէջ, դո՛ւն՝ որ ֆեֆու ու մեղմ

ձայնով մը սահեցար-գացիր, մնջեցիր ու կորսուեցար փուչակի անուշ տաղերուն մէջ, հայտնաբերուեցին...

Ո՞ր ես այժմ, ո՞ր ես...

Ո՞ր տիղմիմ, ո՞ր անգուստիմ, ո՞ր աղտոյի մտաբերում մէջ խրեցար՝ արժանաբար իմ:

Գո՞ւմ՝ որ վրեժեցիր, առողջ ու քաջ ազնուկով մը, մայնիսկ Մեծ Հայոց անկումէն յետոյ կրիկկոյ զարուսանդներում վրայ, Ռուսիանեց երկաթէ երակներուն մէջ կամ Սիւնեաց աշխարհի արի մարտոց սրունքներն ի վար, դո՞ւմ՝ որ լիովին կ'երգէիր, վստմ բաժանուեցաւ իմ ու հայրենի գորով հորինացիքի աներկրորդ մատնանքի մէջ, դո՞ւմ՝ որ հասեցար, սրբազան շաշուրեանքով, ինչպէս Յուդիսկան կը պատկերէ մեծ եղիշէն, Աւարայրի դաշտին մէջ, Հայոց արիւն, որ իմաստութիւն էր ու գիտութիւն Ս. Մեսրոպի ճեպարան վրայ ու առաջին վանկ բարձրանին Հայոց, ո՞ր է կրգոյ այժմ...

Կարի արիւնքով վրայ եւ հիւսիսի արձակ դաշտերուն մէջ, էու ապօրէն գաւառներդ քեզ ծախաւ հանեցիմ քանի մը տարանմաններու եւ հարստութեանց հարաւ, որ առաջին յեղափոխական արիւնքն առջեւ ընդվայր փլաւ: Ո՞ր էիր դուն, կարելի՞ էր միտք գգալ քեզ Տփլիսի փողոցներուն մէջ, ուր խառնուած էիր հրէից, վրաց եւ ուրիշներու արեւմտ:

Ա՛գգ իմ վտարանդի, տրտա՛ւտ ազգ իմ, էու յեղափոխական գեղավարներուդ արեւուն մէջ իսկ, թոյլ տուիր, որ սպառի օտարտուի ու սպառար կշռոյթը տարբեր արեւանց: Հիւսիսի երազակամ յալուրեան ու հիւսանդ գգայականութեան հետ, խառնուեցաւ անոնց արեւն քաղ-քեհի կենցաղի, ծոյլ հեշտասիրութեան, անարգ մեղաւորութեան ու փոքրագի բազմութեան վատթար այտոր: Հիւսիսն ու Հարաւը մտան անարգի մանուկներուդ մարմնին մէջ եւ օտար էգերու տարաձանց կայծը խեղդեց Հայոց քաղցրահունչ լեզուին անուշ երգը գաւառներուդ կոկորդին մէջ, ա՛գգ իմ Հայոց:

Այժմ հարկ է մաքրել քեզ, Հայոց արիւն, այժմ հարկ է վերադարձնել քեզ մեծեցներուն արդար իրաւունքը: Կրկին պէտք է որ հնչես էու հարազատ տրտիւնովդ մեր հումքերուն վրայ ու բազկերակներուն մէջ մեր մանուկներուն՝ պէ՛տք է որ երգես էու կամբողջ-կէց գետներուն ազնուկով, պէ՛տք է որ դրօշեա արագավազ երկվարներու սմբակներուն կայծով, պէ՛տք է որ դաշն ձայնով եղանակես՝ ինչպէս կայսերը հայոց, առաւտեան, ազրիւրներուն առջեւ ու հնչես, խայտաւ, գուարթանաւ, երգես ու տեսես յաւերժօրէն, քա՛ղցր արիւնդ իմ, գոգթա՛ն գինի:

Ուրեմն արթնցիր այլեւս, երացայտ ու քաղցրակայսակ, արեւնքն ցայտէ վրիժառու եւ գուարթ եղաբարութեանք, որպէսզի վազը քափիս հայրենի անդերուն վրայ, ճոռգես էու արդար ջերմութեանք մեր հողն ու սրտերը բերրի: Որպէսզի շաշուրեանք հեղաւս էու սրբաբազան ոգիդ հայոց ակօսներուն մէջ, մինչեւ որ ազատութեան մղը-րիկը իրէ ու սանի մեզ մտնուան ու մեր յաւիտենական համգիտուն:

Վ. Շ.

« ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏՂԵՐՔ , Ը

«Ու թերեւս ճամբուս վրայ ինն մտեկները
ոտքի ելին...»:

ԻՐԵՆՑ ԱՎՆԱՐԿԸ

Գիշերուամ Կէս սեւ ու սգմաւ գեղեցկութեամբ, որ կը ծածկէ գրկանքն ու սուգը, մաայլ քիչ մը եւ քիչ մը խորունկ, իրենց անձրեւային ու մառախլապատ ակնարկներուն մէջ, դժուար է ստուգորէն քրոշել, թէ ո՛ր կը սկսի ցեղին ամենբնիկ եւ ժառանգական վիշտն ու իրենց ընթացիկ կեանքին բնական տխրութիւնը:

Եժդեհ ու սարսեղան, քաղաքներու լայնքուն ստակ, վազարցին մէջ եւ այլուր, ուրախութեան սեղանին շուրջ թէ սոճակատարութեանց տեղաւոր մթնոլորտին մէջ, երբ բոլոր մը յուզմանով կանգ առնեն ճայելու համար իրենց խոշոր ու սեւ աչքերուն, չես գիտեր, թէ ինչո՞ւ համար այդ ակնարկները կը հասին քիչ մը տղտոր ու քիչ մը դաժան ջրերու պէս:

Թերեւս էին ու վիրաւոր մեռելներն են, ինչպէս կ'ըսէ աշուհերթողը, որ ոգեւորութեամբ եւ տառապանքի ջերմ օրերուն, փրենց դժուար ճամբուն վրայ կ'արթննան երկարատեւ բռնէ մը ու կը ճային աղապատանք հայցող ու ցաւէ թրջուած մեռելի հայեացքով կը քօքուեն իրենց ոսկրեայ ուսերէն մտազուրբեան եզիւմը եւ ցաւն ու արտասուանքն կը հայցեն յիշատակի իրենց անժխտի իրաւունքը, — ճաշիկ եւ սնունդ վազախորշաւ մեռելներու: Թերեւս հեռուար ու կորուսեալ մրմունջը եւ խարտիչազեղ կամ քիտազանգուր մանկուհիներու, որոնց աչքերուն մէջ մահուան պահուն սուրի շեղը մը կամ արիւնոտ մահակի մը ստուերը ցոլաց: Թերեւս ճանի դարաւոր ու խորունկ տխրութիւնն է հայոց բարձրաւորակից, իր կատարու ու բարձրութեան գետերուն, լերան կողերուն մէջ, խորանկը՝ գտնուած ու գորաւոր լինելուն եւ մրիկին, որ կը գոռայ քանդակներու գիւղերու խարխուլ տուններուն շուրջ:

Թերեւս անձնաւորաց ու կտրին գիմարներու եւ հերոս սոգոց անակնկալ յիշատակն է, որ կը պատրէ իրենց աչքերուն մտքի եւ քաղցր հայ խաղաղութիւնը: Հին երգի մը մնացորդը, որ կը փշրուէր հայրենի ծառի մը շուրջ կամ ջրի մը յատակի քարին վրայ: Գուցէ դաշտանկարի բեկոր մըն է, նարմահիւզ ծառ մը, որ հարսանկանն ու ծաղկափրփուր բազուկները կը բանար, գրկելու համար վարդազեղ առուտը, գուցէ համբուրելի մօր մը լայնակի կտոր մըն է, որ կը վարսգուրէ պայծառութիւնը իրենց հայեացքներուն:

Ու քիչ մը խորունկ ու քիչ մը մաայլ են միշտ այդ հայեացքները:

լը, հաս՝ արեւմտեան կապոյտ ու ծփում ծովերում դիմաց, սայաջատակներու ռսկեշտայլ եւ յարգագեղ յայտերուն տակ, քրջելով, լուսնալով քիչ մը զուցէ՝ կապուտայնուի եւ սլացիկ օտար աղջիկներու ինճուշ նայաւածքներէն, քայց յանցապարտ ու տրտում վերադառնալով հայոց դանդաղ ու տխրադէմ կիներու սեւ աչքերուն:

Ո՛վ չի գիտեր այս սպոց տրտում ու խուլ հայեացքներում գեղի ցկատքիւնը, երբեք չի կրնար սիրել հայոց ազգը: Թրջած՝ պէտք է սեռանի զանոնք, երբ կը թաւալի սրահիմ մէջ վշտահար երգի մը՝ «Մեր Հայրենիք»ին ցաւաբեկ եղանակը: Տախ ու տխուր նայն ասեմ՝ պէտք է զգալ այդ աչքերուն առաջ բոցը, երբ կը բաճառեն իրենց յոյսն ու գայրոյթը, երբ իրենց անյարգելի ու անբնականի հաւատքը կը գարթու ու կ'ասպատակէ ապին-անդին: Վայրագ՝ հոգի է կրել վիշտը իրենց հագուցն, երբ մէկը կը խօսի մեր ցեղիմ դարաւոր սարդանիքն ու անօրինակ նուաստութեան մասին:

Ո՛վ է, որ կը նայի ինձ, առաւօտեան այս ժամուն խախտելով հոգիս իր արմատէն, պղտորելով յուզումներուս անօրը: Այդ դո՛ւն ես, երիտասարդ ընկեր, որուն աչքերուն մէջ կը զգամ ստոյգ ներկայութիւնը մեր դարաւոր ժողովուրդին, որուն անկարելի գոռ ու տրտում երգ մըն է, միշտ վտակի մը պէս երգեցիկ ու քաղցաւաչ, մերթ-հերթապէս հրաւէրի մը պէս պատերազմական, մերթ-վշտով թաթաւան, քայց միշտ հպարտութեամբ խոյացող: Ո՛վ է, որ կը նայի ինձ, երբ սխուր է երկիրը ու գէշ: Օրը, որ կը ծագի, այդ դուն ես, կըրտսեր կամ երէց ընկեր ու քու աչքերուդ մէջ ամբողջ հայոց արիւննաներկ երկիրն է, որ վշտով կը սահի ու կը տնէ: Կը մթնէ կամ կը լուսաւորուի:

Ո՛վ կրնայ պնդել, որ չկան պահեր, երբ քու աչքերուդ մէջ կարելի է ստուգութեամբ զգալ հայոց ողբերգական պատմութիւնը: Ո՛վ լիսի ու անապայ յանդգնութիւնը ունի դուրս հանելու իր ազատութիւնը, կրնայ ծաղրել գիտ, բայց ես պիտի պնդեմ, որ բազմաթիւ անգամներ պատահած է, տրտութեան, ոգեւորութեան եւ յուզումի պահերուն, վասպուրականցի ընկերներու աչքերուն մէջ որոնեմ մեծ ու քաղցրաբարտա նարեկացիին ակնարկին խած գեղեցկութիւնը: Գիտե՞մ միթէ, տեսե՞ծ եմ միթէ վաճայ ծովուն կապոյտ ու ծփում ու գիշերային տրտումութիւնը, աղջամղջային պահերու, քայց երբ վանեցի ընկեր մը կ'արտասուէր օր մը, իր կապոյտ աչքերուն վրայ արգելով այրած թարթիչներուն շուէր, կարծես թէ հեռուէն տեսայ հինաւորց ու ծաւի լինը, ուր անշուշտ դարերու մշուշիմ մէջ լուզած եմ հայոց աղջիկները:

Ո՛վ տրտում ու քիչ մը խորունկ, ո՛վ սեւ ու քիչ մը մուսլ ու քիչ մը վիրաւոր ակնարկը դաշնակցական տղու, ինչքան ալ գարնաւալի թուի ասիկա, ես քու տխրօրէն հասող ջուրերուդ մէջ է, որ կը զգամ առաւելագոյն հայրենիքը: Այսօր, երբ գէշ են, երբ մեր երկկանաւորներուն մէջ ծուարած ուրիշ խուլ ցաւերուն վրայ, աւելցաւ նաեւ ուրիշ մը, այն է՝ զգալ, որ տարագրու ու նիպատական ընկերներ կ'ուզեն մեզմէ խլել նոյնիսկ ինք սիրելու իրաւունքը, երբ առանց ստոր գիտութեան ու վարձկան ստրկութեան ինքն հետ վիշտը բաժնելու երպարութիւնը մարդիկ կը փորձեն մերժել մեզի, կրկին քու ալիքն-

րուդ մէջը չէ՞ միթէ, որ կը խնդրենք մեր բարձրացող վիշտը :

Ահա՛ կը հասիս վրաս, ահա՛ կ'ողողես զիս, ահա՛ կ'ոռագես հագիս
հագքը : Ահա՛ գեղարեւոյն ու աղօտը հասակներ, որ կ'աշտամակաւին
հու մթաւքեանդ մէջ, ահա՛ առիծի գեղեցիկ գլուխներ, որ պատկա-
նած են հերոսներու, զինուորներու եւ շարժաշ շինական ընկերներու,
որ կը ցոլան կիսալուսին մէջ : Տեսա՞ծ եմ միթէ, ո՛վ Սերաստացի
հաջող Մուրաս, հու քիչ մը գածան ու քիչ մը սեւ, այլ կարին ու խի-
զախ սղամարդու երկաթէ գլուխը : Կ'ըսեն, թէ արեանդ մէջ վտա-
րանդի ու յանրժ աստանդական զնչուի արեան կարիկներ կային : Ե-
թէ իրաւ է, ստիկա տարածութեան ու կիզիչ սափսաւաններու արիւն
է, ստիկա մըրկածուփ, արկածներու վայրի ծարան է, ստիկա ար-
ձակագին ու սքընքաց երկվարներու ակնարկին բոցն է՝ որ ես յուզու-
քով տեսած եմ սերաստացի ընկերներու հայեացքին մէջ :

Այս առաւօտ արիւնս կ'եփի, կը թնդայ, կ'ուրալիսնայ ու կը
խնդայ, հու չերմաւքեանքդ, ո՛վ ընկերներու չերմ հայեացք : Քիչ մը
յետոյ պիտի գգամ կրկին հու կրակդ մակտիս վրայ, հու ջրերուդ մէջ
պիտի լուսն ամիսներէ ի վեր թանջ ու վիրաւոր հոգիս ու հու մշու-
շիդ մէջ պիտի ծփան հայրենի դաշտանկարներու կտորներ : Եթէ եր-
սիս բարձրանամ, պիտի տեսնեմ Գեղամայ լեռներու ձիւնն ու սափ-
տակ ցարասկները, որ կը դազան ձմեռը մերկ ու հասակագեղ, եթէ
հարաւ իջնեմ, Կիւրմուսի քառավոյց ջրերուն վրայ պիտի տեսնեմ Ռու-
բինանց թուխ դէմքեր, այրած հարաւի արեւէն : Թարթիչներուդ
տակ՝ որքան անձիւր ու անկր է հարիզներ, անյիշատակ անցեալը ու
յոյի սայագան :

Յուր՝ ու բացուէ՛ ուրեմն, ու դեռ դարերով պահէ՛ ջրերուդ մէջ
ամբողջ գեղեցկութիւնը հայրենի դէմքերու եւ թող վազը, ուրիշներ
իւս, գգան հռն արու փայտակաւմը Անդրանիկի աչքերուն, ուր վագ-
րին յիշերիմ վրէժխնդութեան հետ իր սահմանները կը վիճէր Գայլ
Վահանի խրոխտ յանդգնութիւնը : Պահէ՛ նոյն սիրով Վարուժանի քիչ
մը հազարորէն շի, այլ արարչական ակնարկին կամացի եւ հեթանոս
շնորհը, Ռուբէն Սեւակի թուխ դէմքին յղկուած ու գիտան գեղեց-
կութիւնը : Պահէ՛ Քեռիի հայրական, այլ հանդարտ հաջութեամբ ու-
ռօզուած ակնարկին չերմ անդարութիւնն ու հայոց մտաւարտի ազ-
գիկներու, մանուկներու, կոյսերու, վիրաւոր ինկած զինուորներու
իւ հաջերու աչքերուն ազնիւ հարագատութիւնը :

Գիշերուան պէս սեւ ու տղմաւ գեղեցկութեամբ, որ կը ծած-
կէ գրկանքն ու սուզը, մաայլ քիչ մը ու քիչ մը խորունկ, ո՛վ հազար
ակնարկը ընկեր տղու, հրաշքին ու դիւքանքին կտոր մը բիրեղը Ե-
զիբ, ուր յաւիտենապէս պիտի ցուայ տառելագոյն հայրենիքը, իր
կործանած եկեղեցիներով, գրաւապատ հերոսներով, ուռնիներով ու
սււրակներով,

Ընկեր տղու հայեացքը :

ՎԱՋԳԷՆ ՇՈՒՇԱՆԻԱՆ

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

4 Փետրուար 1941

Ի՞նչ անբանածուելի գորովով է, որ շրթներս կ'արտասանեն հետեւեալ երկու բառերը, — Մեր երկիրը:

Մտածե՛լ, որ շուրջս քան տարիներէ ի վեր, անբնդ-հաս, մեր ժողովուրդին ընդերքերէն նոր մանուկներ կ'ելլեն: Մտածե՛լ, որ այդ մանուկները ամէն օր կը մեծնան մեր լեզուին քաղցր բառերը իրենց շրջապատներում վրայ, մեր լեռներում շուրջի շուրջ: Ի՞նչ փոյթ, թէ անո՞՞ք երբեք պիտի չգիտնան՝ այն դաժան պայմանները, որոնց մէջ կը քանամք աշխատիլ քան տարիներէ ի վեր: Ի՞նչ, թէ անո՞՞ք կրնան մեզ *ԸՎԼՈՆՔԷՆ* կոչել, եթէ վերջապէս յաջողիմք վերադառնալ: Մենք, որ վարժուած ենք տառապելու՝ կրնանք գուցէ ընդունիլ այդ յաւելածական տառապանքը եւս, — մենք, որ ուրիշ փառաբերութիւն չենք ունեցած բացի առանկագոյն հայեր ու յեղափոխականներ ըլլալ: Ի՞նչ փոյթ մեր հաւանական օտարութիւնը՝ մեր երկրին մէջ իսկ: Միայն թէ այդ մանուկները կարենային շքեղօրէն մեծնալ, շնչելով մեր մեծ լեռներում գուարթ հովերը, կարենային մարդկայնօրէն աւանանալ՝ վեր բարձրանալով, պլուած կեանքի շաւոյ փէշերում:

Ի՞նչ փոյթ, մեր հաւանական ծերութիւնը՝ առանց սիրոյ եւ առանց փառքի: Ի՞նչ փոյթ մեր անօրինակ ազատութիւնը: Ի՞նչ փոյթ բառերը, որով կրնան դիմաւորել մեզ — Արտասանմանից եկած մի տարագիր: Միայն թէ սրուէր մեզի, վերջին անգամ մը, մեռնելէ առաջ, տեսնել իրենց գեղուդէ հասակները: Միայն թէ սրուէր մեզի գիտնալ, թէ կեանքը պիտի շարունակուի մեր ակօսներում մէջ, թէ ամէն օր նոր մանուկներ պիտի ելլեն որոտում երիտասարդութեամբ, թէ ծառերը պիտի պտուղ կապեն ու բամբակի արտերը վառին արեւի բոբը համբոյրներէն:

Կեանքը պիտի կրնա՞յ արդեօք պարգեւել մեզի այս վերջին ուրախութիւնը: Մայիսի իրիկունսով մը կենալ Արշակունի սալայատակին վրայ, երբ համալսարանի դռները կը բացուին դուրս նետելու համար ուսանողներու երամբ: Հո՞ն է միայն մեր փառքը, հո՞ն է միայն մեր գեղեցկութիւնը:

Մեր երկիրը...

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Իմացական Էսթիմե

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՆՈՐ ՆԱՄԱԿՆԵՐԸ



Չէրլին քառորդ զարուն, մեր գրականու-
թեան անհնայած զհմբերուն ստորագրութիւն-
ներով Հայաստանի թէ Սփրւոյի մէջ հրատարակ-
ւցան կարեւոր թիւով նամակներէր, որոնց ծա-
նոթագրութիւնն ու մեկնարկութիւնները խոր
բնութարարութեամբ զիմաստութեան, շնայած կորզ
մը բացթողումներուն ու ճանկման կամայական
ութիւններուն:

Այս կարուանին մէջ երբեքստազա գործեր են
Վերական ճառագրութիւնը ընդամուտը խորագրին
տակ Հայրենի մեր ճառագրութիւններուն ոչխո-
տակցութեամբ տեղայն հրատարակչութեանց լոյս
ընծայած հատորները, որոնց շարքին էր դանուին
Դանիէլ Հարութեանի Վամակնոյն (1905), սոս-
նդհինգ գրողներէ երեք հարիւր նամակ անտրոփած
Վերականայ գրողների Ամանակնոյն (1972),
Զայէլ Ծառեանի Վամակնոյն (1977) եւ ու-
րիւններ:

Մէկտեղուած այս նամակներուն հրատարա-
կութիւնը մէկն է մեր գրականութեան պատմու-
թեան վերջին տարիներու ամէնէն ուշագրու ներ-
գրութիւններէն, մանաւանդ ենթակցութեան ստոր-
կայական ու ճառագրական ախարհներուն ծաթ
մտացած անդիւնները լուսատրոփելու առումով, ու-
րովհետեւ գրողները մտերիմ այս թուղթերուն
լուս ակեւի խոստովանութիւններ զտանած են
յանտի, քան հրատարակուած էրինց էջերուն: Ա-
նոնց, նամակները, նոր պատուականներ էր քանակ
հնգիւններուն ստորեային, գրական յարուանե-
րուն թէ զազգաբարական ապրումներուն վրայ,
զոցիւմով նայն տանն շարաշահներուն թոյ կարծած
զուանները:

Նամակներու քառորդ զարեայ այս պատ-

մութեան մէջ առանձին տեղ մը էր գրուան Ան-
տիք Խաւակեանի նամակները, որոնցմէ կազմ-
ւած առաջին երկու հատորներուն վրայ կ'աւել-
նայ ունուանի նոր մը, Մարտիրոս Մինասեանի
խմբագրութեամբ հետագայ էջերուն ուշագրու-
թեան յանձնուած շարքը, որ բաւական լոյս էր
կենտ վաղ երբեքստազութեան սպրած Խաւակե-
անի ստորեային եւ քանակական թուականներուն
ստոր հոգին խաչանման զազգաբարական հակա-
ստիւններուն վրայ, որոնց քան է վեր ընթեր-
ցողը կրկին էր նամակով 1958ին Վճուարքոյ
լոյս ընծայած Վամակնոյնին ընդմէջէն իրեն ծա-
նոթ յարուան Խաւակեանին...

Անտիք Խաւակեանի նամակներուն ներկա-
յայտուցած շահեկանութեան առջնութիւնը՝ ընթերցո-
ղին ուշագրութիւնին պիտի վերկայն հարկու Մար-
տիրոս Մինասեանի զեկազար սկզբունքները, —
ճառագրական անկախութիւնը եւ դիմական բա-
րեկեղծութիւնը, որոնք էր գրականութեան ամէն
գաւթը, շարքին մէկ ծախսէն միւսը:

Մ. Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԱՆՈՒՑ

Վարդեաի ամէն մի տող, բացիկ կամ նամակ հետաքրքրական եւ քանկազին է, որովհետեւ... նրանն է: Ինքը եղել է հետաքրքիր եւ մարդասօս, որով մասամբ բացատրում է նրա նոյն նամակներն, ուր հանդիպում են հռչակաւոր եւ համեստ անմերթ անուններ: Երկար տարիների ընթացքում նրա գրած բոլոր նամակները գեո յայտնի չեն ընթերցող եւ գիտական հասարակութեանը, թէեւ արտասահմանեան եւ երեսանեան մամուլում հրատարակուել եւ սպա երկու ժողովածուների մէջ ամփոփուել են շատեր: Առաջին հաւաքածոն լոյս է տեսել Գահրէում, 1959ին, «Աւետիք Իսահակեանի Յամակները Վ. Նաւասարդեանին, Ռ. Գարրինեանին, Ե. Խաթաճեանին, Վ. Անարանեանին», էջ 5-122, Վ. Ահարոնեանի շնորհիւ են տեսւմ Աւետիք Իսահակեանի Յամակները՝ վերլուծութեամբ (էջ 123-169): Սովետահայ գրականագիտութեանը օգուում են այս նամակներից առանց աղբիւրի յիշատակման, մտքեր են վերցնում առանց չափերաների. այսպէս է վարուել Լեւոն Հարությունեանը, որի «Աւետիք Իսահակեանի կեանքը եւ գործը» ուսումնասիրութեանը կարգացինք «Նախընթաց» թերթում. նշում են նամակներից մտքեր կան թերթի 1975 թ. 45րդ համարում: Աղբիւրի լռման պատճառն այն է, որ նամակների հասցեատերերը եւ հրատարակիչները Դաշնակցական կուսակցութեան անդամներ են, որոնց շարքին է եղել մի ժամանակ, երկար ժամանակ, Աւետիք Իսահակեանը, թէեւ այս իրողութիւնը դադանիք չէ ոչ ոքի: Երկրորդ ժողովածուն հրատարակուել է Երևանում, 1979 թ., «Աւետիք Իսահակեանի Նամակներ» («Երկրի մազովածու», հատ. 2.): Գրականագէտ Աւիկ Իսահակեանը՝ քանաստեղծի թողը, մասամբ քննադատել է այն («Գրական Քերթ», Երևան, 1979, թ. 37)՝ ոչ գիտականութեան ն մի շարք այլ թերթութիւնների պատճառով: Սակայն առես անտեսելով առաջին ժողովածուն՝ նա յայտարարել է, թէ այս մէկն առաջին անգամն է ամփոփում Աւետիք Իսահակեանի նամակները. «Իսահակեանի Յամակներն անմահն արքայի գրքով հրատարակուել են առաջին անգամ»: Բացի այդ՝ ժողովածուն, իբր, «Ամբողջական պատկերացում է տալիս Իսահակեանի կեանքի ու գործի մասին». անկանը չափազանցութիւն է, ի հարկէ. ո՞վ կարող է ամբողջապէս ճանաչել մի մարդու, առաւել եւս մեծ գրողին, որը, ինչպէս երեւում է հրատարակուած եւ այստեղ հրատարակուող նամակներից, եղել է զերզգայուն եւ աչքել է պատմական, ստեղծագործական ու հասարակական իրադարձութիւններից բխող հողեմիճակներ, սնել է յարափոփոխ թաղաքական տեսակէտներ: Մեր լոյս ընծայած նամակներն այս առումով նոր ծայրեր են բացում:

ծիշդ ու սխալ դատումներով, ինչպէս շատ վտարանդիներ, որոնք պայքարել են յանուն Հայրենիքի: Ամէն ինչից անկախ՝ նրա մէջ վառ են մնացել Հայրենի տան կարօտը, սէրը, Հայրենիքի բախտը, որոնց տեսանկիւնից էլ նա միշտ, կամ գրեթէ, դիտել է աշխարհն ու մարդիկ, կուսակցութիւն ու կուսակցականներ, յիշատիոական պայքար, քաղաքական եղելութիւններ ու անձնաւորութիւններ: Ոչ ոք պողպատեայ չէ, եթէ մարդ է:

Այստեղ Հրապարակուող նամակները մասամբ բացայայտում են Աւ. Իսահակեանի մարդկային յարաբերութիւնները, քաղաքական եւ կուսակցական փոփոխական կարծիքները եւ գրական գործունէութեան, յատկապէս «Սասնաւայ Մհեր» վիպերգի օտեղծագործման որոշ ընթացքը: Վերջին կէտը կը հետաքրքրի անշուշտ գրականագէտներին, քանի որ հեղինակը Երեւանում դարձեալ մշակման ենթարկեց այս գրական գործը: Նկատելի է, որ գրականութեան մէջ էլ, ինչպէս կեանքում, Աւ. Իսահակեանը ձգտել է կատարելութեան: Նամակներն ուղղուած են ՀՀ. Բառնարատ Պիլէզիկեանին եւ Ներսէս Աղիեանին ու գրականագէտ Միսն Թակոբեանին, որ 1924 թ. ներգաղթել է Սովետական Հայաստան, Հրատարակելով Դաշնակցութիւնից, սակայն (Հաւանարար 1937ին) ենթարկուել է բանասրկութեան, զուցէ եւ աքսորի, մահացել է 1942ին: Նամակների ինքնադրերը գտնուած են Վիեննայի Միխայիլ Մարտիկանի նամակագրութիւնների դիւանում, հասցէատէրերին յատկացուած թղթապանակներում, որոնց պատասխանատուն է դիւանի վարիչ Հ. Օզոտիկոս Աէջուլեանը, որ յայտնի է նաեւ որպէս բանասէր ու դրամագէտ: Նամակները Հրատարակում ենք դերասաններն աքսոհայր Գրիգորիս վարդապետ Մանեանի եւ Հ. Օզոտիկոս Աէջուլեանի սիրայօժար թոշտըութեամբ, մեր մեծ բանաստեղծին աւելի լաւ ճանաչել տալու անկեղծ ու անկասկալ գիտաւորութեամբ: Լոյս ենք ընծայում առանց որեւէ փոփոխութեան կամ կրճատման, ինչպէս վայել է ազատ մամուլին, յարգելով նամակագրի ուղղագրութիւնը, կէտադրութիւնը, որոնք այլ Հրատարակութեան ղէպում կարօտ են արդիականացման: Ուրիշներին էլ գրած նամակներից երևում է, որ մեծ գրողը խիստ բծախնդիր չի եղել իր նամակներում ուղղագրութեան, կէտադրութեան, բարբառախօսութեան եւ սճի տեսակէտից, քանի որ գրանք գրուած չին եղել Հրատարակութեան համար: Տողատակի ծանօթագրութիւնները մերն են, ինչպէս նաեւ []ներէ մէջ առնուած աստիճանն ու բառերը բնագրերում: Աւելորդ էր ծանօթագրել Հանրածանօթ աստիճանները: Պահպանել ենք ժամանակագրական կարգը:

Յուսանք, որ մի օր գրականագէտները կը կազմեն բանաստեղծի ու գրողի կեանքի (1875-1957) մանրամասն ժամանակագրութիւնը՝ օգտուելով սպուտն եւ դեռ անտիպ նիւթերից:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Ֆրամսիա, 15-12-1982 թ.

Ա.- ՆԱՄԱԿՆԵՐ՝

ՀԱՅՐ ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԷՋԻԿՃԵԱՆԻՆ (1)

1

27 Մարտի, 1901. Վենետիկ.

Հա՛տ յարգելի Հայր Սուրբ (2).

Անշուշտ կարմացած կը լինիք, որ յանկարծ չերեցայ, բայց դա այնպէս անսպասելի եղաւ, որ ես մինչեւ այժմ չեմ կարողացել ինձ հաշիւ տալ:

Ես վաղօրօք իրերս տարել էի կայարան՝ պահեստին. եւ սպասում է[ի] ժընեից բարեկամիս այն յուսով, որ պէտք է նա մի երկու օր Վիեննայում մընայ եւ կը գանք Ձեզ մօտ. բայց նա ժամանակ չունենալով եւ ոչ մի ժամ մնալու, իսկ կարելոր խօսակցութիւններ ունենալով հետը՝ ես նրա հետ մի քանի կայարան (ստացիօն) գնացի, եւ յետոյ բաժանուցի ու շարունակեցի ճանապարհս դէպի Վենետիկ. յետ դառնալ դէպի Վիեննա բանդ կը լինէր, չնայելով որ փափաքում էի մնաս բարեւ ապել Ձեզ:

Ի՞նչպէս յայտնեմ շնորհակալութիւնս դէպի Ձեզ, դէպի Ձեր բարութիւնն ու պատրաստականութիւնն. ուղիղն ասած խօսքեր չեմ գտնում, — անչա՛փ, անչափ շնորհակալ եմ Ձեզնից. արդեօ՞ք պիտի կարողանամ ժամանակին ես եւս Ձեզ մի փոքր ծառայութիւն մատուցանել ի տրիտուր:

Ես արդէն տեղատրուել եմ մի պանսիօնում, այստեղի ս. Հայրերը (3) նոյնպէս ամէն յարմարութիւն տալիս են ինձ կբաղուելու: Վենետիկ վրաս շա՛տ լաւ է ազդում. լա՛ւ է, խաղա՛ղ, մի քիչ աւելի տաք է այդտեղի վրայ. իսկ ծովի վրայ գտնուող շրջելը՝ շա՛տ եւ շա՛տ ուրախացնում է ինձ:

Խնդրում եմ ներողութիւն անբաղաքա՛վարութեանս. ընդունեցէք սրտագին բարեւներս եւ հաղորդեցէք. Հայր Տաշեանին, Դանիէլին, Զօհրապեանին եւ Վարդանեանին:

Մնամ խորին յարգանքով
Ձեր ԱՌԵՏ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

Հայր Սուրբ. շնորհակարան (4) ստորագրող Հայ-Գուսանը ես եմ. այս համարում մի երկար ոտանաւոր ունիմ, կարդացէք եւ կարծիք յայտնեք ինձ: Եթէ նամակ եւ փող զայ (5) հասցէիս[.] խնդրեմ ուղարկեցէք այստեղ այս հասցէով՝

Venise, Calle Vallarosso № 1303. Pensione M. Venier, A. Issahakian.
Խնդրեմ դուք էլ մէկ-մէկ նամակ գրէք:

(1) Վիեննայի Միխայիլեան միաբանութեան անդամ (1892-1917). գլանգլտ ամսօր-նայում հրատարակել է Հայագիտական ուղեւորութիւնների մասին գրախօսութիւններ, նը-րան ուղղուած նամակներն ու բացիկները հասցէազրուած են Վիեննայի Միխայիլեան վանքը:
(2) Հայ կաթողիկէ եկեղեցում վարդապետներին այսպէս չեն հռչում:
(3) Ս. Ղազարի Միխայիլեան միաբանութեան անդամները:
(4) Ս. Ղազարի Միխայիլեան միաբանութեան անդամները:

- (4) «Իրօշակ»ը եղել է Գալիպոլիսի կուսակցության կենտրոնական թերթը:
- (5) Արատահամեմատ ուսումնասիրության ժամանակ Ա. Խաչատրյանի գծախանքը հասցել է նաև իր բարեկեցիկ հայրը եւ ուսուցիչներին (Վ. Աւարճեան, «Անտիք Իստանուլ-Իսկի Գամակները», 1959, էջ 124):

2

8 Ապրիլի. [1]901. Վենետիկ.

Յարգելի Հայր Սուրբ.

Է՛ վայրա՛, շա՛տ շնորհակալ եմ, փողը, թէեւ քիչ, բայց լա՛ւ ժամանակին հասաւ:

Այստեղ օրերը սքանչելի են. կապո՛յտ, կապո՛յտ երկինք ու ծով. անուշ արեւ. եւ ճոխ բուսականութիւն. առայժմ տրամադրութիւնս լաւ է, տեսնեմ յետոյ ի՞նչ կը լինի:

Շնորհաւորում եմ Ձեր Ջատիկը. երէկ Ս. Ղազար էի. պատարագին, լա՛ւ անցաւ. Հ. Ալիշանը (1) հիւանդ էր, հիմա լաւ է. պարմանալի ուժեղ [կամբքի] տեր մարդ է. պարմանալի մա՛րդ է. հիացած եմ իրենով:

Է՛լ ի՞նչ գրեմ. առայժմ այսքանս. ընդունեցէք բարեւներս եւ ծանօթ Հայրերին հաղորդէք. մնամ Ձեր բարեկամ, եւ խորին յարգանք

ԱՌԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ.

(1) Հայր Դեանդ Ալիշանը մահացել է 1901 թ. Նոյեմբերի 9 (22)ին: ՏՄՈ Ա. Իսահան, «Նոյն յաշտից» (Երեւանի ժողովածու), հատ. 5, Երեւան, 1977, էջ 7-14), «Նիսիոյ Ալիշան», որ գրի է առել Երեւանում, 1948 թ. Դեկտեմբերի 20ին:

3

28 Նոյեմբեր. [1901] (1), Քիֆիլի.

Մեծյարգոյ Հայր Բառնաբաս,

Ձեզ երկար ժամանակ նամակ չգրելուս երկու գլխաւոր պատճառներ կային. նախ, որ հայրենիք վերադառնալուց անմիջապէս յետոյ շրջեցի Կովկասի մի քանի տեղերը եւ ծովափին էի անում նամակներ գրել առհասարակ, յետոյ երկրորդ, որ այդ շրջագայութեան միջոցին վարակուեցի տիֆով (վօրցաւք) (2) եւ ծանր հիւանդացայ. ամառային պարկեցի (3) տեղիս հիւանդանոցում, եւ վերջի վերջոյ առողջացայ, այժմ 10 օր է, վեր եմ կացել եւ մի քանի օրից յետոյ կը գնամ հայրենի քաղաքս՝ Ալեքսանդրօպոլ:

Հիւանդութեանս միջոցին տեղի ունեցաւ Մխիթարեաններիոյ յոբելեանը, որին ես լուռ մնացի (4):

Մեր տանը մի առժամանակ մնալով եւ լաւ կազդուրուելուց յետոյ ազգագրական նիւթեր հաւաքելու համար պիտի շրջել Կարսի, Կադլուանի, Կողբի, Իգդիրի եւ Ս. Էջմիածնի գիւղօրայքը (3).— Խնդրում եմ ինչ նամակ գրէք.

զուցէ պէտք գամ Ձեզ տեղեկութիւններ հաղորդելու մէջ մեծ ուղախութեամբ կը կատարեմ Ձեր, Յարգելի Հայրերիդ ցանկութիւնները, եթէ ուժերիցս վեր չեն: Ա. Էջմիածնի մատենադարանում պարապելու եմ, նոյնպէս եւ Սեւանայ վանքի մատենադարանում, թերեւ այս կէտերում Ձեզ հարկատը հանդիսանամ, ես ուզում եմ անպատճառ իմ կարողացածի չափ ծառայութիւն անել Ձեզ:

Ընդունեցէք, խորին յարգանքներս եւ ողջոյններս պատուելի Հայրերին.

Մնամ Ձեր բարեկամ
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ (5)

Իմ մշտական հասցէն, որով նամակները կը հասնեն ինձ ո՛ր որ էլ լինիմ, [ռուսերէն]՝ Ալեքսանդրօպօլ (Զակավկայ) Աւետիք Սահակեան Իսահակեանցին (Գեներալսկայա ուլիցա):

(1) Ա. Ծաւակեանը միշտ չէ, որ նշել է տարեթուերը, եւ նամակներէ ծրարները, որոնք փոստակիւրջից կարելի էր կորցուլ տարեթուերը, չեն պահպանուել: Պարտում ենք, որ այս նամակը 1901ին է:
(2) Բառարաններում՝ «վարցաւ»:
(3) Քնաղբում՝ «այսպէս»:
(4) 1901 թ. Սնկտեմբերին ամենուրեք տանուել է Միխիթարեան մխարանութեան Հիմնադրման երկնարարածեակը, ինչպէս կորցում ենք զՆանգէտ ամսօրնայթ 1901 թ. Սնկտեմբերի Համարում: Սա եւս հաստատում է, որ նամակը գրուել է 1901ին:
(5) Մերթ՝ Իսահակեանց, ժերթ՝ Ծաւակեան, ժերթ էլ՝ անորալ, կէտով, վերջուկէտով, անկէս:

4

27 Յունուար. [1902(1), Վաղարշապատ]

Յարգելի Հայր Սուրբ.

Քանզագին նամակդ ստացայ Ա. Էջմիածնում, ուր ճանապարհի ջրջանը անելուց յետոյ, հանգստանում եմ ու հաւաքած նիւթերս (2) կարգի դնում: Ձեր ուղարկած ցանկի (3) համեմատ կ'աշխատեմ գտնել, ինչ որ կարող եմ, եւ ջանք չեմ ինձայի:

Շտապ եմ գրում այս կարտը (4), որովհետեւ տուն գնալուց յետոյ՝ կ'ուզարկեմ Ձեզ մի ընդարձակ նամակ (5), ուր զուցէ կը գտնէք Հայրենիքից հետաքրքիր լուրեր եւ նորութիւններ:

Բարեւներով ծանօթ Հայրերին:
Ընդունեցէք յարգանքներս
Ձեր ԱԻԵՏ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

27 Յունվ. Ա. Էջմիածին

(1) Բացիքէ տարեթիւը, որ Ա. Ծաւակեանը չէ նշել, վերցնում ենք փոստակիւրջից:
(2) Հաւանաբար տղազարական նիւթեր:
(3) Անշուշտ գրքերի ցանկ, բանի որ Հ. Բ. Պէլեգրէնեանը 22 ասորի եղել է Միխիթարեանի անձնակազմի անդամ:
(4) Բարեւներով ծանօթ Հայրերին:
(5) Հաւանաբար տղազարական նիւթեր:

- (4) Բարձիք, ֆրանս. carte (postale):
- (5) Գա՛՛մ եւ չի գրել, ֆա՛՛մ եւսմակը չի պահպանուել:

5

[25 Մայիս, 1911, Ցիւրիխ] (1)

Սիրելի Հայր Սուրբ,

Ողջ եւ ստող հասայ Ցիւրիխ. տեսայ եւ միշտ տեսնում եմ Սիմ[ոն]ն (2) Յակոբեանին. ասի գրքերի մասին, ասա թէ կամ ջուտով կ'ուղարկէ, կամ Ռուսիա վերադառնալուս (3) հետը կը բերէ:

Խնդրում եմ իմ հասցեով եկած նամակները ուղարկէք Ցիւրիխ Poste-
Restante, իսկ եթէ դրամ գայ, կը տեղափոխէք Zürich, Cölmanstrasse № 26, apt.
II, Avetis Bajazid (4): Ներողութիւն եմ խնդրում, որ Ձեզ անհանգստացնում
եմ:

Խորին յարգանքներով եւ բարեւներով
Ձեր ԱՌ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

(1) Ցարիթիւք եւ սմաթիւք՝ աւստրիական Վիեննա ցաղաթի փոստակիւղից, իսկ ցաղաթի տեսիլը՝ Նամակից:

(2) Ինչեպոքում՝ Սիմէն, որ զուցէ Սիմէն պիտի լինէր. Սիմէն Յակոբեանի մասին տե՛ս օտարէ, երա գրած նամակների մեր նախաբանում:

(3) Ինչեպոքում այսպէս է, փոխանակ վերադառնալուս:

(4) 1908-1909 թթ. Քիֆիտի Մեանիի բանասում որդեւորականիւց յետոյ (ազգային ազատագրական շարժմանը մասնակցելու պատճառով), Ա. Բաւաղեանը բանակից ազատուել էր երաշխաւորութեամբ, սակայն 1911 թ. Անիի վրայով անցել էր արտասահման, իսկ՝ Պոլիս, ապա՝ Եւրոպա. արտեւով է բացատրում անշուշտ Բաշալիտ կեդեանուելը, վարչպէս Աւարտեանը գրել է. «1911ին ցարական բանակից դրամական երաշխաւորութեամբ ազատ արձակուելուց յետոյ, ցարական զարդագոյտութիւնից խուսափելու համար եւս անցել է Եւրոպա, ուր կրկին ապսիմել է երաշխաւորութեամբ օգնութեամբ» («Աւետիքի իտեղականի» համակ-նքը, 1959, էջ 124), ոչ միայն երաշխաւորութեամբ, ինչպէս ցոյց են տալիս երա ճամանակները. երան պիտի են ետեւ Հարութաւ Հայեր, մեկնաստութեամբ հրատարակել են երա ժողովա-նուանքը:

6

27 Յունիսի [1912] (1) Կ. Պոլիս

Հատ սիրելի Հայր Բաւաղեան.

Արդէն գրած էի մի քանի օր առաջ «Հանդես ամսօրեայ»ի խմբագրու-
թիւն, որ եթէ իմ հասցեով (Աւետիք Պայապատեան, Հայկ Գուպանեան անու-
նեով) նամակներ գան, պահէք մինչեւ իմ գալս (2). Նորից խնդրում եմ նե-

դուրսին կրէք. ես մի քանի օրէն կը մեկնիմ, եւ այդտեղ իմ սեփական հասցէն կունենամ:

Ընդունեցէք բարեւներս եւ յարգանքներս՝

ԱԻԵՏԻՔ ԻՍՍՀԱԿԵԱՆՑ

27 յունիսի. Կ. Պօլիս:

- (1) *Յարկիւք եղբայրացեալ եմք յաւորչ երկառոյց, որք որսկէք մի քանի որ սոսմ է դրէ՞:*
- (2) *Ահա այդ երկառոյց.*

7

12 յունիսի 1912, Կ. Պօլիս

Գերայարգոյ Հայր Խմբագիր

«Հանդէս Ամսօրեայի».

Ներողութիւն խնդրելով պատիւ ունիմ յայտնելու Ձեզ, որ թերթիդ հասցէով, Կովկասից՝ Երեւանի Նահանգից՝ Ղամարու գիւղից՝ պիտի գայ 50 բուրջի, յանձնելու Աւետիք Պայպատեանին. խնդրում եմ այդ գումարը՝ եթէ գայ, պահեցէք մինչեւ իմ վիճենս գալը. Հայր Բառնաբասի հետ զուցէ զամ(1), եթէ ոչ նրա հետ կարգադրութիւն կանեմ:

Յարգանք
Ձերդ ԱԻԵՏԻՔ ԻՍՍՀԱԿԵԱՆՑ

Կ. Պօլիս. 12 յունիսի. 1912.

(1) *Նախորդ երկառոյցը հաւանաբար վիճեալ չի հասցէագրուել, քանի որ Ա. Ծաւուկեանը ծառայէր է նրա հետ վաճառ, այսինքն՝ վիճեալ գալ: Մեր լուստպատճենի վրայ փոստակները չի կարգադրուում:*

8

4 Յունիսի. [1913], Կոլլոնմ(1)

Հա՛տ սիրելի Հայր Բառնաբաս,

Ամբողջ 10 ամիս լռելուց յետոյ Ձեզ այս երկու տողն եմ գրում, որով հետեւ ինչպէս ասում են «կամ աղն է պակաս լինում կամ մաղը» որ դիմում ենք. խնդրեմ ներողամիտ եղէք: Ձեր մօտ թողած զրքերիցս, խնդրում եմ, հանէք վահան Տէրեանի «Բանաստեղծութիւնները» եւ ուղարկէք մի քան յանկարծ շա՛տ կարեւոր եղաւ: Ես ողջ եւ առողջ եմ. ընդունեցէք ջերմ բարեւներս Ձեզ եւ ծանօթ հայր սուրբերին:

Յարգանքներով Ձերդ
ԱԻԵՏԻՔ ԻՍՍՀԱԿԵԱՆՑ.

Հասցէս՝ Genève. Rédact[ion] «Droschak», Aven. Beau-Séjour N° 3.
 Երևանի Ա[ւետիք] Ըս[ահակեանի]ն:

(1) *Տարեթիւը՝ փոստային կնիքից: Կուսմ գիւղը ժրհետի մտ է, բայց ճրանորոշումը Փրանս. Collonges-sous-Salève, Haute Savoie նահանգում. Իտալականի այս բացիկը ունի Փրանս. փոստի կնիքը եւ գրուածութիւնը: Ուստի՝ սխալուել է Լեւոն Հախչերզեանը գրելով՝ «Շվեյցարական կնի ու սիրունիկ դիւղում» (ՆՈՎԵՐԻ, 6 Ապրիլ 1976). Այստեղ նա մէջբերել է Գարեգին Լեւոնեանի հետեւեալ խօսքերը. «Գիւղացիք գլխարկները հանում էին եւ խոնարհ բարեւում բանաստեղծին, կամ նթէ նստած էին՝ զեր էին կենում». այս յարգանքը նրան մասնաւոր էր, թէ հարկէ, որպէս ստորականի, եւ ոչ թէ յայտնի բանաստեղծի:*

9

3 յուլիսի [1913] (1), Կօլլոնճ

Սիրելի Հայր Սուրբ,

Հնորակալութեամբ ստացել եմ ուղարկածդ գիրքը (2):

Ձեզ արդէն բաւական նեղութիւն պատճառեցի, խնդրում եմ, եթէ «Դրօ-
 շակի» հրատարակութիւններից պակաս ունիք, գրեցէք ուղարկեմ:

Ես ողջ եւ առողջ եմ, յոյս ունիմ, որ դուք եւս առողջ էք: Ձեր միաբան
 եղբայրները եւս աշխատում են հայկական հարցի համար (3), բայց ինձ թուում
 է, որ Անգլիան այս անգամ էլ փակել է դժոխքի ելքը հայերիս համար: Ձերմա-
 ջերմ բարեւներ եւ յարգանքներ ծանօթ հայր-սուրբերին:

Մնամ Ձեր՝ ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

- (1) *Տարեթիւը՝ փոստային կնիքից:*
- (2) *Հաստատար Վահան Տէրեանի գրանաստեղծութիւնները, որ խնդրել էր ես հարցը կրկնողսւմ:*
- (3) *Ակնարկումը մեզ պարզ չէ:*

10

23 դեկտ. 1916, Ժընևա.

Մեծարգոյ եւ սիրելի Հայր Բառնաբաս,

Լսեցի, որ միաբանութեան Հայրերը ողջ եւ առողջ են, եւ շա՛տ ուրա-
 խացայ. խնդրեմք Աստուծոց, որ այս սարսափելի պատերազմը շո՛ւտ վերջանայ,
 եւ արժանի լինենք իրար տեսի:

Ես մնում եմ այստեղ, սպասելով այդ ըղձալի ժամին. առողջ եմ, բայց
 շա՛տ տխուր:

Սիրելի Հայր սուրբ, շա՛տ կը խնդրէի մէկ աչքի անցնելիք 1893 թականի
 «Տարապ» թերթը, այնտեղ կը գտնե՞ք արդեօք հետեւեալ տողերով սկսող այս
 ոտանատուրը «Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս, անուշ սերս սրտովս...» իմ
 ստորագրութեամբ. այն չի՞ կրում Հաճիկի (պարսկ. բանաստեղծի) անունը,

digitised by A.R.A.R.@

որից՝ քարգմանած եւ նմանողութիւն: Ուրեմն՝ գտնել թէ որ համարումն է «Տարապ» թերթի, եւ արդեօք կրում է Հաֆիսի անունը այդ ոտանաւորս (1): — Կանխաւ յայտնում եմ շնորհակալութիւններս, եւ ջերմ բարեւներս Ձեզ եւ ծանօթ հայր-սուրբերին:

Ձեր անկեղծ՝
ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆՆ.

Հասցէս.

A. Issahakian, Prévost Martin, 53. Genève.

(1) Հայր Քառասորսը երկուսի սկզբում նշել է «1800 — քիւ ՅԷ, 16 Օգ. էջ 401-401. I Լուսադէմի՞մ վարդ Տաղիլիս. II Ռ'վ առաւօս. (Հասուածներ Հաֆիսից եերշնչուած. III Գիճի՞մ՝ ձեռքս, վարդը՝ կրծքս): 1916 թ. Գեղեմի՞սրէի 8ին Իսահակեանը այս բանաստեղծութեան մասին յայտնել է նաեւ Գարեգին Լեւոնեանին, որովհետեւ Մ. Մանենեանը «Հնարիգանի մէջ գրել էր. թէ զա Հաֆիսի նմանութեան է (ան'ս ճամակներ, էլ 108, զարկեալ 1917 թ-ի) արտի 2ին, Զ. ա., էջ 108):

11

10 փետր. 1917, Փրննեւ.

Հատ սիրելի Հայր Սուրբ.

Հնորհակալութեամբ ստացայ Ձեր նամակը: Գ. Սամէլեանը խոստացաւ իսկոյն ուղարկել Ձեզ ունեցած պարտքը:

Ա. Գօշը մօտ օրերս ուղարկեց Ձեր ապսպրած գիրքը «Հայրեն. երգար[ա]նը» (1):

Եթէ մի բանի պէտք կունենայք, խնդրում եմ, բարի եղէք ինձ գրելու: Ողբում եմ Հայր Գիտէկեանի ["] (2) մահը, արդէն լսել էի. նորից բախտաւոր ենք, որ թանգագին (3) կորուստը մի հատ է:

Տայ Աստուած ջուտով իրար տեսնենք եւ կարօտով համբուրեմ պատկառելի Հայրերի՝ Ձեր եղբայրների թուրի աջը:

Ամենաջերմ բարեւներով եւ համբոյրներով ամէնչիդ եւ Ձեզ՝

Ձեր ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆՆ.

(1) Ինքնագրում վրիպակով «երգերան» է:
(2) Ինքնագրում անընթեռնելի ազգանուն. հիմէ նկատի ունի Հ. Քովմաս Կէտիկեանի (1876-1916), ապա նրա ազգանուն սկզբնաւորը Կ է:
(3) Ինքնագրում՝ այսպէս: Հին ձեռագրերում եւ տպագրիչներում գրուել է թանկ կամ քանկ:

12

16 մայիսի 1917, Փրննեւ.

Հա՛տ սիրելի Հայր Բառնաբաս.

Ձեր 11 մարտի թւակիր նամակը միայն մի երկու օր [առաջ] ստացայ. այսպէս ո՛ւնջ: Ըտապում եմ պատասխանել:
digitised by A.R.A.R.@

Ամէնից առաջ սիրալիք բարեւեներս Հ. Հ. Տաշեանին, Գալտմբարեանին, Մէնտվիշեանին, Չեզ. եւ միւս շա՛տ յարգելի Հայրերին:

Բոլոր նշաններից կ'երեւայ, որ հետո չէ բոլոր ազգերի երազած խաղաղութեան օրը. եւ որ վերջապէս, շնորհիւ ռուսական օրհնեալ յեղափոխութեան Հայութիւնն էլ ունենալու է արեւի տակ մի կտոր տեղ գլուխ դնելու համար: Յուսանք, եւ մեծ է հայի Աստուածը:

Թերթերի եւ լրագրների, ու գրքերի մասին մի հոգ բաշէք. պատերազմից յետոյ հեշտութեամբ ձեռք կը բերենք. այստեղի խմբագրութիւնն (1) էլ շա՛տ անկանոն է ստանում. 50% կորած են թերթերի ["] (2):

Պ. Անտօն Գօշը խնդրում է Չեզ յայտնել, որ Չեզի ուղարկած «երգարանը» ընդունեցէք որպէս մի չնչին նւէր:

Գալով Պ. Սամվելեանին, ասել եմ նորէն, բայց ես ուղարկում եմ նրա հասցէն, որ պաշտօնապէս գրէք նրան. եթէ ո՛չ նա ինձ որոշ պատասխան չի տայ:

Խոնարհաբար կը խնդրէի Չեզ, որ, եթէ հնարաւոր է գիրք առաքելու տեսակէտից, ուղարկեցէք ինձ Հ. Պ. Ջաքարեանի կազմած գերմաներէն լեզուի քերականութեան միայն առաջին մասը (3):

Խոնարհ յարգանքներով
մնամ Ձերդ միշտ անկեղծ՝
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԻԱՆ:

Ահա Պ. Սամվելեանի հասցէն: Minas Samweloff, rue de la Muse, 10. Exp. A. Issahakian, rue Prevost Martin, 53, Genève.

(1) «Գրքակցի խմբագրութիւնը ժընևում»:

(2) «Գեաք է կարգու կ'ա՛մ զթերթերը, կ'ամ զթերթերի [ժողովածուները]»:

(3) Հ. Պ. Ջաքարեան, Փեքսկամուքիւն գրքծնական գերմաներէն լեզուի: Մասն Ը., Ձերագիտութիւն, 1880, Բ. սուր. 1907, էջ 323-324: Մասն Բ. Համաժողովութիւն, 1891, Վրէննա:

13

30 Մարտի. [19]19. Ժընևս:

Սիրելի Հայր Բառնաբաս,

Ձեր փետրվարի 2-ի թակիր քարտը միայն 10 օր առաջ ստացայ. ուշացընելու պատճառը թերևս այն էր. — (յունվարի 6-ին Փարիզից գրած նամակ մի՛ երէկ ստացայ) — որ ամիսներից ի վեր տեղական ժանտարմերին ինձ կ'հակէր, եւ վերջերս խուլարկութիւն արաւ ինձ մօտ, իբրև ռուս բօլշեւիկ եւ գերմանասէր: Իբրև բօլշեւիկ, բնական է, որ մօտս ոչինչ չ'պիտի գտնէիմ, քանի որ բօլշեւիկ չեմ, այլ Հայ յեղափոխական դաշնակցական: Իսկ զալով գերմանասիրութեան, — որովհետեւ այս տարի Բերլին գնացի, — կարող եմ ասել, որ հաւասարապէս ասում եմ թէ գերմանացուն եւ թէ գաղիացուն. երկուսն էլ ինձ համար հայ ժողովրդի դատիճներն են թիւրքի եւ ռուսի հետ միասին:

Այս նախաբանը նրա համար արեցի, որ իմանաք թէ ինչո՞ւ լռել էի՝ Ձեր նամակը թողել էի անպատասխան: Հիմա դառնանք Ձեր հարցին. ինչքան կարողացայ ստուգել, այն հանգէս եկաւ, որ Ամերիկան 100 միլիօն դոլլար չի

յատկացրել հայերի եւ այլ ժողովուրդների համար, այլ հետեւեալը, որ բառացի կ'արտագրեմ Փարիզի «Վերածնունդ» հայ թերթի փետրվարի համարից.

— «Ամենահաաստի աղբիւրէ կ'իմանանք թէ հայ եւ սուրիացիներու օգնող ամերիկեան յանձնախումբը իր նպաստի առաջին շոգէնաւը ճամբայ հանած է արդէն Նիւ-Եորքէն դէպի Պօլիս: Այս նաւը տրամադրած է ծովային նախարարութեան կողմէ եւ ուստետեղէնի վարչութեա[ն] (1) հաւանութեամբ. իր հետ կը տանի ի միջի այլոց 100.000 վերմակ, 50.000 գոյգ կօշիկ, 1000 սնտով հանդերձեղէն, 200 թօսօ ուստետեղէն, 100 անկրողիննոց հիւանդանոց մը, 10.000 տուփ թանձրացած կաթ եւ 60 օթօմօպիլ ուստետեղէն փոխադրելու համար:

Ուրիշ նաւ մը իբրեւ նւէր կառավարութեան կողմէ մօտ օրէն ճամբայ կ'ելլէ Նիւ-Եորքէն իր հետ տանելով 1.500.000 տոլար արժողութեամբ ալիւր Փոքր Ասիոյ Հայերուն համար:

Նոյն յանձնախումբը բացած է նաեւ — 30.000.000 տոլարի հանգանակութիւն զը, որ մեծ եռանդով առաջ կը տարուի»: Թէ ո՞րքան ստոյգ են այս բերը, չեմ կարող ոչինչ ասել:

Ձեզ յայտնի է, որ փետրվ. 27-ին Պօղոս Նուբար եւ Ա. Ահարոնեան ներկայացրին հայկական պահանջները՝ միացեալ Հայաստան, Սեւ Ծովից մինչեւ Միջերկրական. ամիս է անցել, սակայն դեռ չգիտենք թէ ի՞նչ է լինելու, ընդունելու են այդ սահմանները, ստեղծելու է Հայաստան, թէ ոչինչ չի ստեղծելու, — յայտնի չէ:

Այսքանը պարզ է միայն, որ Գաղղիան խոչընդոտ է հանդիսանում մեծ Հայաստան ստեղծելուն, նա բացորոշ պաշտպան է հանդիսանում մուսուլման տարրերին՝ թուրք, քուրդ, արաբ: Անգլիայի դիրքը դէպի հայերը խորհրդաւոր լռութիւն է, յոյսերս միայն Ամերիկայի վրայ է, ինչպէս եւ բոլոր ազգերի յոյսերը Ամերիկայի վրայ են. տայ Աստուած, որ չ'խաբենք (2):

Դրութիւնը կովկասի Հայաստանում շատ վատ է — սով, մահ, համաճարակ. ահաւոր չափերի են հասած՝ եւ օգնութիւն չկայ ո՛չ մի տեղից:

Այս ամէնը կարող են լաւ վախճանի հասնել, եթէ միայն Եւրոպան զերծ մնայ բօլշեւիզմից եւ կարողանայ խաղաղութիւնը պահել գոնէ մի 20 տարի, մինչեւ մենք ամբանանք. իսկ եթէ հիմա նա ընկնի բօլշեւիզմի, անիշխանութեան գիրկը, մենք կը մատնենք ծանր փորձանքների, ժողովրդի մնացած մասը կը ոչնչանայ, որովհետեւ՝ Եւրոպայի գլուխը խաղը լինելով, կ'ազատին թիւրքի եւ քրդի ձեռքերը:

Ինչպէս կ'տեսնէք ուրախ յուրեր չ'կարողացայ Ձեզ հաղորդել. բայց յոյս ունիմ, որ մինչեւ ամսիս վերջը, կամ մայիսի :վզբներին վերջնականապէս լուծւի մեր խնդիրը լաւագոյն ձեւով:

Յոյս ունիմ նոյնպէս մօտիկ ապագայում Ձեզ տեսնել, երբ բախտ կուրենամ հայրենիք դառնալ Վիէննայի վրայով:

Ողջոյններով Ձեզ ամէնրիդ, սիրելի Հայր սուրբերին բոլոր, բոլոր,

մնամ Ձեր բարեկամ՝
ԱԻ. ԻՍԱՀԱՆԵԱՆԾ:

(1) Ինքնազբերում վրձնակով «Վարչութեամբ» է:
(2) Ինքնազբերում յստակ չեն է ու ն ոտաները, ինչպէս գլխազբերն ու փոքրատուները:

14

30 մայիսի. [19]19, ժընև.

Սիրելի Հայր Բառնաբաս,

Կովկասի Հայաստանում սաստիկ սով կար, որովհետև թուրքերը բոլոր հացահատիկները գրաւել էին, եւ վրացիները ճանապարհ չէին տալիս Ռուսիայից հաց բերելու, — դրա հետեւանքով համաճարակ տարածեց, որ հազարատոկ քոհեր տարաւ միայն Կովկաս, դասական ժողովրդից, բայց հիմա շնորհիւ Ամերիկայի դրութիւնը բարտրեաւ է:

Հայոց պօրքերը գրաւել են Ղարսը եւ դաշնակիցների ղեկավարութեամբ պատրաստում են գրաւելու Մուշ, Բիթլիս, Վան եւայլն:

Ապաստւում ենք որ զերմաններից յետոյ հերթը գայ Թիւրքիայի հաշտութեան պայմանների. գրում են Փարիզից, որ հայերիս կը տրուի (1) Մերսինա, Աղանա, (Իսկենդերունը — ո՛չ), Մալաթիա, Խարբերդ, Պոնտոսը (Տրապիզոն, Կիրասոն), Երզնկա, Կարին, Բիթլիս, Մուշ, Վան, Կարս. Ալեքսանդրոպոլ, Երեւան: Սեբաստիա, Կեսարիա, Դիարբեքիր — ո՛չ: Այդքանն էլ բաւ է, կը լինի 300.000 քառակուսի մղոն: Թիւրքահայ նահատակ ժողովրդից ողջ մնացած հաշտում են բոլորը, բոլորը (Ռուսիա փախած եւ այլուր) մօտ 8-900.000 հոգի. Ռուսահայերի հետ միասին մայր հողի վրայ կ'ինի մօտ 2.500.000 հայ, եւ մօտ 500.000 զուրսը:

Վիլսոնը խոստացել է Հայաստանի մանդան առնելու, եթէ Ամերիկեան Սենատը համաձայնի. սակայն լաւատեսները այն կարծիքին են, թէ Ամերիկան անպատճառ կ'ընդունի Հայաստանի մանդան: Մեր յոյսը արդէն Ամերիկան է, որի ժողովուրդը շա՛տ մեծ, անմոռանալի օգուտներ հասցուց հայերիս: Միւս դաշնակիցները՝ լինի Անգլիա, Ֆրանսիա կեղծաւոր, եսամոլ, շահասէր պետութիւններ են: Մնամ ջերմ բարեկեցութիւններով

Ձեր՝ Ա. ԻՍԱՀԱԿԻԱՆ:

A. Issahakian, 53, Prévost Martin, Genève.

(1) *Բնագրում՝ այսպէս:*

15

7, VI. [19]19, ժընև.

Սիրելի Հայր Բառնաբաս,

Փարիզից գրում են, որ Ամերիկացիք մեր դելեգատիօնին հանգստացնում են, թէ Հայկական հարցը արդէն լուծած է, հայերի համար նպաստաւոր եղանակով: Երեւի միայն Տիգրանակերտը եւ Կեսարիան չի (1) մտնելու ապագայ Հայաստանի մէջ, բայց Կիլիկիան անպատճառ: Կիլիկիայի մէջ արդէն հայ

digitised by A.R.A.R.@

պոստ (2) եւ հեռագիր կը գործադրուի (3): Ամերիկայից՝ հասարակապետականները՝ Վիլսոնի հակառակ կուսակցութիւնը, դիմել եւ պահանջում է (4) նախագահից, օր-առաջ լուծել հայ. խնդիրը, գրաւել երկիրը, ստանձնել մանդան եւ ճանաչել Կովկասի հանրապետութիւնը: 5 միլիոն (5) դոլար է տւել Ամերիկան Կովկասի մեր հանրապետութեանը: Կարսը գրաւած է ապրիլի 19-ին. բանտարկւած է տեղական թիւրք կառավարութիւնը. գտնւած է շա՛տ ցորեն, ցանած արտեր, 2 1/2 միլիոն փամբուշտ (6) եւ շա՛տ թնդանօթներ. գաղթական հայերը (140.000) լցւել են նահանգը. թիւրք ժողովուրդը հպատակութիւն է յայտնել Հայաստանին: Սովը եւ տիֆուսը (7) վերջացել է (8): Պատրաստում են գրաւել Թիւրքաց Հայաստանը. Տրապիզօնը արդէն գրաւած է եւ ժողովուրդը տեղափոխուած է հոն. Փարիզի քաղաքապետութիւնը Փարիզի փողոցներից մէկի անունը դրել է «Rue de P'Arménie» [«Հայաստանի փողոց»]: Կարեւոր նորութիւնները սրանք են. նորութիւններ ստանամ, կը հաղորդեմ: Մի 10 օր առաջ եւս մի քարտ էի ուղարկել Ձեզ, յուսամ, որ ստացաք:

Ձերմ բարեւներ բոլոր յարգելի Հայր Սուրբերին. տա՛յ Աստուած, շուտով արժանանանք իրար ազատ Հայրենիքում տեսնել, եւ հիւր լինել Ձեր վանքում՝ Ընդրակի կամ Տարօնի նւիրական տաճարներից մէկում, ուր մեծ. Աբ[բ]ախօր Մխիթարի գործը շարունակէք մեր տանը:

Ձեր ԱՌԵՏ. ԻՍԱԿԱԿԵԱՆ:

(Շար. 1)

-
- (1) Ինքնագրում այսպէս է, փոխանակ չեմ:
 - (2) Հայ զնամկատուներ:
 - (3) Ինքնագրում՝ այսպէս, փոխ. գործադրուի են:
 - (4) Այս բայը համաձայն է կուսակցութիւնը քաղաքայտիչի հետ, որից յետոյ (,) նա յայտնող աւելորդ է դառնում:
 - (5) Ինքնագրում՝ միլիոնի:
 - (6) Ինքնագրում՝ այսպէս, փոխ. փամբուշտ:
 - (7) Ֆրանս. typhus.
 - (8) Ինքնագրում՝ այսպէս:

Գ. Ա Ր Ա Ջ Ե Ա Ն

Իմ սերունդն ամբողջ եղեամի մէջ է. Նշանակում է ցրտեր են եղել. Ծածկուել են ձիւնով ժամանակից շուտ, Բայց կրակն իրենց դեռ չեն անթողել. Նրանք պարզապէս կարճ ժամանակում Անցել են երկար, երկար ճանապարհ՝ Սերմնացաններ, որ հողի փոխարէն, Հերկել են սառոյց, ակօսել են բար. Եւ հողիներում գանձեր ու գանձեր, Որ դեռ չեն պեղել. Իմ սերունդն ամբողջ եղեամի մէջ է, Նշանակում է ցրտեր են եղել:



ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՔՆԱՐԸ

Մարօ Մարգարեանի գողտրիկ բանաստեղծութիւնները, որ յիշեցնում են երգ՝ մրժույցների, հայ ընթերցողի շուրթերին են թէ՛ հայրենիքում, թէ՛ Սփիւռքում: Իրանք միութենական ընթերցողի շուրթերին են նոյնպէս՝ Թարգմանաբար: Թարգմանական արուեստի հեղինակաւոր մասնագէտները հաստատում են, որ Մարգարեանի բանաստեղծութիւնները այլ լեզուներով նոյնպէս պահպանում են իրենց նախասկիզբ հմայքը: Հաղուազէպ երեսոյթ Թարգմանչական արուեստում:

Բանաստեղծուհու համբաւը վաղուց է վեր ելել է հայ իրականութեան սահմաններից: Տարիներ առաջ լոյս տեսաւ «Մովսէսական տասնրիկը քանաստեղծուհիներ» խորագրով ժողովածուն: Սո-

վետական բանաստեղծուհիների թիւը, անշուշտ, պատկառելի է, եւ հրատարակիչների բժականգրութիւնը՝ կենսական անհրաժեշտութիւն նման պիւրջ հրատարակելու համար: Այս դրքում ընթերցողը հանդիպում է Մարօ Մարգարեանի բանաստեղծութիւններին: Դարձեալ տարիներ առաջ Հարաւարախայում լոյս տեսաւ հզակի մի ժողովածու՝ «Կամացի Քնար» խորագրով: Հեղինակների ընտրութիւնը աւելի քան բժականգրի պէտք է եղած լինի, որովհետեւ դիրքը ընդգրկում է դարերի տեսողութեան, սկսած աշխարհին յայտնի առաջին բանաստեղծուհու ժամանակներից մինչեւ մեր օրերը: Իր բընոյթով այս համաշխարհային ժողովածուի մէջ կրկին հանդիպում ենք Մարօ

Մարգարեանի անուանի Այս փաստերը որեւէ յանձնախմբի քաջատրուութեան կարիք չունեն եւ ինքնին վիայում են բանաստեղծուհու համարը:

Երջանիկ պատահականութիւն լինել չէր կարող, եւ միայն անխառն արուեստը կարող էր համաբաւարել բանաստեղծուհուն:

Ուր էլ յայտնուել է Մարո Մարգարեանը: Իր քննիչը ցոյց տալով ներկայացել է հայոց ժայռեղէն հողի բոյրով՝ արձագանգելով այն մեծ ճշմարտութիւնը, թէ չկայ արուեստ, որ չունենայ իր հայրենիքը՝ եւ որ համամարդկային ճշմարիտ ճանապարհը սկիզբ է առնում տունէլ արուեստորդի հայրենիքից: Միայն այս կերպ է գոյանում համաշխարհայինը:

Բանաստեղծուհու ստեղծագործական կեանքի տեսական միջոցին մեր գրականութեան ու արուեստի երկնակամարով շատ ու այլաբան հողի են անցել, եղել են մակընթացութիւններ ու տեղատուութիւններ, որոնց պարտադրանքից չեն կարողացել խուսափել շատ ու շատ արուեստագէտներ: Մարոն՝ այս փնտրում, փոքրամարմին կինը երբեք չի ենթարկուել հպանցիկ, մոզայիկ հողերի գայթակղութեանը, միշտ մնացել է ինքն իր հետ, չի շեղուել ստեղծագործական ճշմարիտ ճանապարհից՝ հողերանական օճախից: Ճմլուէլ է սիրտը շարք տեսնելիս, դառնացել է վշտացել, բայց չի յուսահատուել, պահել է հոգու լոյսը, լուստեսութիւնը մարդու ճակատագրի կանգնելով, հուստացել է մարդկային բանականութեան լոյս յաղթանակին, որին եւ նուիրել է իր քնարը: Բանաստեղծուհու վերջերս լոյս տեսած գիրքը կրում է «Նուիրումներ» խորագիրը: Հաջիւ թէ կարելի լինի աւելի տարողունակ բան գտնել՝ նժարելու համար բանաստեղծուհու ապրած օրերի բարոյական արդիւնքը, քան այդ արել է ինքը՝ ընտրելով «Նուիրումներ» վերնագրութիւնը:

Սովետահայ բանաստեղծական քնարը բազմազան է, բազմաձայն: Այդ մեծ համաձայնագրում լսելի են դարձնանային հողերի շուռի ու շըռու, լեռնային զուլայ

աղբերների ախորժալուր մրմունջներ, կանաչ տերեւների սօսափիւն, բրոնզակուռ ժայռերից ընկնող փրփրաբաշ ջրովիճների շառաշ, երկինք մխրճուած լեռնադազանների փայտապակող շանթ ու կայծակի որոտ ու գլխից, եւ սովէն բանաստեղծ իր աւանդն ունի այստեղ: Մարո Մարգարեանը հպում է այդ քնարի սովանուրբ լարին, որտեղից էլ ծնում են նրա երգ-մրմունջները: Եւ սա բանաստեղծական գիտաւորութիւն չէ բնաւ, այլ՝ բնական վիճակ, նրա էութիւնը:

Մարո Մարգարեանը թղթին է յանձնում իր երակներում հոտող արեան ձայնը, յանձնում է տնայիկ շոյանքով, որ քննիչը ցոյց տալով իր յայտնում է մեղմանուշ նուազով եւ վերջինիս թում է, թէ ինքն է նուազում եւ ոչ թէ լում մէկ ուրիշից: Մտերմութեան այն տաք շունչը, որ կայ Մարո Մարգարեանի հատընտիր տաղերում, ջրում է սովէն պայմանականութիւն եւ ծածկում բանաստեղծ-ընթացող տարածքը, եւ թում է՝ ինքը ջեղ հետ եւ խօսում: Գիտակցաբար, թէ արուեստագործական անսխալական բնագլխի շնորհիւ տանամետներ առաջ բանաստեղծուհին իր տաղին գիրքը խորագրեց «Մանրամարտ», այս հասկացութեան մէջ ամփոփելով իր պոետիայի ոգին: Հետագայ տարիների ստեղծագործութիւնները աւելի ու աւելի զորացրին այս ոգին, թանձրացրին, հաղորդեցին բիւրեղային պարզութիւն:

Ապրումների նախասկիզբ մաքրութիւն, անմիջականութիւն ու անկեղծութիւն, մի ինչ-որ անբառաստեղծ ջերմ զգացում՝ անշառայ, աննկատ, մեղմօրէն հոտում է բանաստեղծուհու սուգերի խորքից, լցում է ընթացողի սիրտը, եւ վերջինս չի էլ նկատում օտարի ներկայութիւնը: Թում է սունն է գարնել հարազատ մի հազի, սովէն կարգի սեթեւանքներից, ինքնաբաւ կեցուածքներից զերծ մանկամարդ մի աղջիկ, որ խնդ է բերել իր հետ: Առաջին գրքով Մարո Մարգարեանը բերում էր հայրենի բնաշխարհի գեղի ուր, հողի ու ծաղիկի բոյրը: Տարիներ յետոյ նա սրէտք է թղթին յանձնել

այն պատկերը, թէ ինչ կերպարանքով է
ինքը ներկայացնել ժարդկանց .

Գաշտավ մեծակ, դաշտավ մերկ,
Զեռուներով ամեզերէ,
Ձնայելով ֆարերիմ,
Մացառների փշերիմ
վազում էր լուս մի սղորիկ
Միաժանը փշերիմ :

Այս գողտրիկ գեղանկար պատկերը
միևնոյն ժամանակ եւ երգ է, գուշակ մի
մեղեդի, որը հաստատում է ո՛չ միայն ի-
րանկանութիւնը ընկալելու անմիջականու-
թիւնը, ընկալումը գեղարուեստորէն
թանձրացնելու ունակութիւնը, այլեւ՝ ա-
նորալի ակնթարթը որսալու բանաստեղ-
ծուհու բնածին շնորհը, որով գտնում է
այն թանկագինը, ինչը անուանում է բա-
նաստեղծական գիւտ («Միաժանը փշե-
րիմ») : Աւելի՛ն՝ Մարօ Մարգարեանը խօ-
սում է գեղանկարչութեան լեզուով, բա-
ռերին հաղորդում է գոյն ու նրբերանգ,
համադրում դրանք ակթերի գաշտու-
թեամբ :

Ի գէպ, գեղանկարչութեան մասին :
Տակաւին դարձական տարիներից Մարօ
Մարգարեանը ունեցել է գեղեցիկ ար-
ւեստների պաշտամունք, յատկապէս գե-
ղանկարչութեան : Սա նոյնպէս բնածին է
անհատի մէջ եւ ոչ՝ ստացական : Այս ի-
մաստով Հայրենի գիւղը (Շուշուկեր) հա-
զու թէ նպաստէր նրա գեղագիտական
ճաշակի ձեւաւորմանը, այն էլ 20ական
թուականներին : Գրական ու նկարչական
ձիրքը աղջկայ մօտ ի յայտ են եկել միա-
ժամանակ վաղ տարիքից : Մենդաժայրում
սկզբնական կրթութիւնն ստանալուց յե-
տոյ, Մարգարեանն ընդունում է Թիֆ-
լիսի նկարչական սեղանի մասնաճիւղը : Բաւական
տեւական մի միջոցի բանաստեղծն ու նը-
կարիչը անխոսով հարեանութեամբ ապ-
րում են Մարգարեանի էութեան խորքե-
րում : Ի վերջոյ յաղթում է բանաստեղ-
ծը : Այսուհանդերձ, նկարիչը ուղեկցում
է Մարգարեան-բանաստեղծին, յաճախ
զգացնել տալիս իր ներկայութիւնը, մա-
նուանգ բնապատկեր-տողերում : Յիրա-
ւի, Մարգարեանի բնապատկերները պա-
րուրւած են ակուսարեային թափանցիկ

չղարչով, դժի յտակութեամբ ու գոյնե-
րի ներդաշնակ համադրութեամբ երեւում
են եթերային նրբագեղութեամբ : Այստեղ
է, որ բանաստեղը կատարում է յուզա-
խարճը ժաբելու իր առաքելութիւնը :

Պատերազմ : Արիւն եւ աւեր . . .

Այս տարիներին գրուած բանաստեղ-
ծութիւնները 1945ին Մարգարեանն ամ-
փոփում է «Մօր մայնը» գրքում : Բանաս-
տեղծուհին արեւաարցունքի, կոտորած-
ների ու աւերումների պատկերներ չի գր-
ծում, արկերի ահեղաղորդ պայթիւն-
ներ չի գրանցում : Նա լուում է մօր մայ-
նը, այդ մայնի յուզական ելուէլների մէջ
հաղորդում ահեղ ժամանակների հեւքը,
ողբերգական հետեւանքները թողնելով
ընթերցողի ննթադրութեանը : Եւ ենթա-
գրականը յաճախ աւելի ուժգին է ցնցում
մարդուն, քան յուսանկարչական ճշգրե-
տութեամբ ներկայացուած իրական պատ-
կերը : Կան սակաւաթիւ բանաստեղծու-
թիւններ, որոնք չեն կարող լինել սոսկ
պոետական մտայնացման ծնունդ, «զըր-
ւած» են նախքան գրի առնելը : Գրանք
իջև տեսնելի ու ընթեռնելի չեն պարզ
հողիների համար, բայց գոյութիւն ու-
նեն, ապրում են աննիւթ տարածութեան
մէջ : Բանաստեղծները ւտեսնում ու կար-
գում են այդ անշուշափելի անանուն մի
զգայարանով, որում եւ յանձնում թըղ-
թին : Այս կարգի գործերից է Մարօ Մար-
գարեանի «Օջախի առաջ» բանաստեղծու-
թիւնը : Մօր մայնի մէջ յայտնաւանջ ելե-
ւէջներ չկան : Դա թէեւ բնական, բայց
սովորական հողիներին է յատուկ : Մար-
գարեանի մայրը հզօր կերպար է : Նրա
աչքերին արցունք չկայ, ոչ իսկ շուրթե-
րին՝ նզովք : Նրա էութեան խորքերից
յորդում է լոյսը, բարձրանում օջախի
կրակը, ժողովրդի գոյութեան խորհրդա-
նիշ ծուխը ծխանի, բարու անխուսափելի
յաղթութեան խորունկ հաւատը :

Ասես ծնկաչոք դիւ փշում է նա,
Որ կայծը կպչի ու կրակ դառնայ,
Որ կրակ դառնայ ու ծուխ բարձրանայ,
Որ խաչազ ծխի
Մուխն իր օջախի,
Որ լուսաբացիմ
Բաց լինի գուռը

Ու երբ Յիսուս մտնի
 Աստուծոյ հիւրը,
 Անպակաս լինի
 Մի թաս ապուրը
 Մի թուռ տափ ջուրը,
 Մեկակ թէ ծխի
 Մուխը օջախի,
 Մեկակ թէ Աստուած
 Բաց պահի զուրը:

Մարգարեանի կերտած մօր կերպարը դարերի հետուններից քայլող, լոյսով ու բարութեամբ ծանրաբեռ հայ կնոջ հաւատարման խոսքում է, աշխարհի բոլոր մայրերի նուիրական գլխադրումների արձանագրութիւն՝ ազգային թանկարժեքների արձանագրութիւն է, որին հասնելու երջանկութիւնն է ունեցել բանաստեղծուհին, այն է՝ անյայտակոտ, անզարդ բուերի ջինջ համադրումով: Մարգարեանը գիտակցաբար խուսափում է երկարաշունչ ստղերից ու փոքրիկ պատումներից: Մայրազայն սեղմութեան հասնելու ձգտումը կենսական անհրաժեշտութիւն է պարզապէս նրա համար: Այս պարագան առանձնապատուկ հմայք է հաղորդում նրա ստեղծագործութեանը:

Իր սեղմ ստղերի մէջ բանաստեղծուհին ներդնում է այնքան միտք ու սիրտ, որ կարող է տարբարուծուել ընդարձակ շարադրանքի մէջ՝ եւ չկորցնել ներդրածութեան ուժը: Դարաւոր պոեզիան ինչ զոյներով միայն չի ներբողել հայրենի հողը: Բանաստեղծուհին դանում է սեփական երանգը՝ առանց հեռանալու ինքն իրենից, հայկական քնարի ի վերուստ իրեն սահմանուած լարից:

Դու մի բաւա, մի ամբ,
 Դու մի սրտի չափ,
 Դու սրտի պէս լայն,
 Դու սրտի պէս խոր
 Հայրենի իմ հող:
 Ակունք բարիքի
 Բայրի ու բերքի
 Խոսքում իմ սէր,
 Իմ հրաշք երկիր,
 Դու սր բաւա, մի ամբ,
 Դու մի սրտի չափ:

Եւ սա հատուած չէ, բանաստեղծութիւն է ամբողջ...:

Մարո Մարգարեանի պոետական հասունացումը զուգահեռեց 50-60ական թրւականներին սովետահայ գեղարուեստական մասնագութեան մէջ կատարուած արժատական տեղաշարժերին: Մէկ տասնամեակում բանաստեղծուհին հրապարակ հանեց «Ձնհալից յետոյ» եւ «Լցուած լառքիւն» ժողովածուները: Այս զբօսըրում Մարգարեանը ներկայացաւ ընթերցողին պոետական աւարտուն զիմանկարով՝ բուն տարերքով, գրելու ծայր յատկութեամբ, քնդգրկումների շուտուիդով, վերջապէս՝ իր բուն ստեղծով, իր մշտումներիով, երազներիով, թախիծներիով ու խինդով: Այս զբօսըրում էր, որ սասց իր խօսքը համարձակ, աներկիւղ, բաղաբացիական կրթութեամբ: Այս ամէնի հարաւորութիւնը տուեց, անշուտ, իմաստանցած ժամանակը, որին «Ձնհալից յետոյ» տարողունակ բաւերով կնքեց բանաստեղծուհին: Բանաստեղծուհին դէն նետեց իր ուսերից ժամանակների կարծրացած նախապաշարուծները, որոնց հարկատու շեղաւ թէւ, բայց կրկն զբանց ծանրութիւնը իր պայտուն սրտի վրայ:

«Ձնհալից յետոյ» զբօսում արձագանգ էն գտել ժամանակակից մարդ-անհատի հողեկան տուայտանքները, անհատ, որն օժտուած է բանականութեան զօրութեամբ, զերգզայուն է, նրբամիտ, անմնացորդ տրուած ճշմարտութեանը, արդարութեան հանդէպ լցուած է խորունկ հաւատով: Մարգարեանի մեղմ, սնծիչ ստղերի խորքից յառնում է բանաստեղծուհու քաղաքացիական կիրքը, խաւարը մերժելու, լոյսը սատարելու, անբանականի դէմ ուղղուած հուժկու ճիւղը: Արդարութեանը հետամուտ բանաստեղծուհին յետադարձ ակնարկով զննում է ճշմարտութիւնը տանող տատակոտ ճանապարհը, որ վիճակուեց անցնելու իր սերնդակիցներին: Այս ընթացքի մէջ բանաստեղծական մէկից աւելի դիտերը ընկալուած են իբրեւ ամբողջութիւն: «Իմ սերունդն ամբողջ եղիւմի մէջ է, նշանակում է ցրտեր են եղել», անամբ ցաւով ասում է բանաստեղծուհին, եւ նրա խօս-

քերը արձագանգուում են ոչ միայն պարտեր տեսած» մարդկանց սրտերում:

Բանաստեղծի խորքից լսելի է բանաստեղծուհու բողոքի ձայնը՝ ընդդէմ կեանքի կոպիտ արամարանութեան, որին բարւում է ճշմարտութեան նրա իղէայլը:

Ճառագայթն անշնչ բեկուելիս ամզամ,
Ուղիղ գծով է կտարւում, սահում...

Արդ, ինչո՞ւ է կեանքում ծոմուում այդ ճուղիղ գիծը: Այս հարցը, քիչ է ասել, մասնագում է բանաստեղծուհուն, պարզապէս փոթորկում է նրա հոգին ու միտքը: Նա տեսնուողին որոնում է պատասխանը, որը եւ չի ունենում:

Ցաւում է սիրոս անգորութիւնից,
Եւ անգործների հզօրութիւնից,
Անկարողների յայտ հարեմալուց
Եւ անգործների գործելուց անվերջ:

Յիրաւի կեանքում գոյատևող շարքի է ինչպիսի գործը թանձրացում-պատկեր, զգաստացնող խիզախ մի կանչ ազնուութեանն ու արդարութեանը փարուած մարդկանց ակնոյնին: Իրօք, հիացմունք է պատճառում առեւտրի ենթարնադրային հարստութիւնը՝ խորունկ խորհուրդը, որ խիզոն հասնում է ընթերցողին: Անթը-տարկելի են մարդու զգացմունքները, մա՛նւանդ բանաստեղծ հոգիներին, եւ մարդկային լեզուն ոչ բոլորի համար տուններ ունի: Մարդարեանին յաճախ է մտահոգում այս անհամաչափութիւնը՝ զգայութիւնների անսահմանութիւնը եւ բոտերի սահմանափակութիւնը: Նրան յաճախ այնպէս է թւում, թէ անկատար է մնացել իր առեւտրի եւ ասում է նորից ու նորից, ստեղծում վարիացիաների մի շղթայ կամ էսֆիզներ մի շարք, ձգտելով հասնել երևույթների խորքերի խորքը: Ստեղծագործական որոնումների այս ընթացքում յարանմանութեան պատրանք կայ — արտաքին կեղեցից, բայց ոչ երբևէ՝ յարակրկնութիւն: Իւրաքանչիւր տարբերակում ի յայտ են գալիս նոր, թարմ համարումներ:

Ձափարի տակ եղիճքի մէջ
Մանուշակն է գլուխ հաճել,
Շուրջը փշեր, շուրջը խիճեր,
Կառ ու կորուկ գառն ու լեզի,
Ու մագաւոներ չոր ու դեղին:
Եւ փշերին թւում է թէ
Ճիշդ է ողբը բնութեամ մէջ,
Լոկ մանուշակն է անտեղի:

Առեւտրի իմաստով այս բանաստեղծութիւնը եւ վերը բերուած ճմաւում է սիրտը... քառասուցը, որի թէ նոյնն են, բայց յոյզերի համադրութեամբ որքան հեռու են իրարից: Հնարաւոր չէ պարզապէս անտեսել Մարօ Մարգարեանի պոետական արուեստի այս առանձնայատկութիւնը, որ, երբեմն ճիշդ չընկալելով՝ վերագրում են յարակրկնութեանը:

Մարօ Մարգարեանի բանաստեղծութիւններից շատերը հոգեբանական էտիկաներ են յիշեցնում: Դրանք իւրօրինակ մեխանիզմներ են, ինքնախոտոտվածութիւններ, ծայրագոյնս անկեղծ ու անմիջական, որքան կարող է անհասը անկեղծ լինել ինքն իր հետ մեխանիզմնային:

Ամէն ինչ թողի, թողի ես վազումս,
Բայց ետեւից էլ վազ չի մնացել:
Միշտ կարծում էի, թէ սկիզբն է դեռ
Ու նոր պիտի գամ երգերն իսկական:
Նայում եմ հոգուս յոգնած ու անսէր,
Էլ թեքու տող ու տող չի մնացել:
Ամէն ինչ թողի, թողի ես վազումս,
Բայց ետեւից էլ վազ չի մնացել:

Բանաստեղծական այս ինքնախոտոտութիւնը անսահման լայնութիւն ունի: Եւ զժուար թէ հնարաւոր լինի հանդիպել նրբամիտ ու զգայուն մի անհատի, որին չհամակի այս նոյն զգացմունքը: Սա արդէն, այսպէս կոչուած, յոյժ անմնական քնարերգութեան գառակն այն բիրեղային օրինակներից է, որ խոսացնում է հանրութեան համահասարակ զգացողութիւնը:

Մարօ Մարգարեանի պոետական գիտմանկարը առաւել վառ գոյներով յայտնուում է զեցում լաւութիւնս խորախորհուրդ վերնագրով գրքում: Լուսութիւններ կան, որ ցնցում են մարդու հոգին: Այս-

պիտի ցնցող «յուսուժիւն» է այս ժողովա-
 ծուն, որի մէջ զետեղուած բանաստեղ-
 ծութիւնները հաստատում են մարդկա-
 յին հոգու խորքերին սեւեռած ակնարկի,
 զալիք տեսնելու եւ գալիքի լոյսով ներ-
 կան լուսաւորելու, ապա եւ սրբազգելու,
 յղկելու բանաստեղծական կարելիութիւն-
 ների սահմանները, անտեսանելին տես-
 նելու հմտութիւնը: Գոյների ու երանգ-
 ների միջոց նոր ու իմաստաւոր համա-
 զրութիւնները մշտահոյով սրամազրու-
 թիւններէ յարափոխ հիւսուածքը, նա-
 խակիչը մաքրութեամբ շերտութիւնն ու
 շունչը բնորոշ են «Լցուած լուսփուն» ժո-
 ղովածուին: Եւ բանաստեղծական առդի-
 փայլն է ակնյայտ այտեղ: Ժողովածուն
 մի մեծ մենախօսութիւն է որոշակի ժա-
 մանակի ու տարածութեան մէջ: Կարոտ-
 ներով ու ապակասկերով է հարուստ գիր-
 քը: Բանաստեղծուհու միտքը սեւեռուած
 է մարդկութեան ճակատազգին, վաղուայ
 օրուն: Եւ սրովհետեւ գալիքը ոչ միշտ
 է յոտակ, ապա բանաստեղծուհու ճակա-
 տին յանախ մուսյլ ստուերներ են իջնում:
 Բանաստեղծուհին ստեղծագործ մտքի
 գերլարումով ցրում է մութը եւ կրկին
 յայտնում իր լոյս աշխարհի թագաւո-
 րութեան սահմաններում: Բանաստեղ-
 ծական անուպասելի ու անտիկալ դիւա-
 պատկերները լուսաւորում են բանաստեղ-
 ծուհու աշխարհը, Թանձրացնում անելիք
 խօսքը:

Սիրամիւսից շագախեցի
 Իմ, Աստուած
 Եւ դրեցիր տարածութեամբ մէջ ամառ:

«Լեյսամբ նիւթից» իր շագախը կըր-
 կին զարնում է զանաէր տարածութեա-
 նը եւ այդ բախումից ծնւում է բանա-
 ստեղծուհու ներքին գրաման: Իններդաշ-
 նակութիւնից դէպի ներդաշնակութիւնը,
 — սա՛ է այն ուղին, որ ընտրում է բա-
 նաստեղծուհին իր համար: Եւ ընթանում
 է հրաշք-յայտնութեան անաւեր հուա-
 առով: Անցնելով անհնարին տառապանք-
 ների միջով՝ նրա սիրտը լցում է լուսա-
 տեսութեամբ:

Դու կը գաս ուրիշ մուրալից,
 Երբ ես այստեղից մեկնած կը լինեմ...
 Եւ արդէն առանց խարխափումների,
 Եւ արդէն առանց
 Դրժուտի,
 Դաւի:

«Լցուած լուսփուն» գրքում աւելի քան
 նախորդ ժողովածուներում պայծառ է ե-
 րեւում գեղանկարիչը բանաստեղծուհու
 մէջ: Գծերի, կոմպոզիցիաների գրաֆիկ
 յստակութիւնը, գոյների նրբերանգների
 կայծկլտուն խաղը Մարգարեանի քնարին
 հազորդում են մի տաք, վարակիչ հմայք:
 Մարօ Մարգարեանը ստեղծագործա-
 կան իր յիմնածեայ տեւական ճանապարհն
 անցել է անարիտուր նուիրումներով: Իր
 ստեղծագործական ճանապարհի խոս-
 ցումն ու հաշուեկէտն է վերջին՝ «Նախ-
 բումներ» գիրքը:
 Բանաստեղծուհին կրկին ինքն իր հետ
 է, իր աշխարհում:

Ես ոչ մի տառով
 Չգաւեցի ի՞նձ
 Ու Խարուստ եղայ
 Իմ քաժին էջով:

«Նախբումներ» գրքում բանաստեղ-
 ծուհին դառնում է անցեալին, խոր ան-
 զուսնաների եզրերին «ճաղիկ զարձած» իր
 օրերին, կարօտներին ու երազանքներին,
 հայրենի խրճիթին ու բնութեանը, վեր-
 ջապէս՝ անդառնալի կորուստներին եւ այս
 ամէնը լուսաւորում միշտ առաջ վազող
 ժամանակի բարձունքից, լուսաւորում ո՛չ
 այնքան ներկայիս, որքան գալիքների
 լոյսով՝ սրտում պահած «լուսնիկն, ար-
 զար կեանքի» երազանքը: Բանաստեղծու-
 հին յոտակ տեսնում ու գիտակցում է,
 որ կեանքի կոպիտ ու ամբարտաւան տը-
 րամարածութիւնը իրենն է պարտադրում,
 թոյլ չի տալիս «հոգու եւ նիւթի շարժու-
 մը պահել ու ներդաշնակել» (այտեղից
 էլ զերզգայուն անհատի ցուն ու տառա-
 պանքը, նրա հոգեկան դրաման), բայց
 յուսալքումի ծանր զգացողութիւն չի ապ-
 րում, չի հանգցնում հոգու կանթեղը,

Հաւատում է մարդկութեան ապագային, սրովհետեւ՝

Աշխարհի մթին ճամբէքի վրայ Մեծ հագինքի հրկիզումներով, Մեծ սրտերով են ջահերը վառուած:

Եւ ու իրատեսութիւն է, եւ ոչ՝ երեւակայութեան ստեղծած պատրանքը: Այդ մեծ հողիներին է ձօնել բանաստեղծուհին՝ իր ճշմարտութիւնը, արուեստն ամբողջովին:

Իրատես, յեպիստ է Մարո Մարգարեանը եւ նրա գործերը այլ բան չեն, քան իրականութեան անզբաղարձումները՝

դժուած սեփական երանգազնակի թափանցիկ, շղարշային ներկերով: Մարգարեանն ունի իր հայրենի հողի բոյրն ու հմայքն ունի. այն տակի է թանձրացել ճշմարտութեան զրքում:

Գուցէ այս գիրքը բանաստեղծական տողի, պոետական անակնկալ գիւտերի, շիկացման ջերմաստիճանի առումով մի աննշան չափով գիջում է նախորդ երկու գրքերին, սակայն առաւել է թուում գոյների խոսքումներով, խոսքի բիւրեղեայ մաքրութեամբ, նրբին երանգներով, նոր յանդիմաններով այն պէտքերով ու գոգարիկ աշխարհին, որ իրենն է. բանաստեղծուհի Մարո Մարգարեանինը:

ԳԻՐԳ ԱՐԱՋԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԵՒԱՆԻՍ

Հնորիակալ եմ, որ դու ամէն օր Գալիս նստում ես քո սեղանի մօտ, Որ դու միշտ այդպէս լուս ես ու խաղաղ եւ քո յոգնարեկ հայեացքի խորքում Ինչ-որ մի անդորր կայ լուսաշաղաղ: Որ դու սրտագին ճառեր չես ասում, Մարդասիրութեան մորայի մասին, Որ լուս աշխատելն ես գերադասում, Քար քարի դրած ապրելով հապիւ, Որ դու անձնուէր, որ դու անձնուրաց, Ընտրեալների դերեր չես խաղում. Բարերարի պարտք չես ամել վրադ Ու շուրջդ ոչինչ չես աղավաղում: Որ չես որոշել «նուփրուել» մարդկանց եւ աշխարհին մեծ շնորհներ անել, Ու ցուցադրած զանձերը հոգուդ Փառքի մրցանակ չես ուզում տանել: Որ դու մի խաղաղ մարդ ես պարզապէս, Անաղմուկ սիրով համեստ ու լռիկ, Որ ես շատ մօտիկ հարեան եմ քեզ... — Հնորիակալ եմ ճակատագրից:



Ե՛նք ակօսեցինք մեր սիրտը յոգնած, Փշրած սէրերի սուր բեկորներով,

Եւ ատելութեամբ անստորագիր, Եւ չարտայայտած ցասումի սեպեր Նեարդերի խորքում: Ջանացինք խաղաղ ծափտով ներկել Մտայլը հողու, Եւ ապաւինել անտարբերութեան Զէնքին՝ խութեամբ ամենակարող. Եւ գուցէ եղանք Հարկադիր համեստ, Ակամայ ներող:



Խշիշում է ականջիս տակ Մորմոքում է պաղ մի կարօտ. Ո՞վ է այսպէս անխիշատակ, Անդարձ գնում այս առաւօտ: Վիշտն ինչ-որ տեղ սիրտ է փլում, Կեանքն ինչ-որ տեղ կամք է ծալում, Ո՞վ է այս խուլ բառերն հալում Ու տալիս իմ վարկերակին. Ալեկոծում նոր մղումով Անհանգիստը իմ եռակի, Ո՞վ է այս խուլ բառերն հալում, Ո՞րտեղից է երգն այս յուշած՝ Նեարդերըս են նախագուշակ Ուրիշի ցանն են ընկալում:

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Շ. Տ Ա Ս Ն Ա Պ Ե Տ Ե Ա Ն

ԵՂԻԱՅԻ «ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ»,
ՄԵՆՔ ԵՒ ՈՒՐԻԾՆԻՐ

*Equally human, equally divine
Shakespeare (Othello)*

Եղիա «գրող» ժը չէ՛: Մ. Շամտանճեանի եւ Ա. Անտոնեանի ուղղուած նամակով (4 Օգոստոս 1889, Բերա), ինք բացարձակօրէն կը մերժէ այս գաղափարը: Շամտանճեան եւ Անտոնեան խնդրեր են իրմէ կենսապրակն տեղեկութիւններ եւ լուսանկարներ: Նամակէն կրկին յիշեմ հետեւեալը. «Կեանքը աւ կեանքը աւ կրկին գրուածներու մէջ են, ի մասնաւորի վիպակներու ու տաղերու մէջ (շատերն անտիպ), պատմուած»: Կարելի չէ՛ Եղիայի կեանքը բաժնել իր դիրքէն: Եղիայի գրականութիւնը, զոր ինք կը համարէ ծնունդ սիրոյ ու վշտի, իր կեանքն իսկ է՛, իմքնակենսագրակամը: Տէմիքնիպաշէանի կեանքը՝ Եղիայի բոլոր մերժումներէն անդին, ի՛ր էջերուն հետ միանո՛յլ: Ահա թէ ինչու կը զարմանայ. «Ենչ»-ը կ'ազգէ կրկին կատարել աշխատանք մը՝ արդէն կատարուած, եւ որ այդ անուղակի սեւին մէջ՝ ու եմքակային սեւոք իսկ կատարուած՝ Ձերինէն աւելի հոգեբանական արժէք անշուշտ կըրնայ ունենալ»:

Հակասութեան ժը արդիւնք է այս խօսքը նաեւ. ի սկզբանէ ուրեմն, պատկեր «Հողերանական» նուազի: Բայց ինչպէ՞ս լուի, երբ Եղիա իր մերժումով իսկ կը թելադրէ ինծի «չաղակրատութիւն» այս (բառը իրեն կը պատկանի): Սոյն գրութիւնը փորձ մըն է լուի, վերեւը յիշուած արգելքով իսկ աւելի՛ հաճոյալի, հասարակի: Պէտք չէ ընկղմել բառերու թելադրած գիտնվութեան ժը մէջ: Ու պարզ է, որ Եղիա (միշտ ողջ) պիտի մի՛շտ մնայ ոչ-զոհ, այլ՝ անյաղ, Ոչ մէկ պատկեր կ'ընայ զինք ըսել վերջնական: Ոչ մէկ կենդանադիր իրենը պիտի ըլլայ յաւիտեան: Բայ Հորիզոնին վրայ, այս փորձը իմ կողմէ ընտրուած կարելիութիւն մըն է առ առաւել, երբե՛ք ստոյգ, վաւերականօրէն վերջակէտ:

Բայց ահա մօտիկ ենք «ինքնակենսագրական» խաղին, անոր սահմանման, ուր կ'ընդունինք այն հետաւորութիւնը (Եղիա զայն պարտադրաբար կ'ընդունի նաեւ), որ սկզբնաւորը (original) կ'անջատէ հետեւողութենէն (imitation): Այս գրութիւնը հայեցիին միւս երեսն է, որ նմանողութիւնն է ուրեմն, նո՛յն:

Պիրք ժը, վերջ ի վերջոյ, խոստովանանք է: Մարդ պատմութիւն մըն է, որ կ'ազգէ փոխանցելու Բայց այս փոխանցումը կ'ենթադրէ արդէն օտարացում ժը զբողի անձին իսկ նկատմամբ, իր իսկ հետքի կամ ստեղծած «Հերոս»ի առաջնութեամբ: Խոստովանանք մըն է՛, նաեւ՝ առանձնաշնորհաւ յիշատակ: Ո՞վ է, որ կ'ընայ պիս ըսել (կամ՝ Եղիան) այնքան հարազատ, որքան ես (որ հիմա կը գրեմ)(1): Հոս կը սկսի ինքնակենսագրութիւնը, իրական, պատմուող, կրկնուող ու շարժուն, կամ՝ «չաղակրատութիւն» եւ «խոստովանանք» Մուսան Եղիայի(2):

Արձակ, բանաստեղծութիւն թէ քրոնիկ, միեւնոյնն է Հարցը: «Հոգեկան վիճակ» մը կայ(3), ապրուած-չապրուած դաշտը զոյին, անձնականացուած կացութիւն մը ժարդկային, պրոգնէ մը, որ կը կազմաւորէ եւ կը կառուցանէ «Մտնումիկ օրագիր» մը(4), որ կը գրարկէ՝ անձնականութիւն մը, ծրագիր մը, եւ կ'ենթադրէ ինքնափորձարկում, խղճի մը վերծանում, օտարացում ու դարձ դէպի «ես», գէպի Մոնտզն (Եղիայի այլազան ծածկանուններէն մին), որ կը խորհի՝ 3 կ'ուզէ շարժիլ, ստիպուած է աշխատիլ... անկարող մի՛շտ «լուծել առեղծուածն»: Եղիա Շիւանդ է. բայց չի բաղձար առողջութիւն: Ինքնակենսադրութիւնն իր վիշտն է, նման անոր, որ «յաւէտ պիտի ձայնեցէր դառնեղէ՛ր. «Վշտայարչար»...»: Կը յիշէ մայրն ու Պարընը, ու միայնակ, «ի ներքս ի խցիկին յանզոյս կը կրէ Երագի մը ձգողականութիւնը»: Եւ ետին կը գտնայ յափշտակեալ աշօք դիտել Օպէրի Երագն կամ ԱնրՎախՏութիւնն (Réverie)...»(5):

Այդ 18 Փետրուար 1892էն (Գտարքէօյ), Եղիայի կը մնայ արցունքի կաթիլ մը, որ «բանային» է իր յճարն, պատկերը, ուր կը ծնի, կիսատ ու ալ-լակերպ, իր ոսկորով ու միտով, եւ ի՛ր խղճով ու մտքով: Կը մտերմանայ ինքն իրեն հետ. երկար ներքին բացակայութենէ ետք, կը վերադառնայ ան մեզի, խօսելու, պնդելու, յայտնելու, ունենալու, գովերգելու իր «ես»երը վշտոտ, այլ՝ հեշտա: Գնա փակելու, կնքելու դաշինք մը՝ ոչ անպայման մարդոց հետ, այլ՝ Երագին, աղկան մը անորոշ, գիրերուն, աստուածներուն բազմաձև: ԶԱՅՏՈՒԹԻՒՆ:



Ինքնակենսադրութիւն: Մտերմութիւն, լացուկոծ: Անողջ ցաւ՝ Եղիայի Համար. «Գրիչս մէկդի մետեցի ու լացի. լացի իգական այն հօրագոյն լացը գոր կու լայ մայր մը, որուն անդրանիկ գաւալը ծննդաբերութեամ պահած մեռաւ, ու որ այ յայտ շուներ գաւալ ունենալու»(6):

Անձանթն է (ինք՝ սիրահարը անոր), որ կը յուզէ, «Կ'իլնէ դէմք, եւ ըզէնք անբացարելի կերպի կը յուզէ, և ըզէնք կը վերածէ, յարու մտար սնդանիմ առջև կը տեսնեմք փահանայն՝ սևեղ խորհուրդոյն կատարման ժամանակ...»(7): Ինքնակենսագիրն կը սիրէ ցաւը՝ «դուստր սիրոյ, քոյր տրտաւաց, — երկնից անտարակոյս գերագոյն պարզեմ առ մարգն»(8): Հոս կը բացուի նմանողութիւններու այլօրինակ ցանցը. կը ծրագրակին, կը ծնին ու կ'անին: Ես իրեն հետ կը գտնամ «բառասուտան»: Կ'ըլլամ Մայիս, Սրբուհի, ամուսնուսդան Վարդուհի, Տիւսար, էլէն, ԶԱՅՏՈՒՂԻ:

Օտեան կը գրէր Եղիային. «Իմ միայն ի պաշտօնէ անհատաւ ես, Եւստացեալ ես դու...: Սրտիդ քոյր ձգտումները, հոգեւոյդ քոյր խանդը, իմչ որ ի քեզ է գոյութիւն եւ կիսեմ. եւ սէր, կը վառի, կը ծախսի անտեսանելոյն, անպարագրելոյն տեղնովը»: Երթը նո՛յնն է, ՎԱՐԴՆԻՆ ԱՍՏՈՒԿՈՒ, կամ՝ yin եւ yang: Պոյն կ'ապրէր անիկա, ոչէութեան գրկին մէջ, լուսնի լոյսին շուարուն, տարօրինակ ու հիւանդ: Հա՛յ տակաւին ու ժօտիկ Արարչին(9): «Հնճ, սրբիլիս, հոն կ'ազմն ար տանին գիտ»: Մի՛ մոռնար դիւ, réverie:

Երբ ուրիշ մը կ'ըսէ. «Is live worth living ?», Եղիան է, նա՛ն: Ինքնագրութիւն, երգեցիկ սահակրիտ, շարունակելի՝ մահէն ալ անդին: Ուսմունք եւ շուղմունք: Ան ինձի կ'ըսէ. «եսoubցէ՛ք, ո՛ր հիւանդ կաթիլք երկնայնիլք հոսցէ՛ք, արտատա՛ր տաղտաւամբիկ հրեշտակաց. ե՛՛գ հայ պանդուխտիմ վրայ հոսցէ՛ք՝ յիւր եւ ի ձեր սփոփանա: Հէ՛գ հայ պանդուխտիմ վրայ, քանզի Ռաւ. չեմ բաւեր ուտեմոյն արատաւեմ: Եւ դու, երգէ՛, սիրահալ աղջի՛կ; որպէս գի լամ ընդ քեզ եւ ընդ իս ուտեմիք, որպէս լամ երկինք...: Տոց

willow, willow, willow... (10): Կենսադրութիւն, յարութիւն, որ կը սփռուի շատ սրտեր, կը նորաստեղծէ անոնց անձինքը տրտում, միւս «Տրտունջ»-ի լաւազին ու սրտազեղ լարերով: Անձանօթին ծարաւի, Նիրվանայից կարօտի-սէրերու, վարդերու եւ վերքերու զգուանքի կեղծիքին մէջ ամայի՝

«Ու պապական վը մահուան, երնդի՛կ, քեզի՛ր ճայնեցի
Յայտնէ՛ր իմծի... Սակայն դու աստուածօրէն կը լրանս-
լուսացայտ մատրդ միայն ինձ ցայց կու տայ գոհամուէր
Պարսմը տուրք՝ զօր բու մահդ իմ վախճանիս կրտակեց.
Կը հասկնամ թէ անոր շուրջը ինչ է միայն
Որ սիրտս բսփիմքը կ'ըլլայ, վիշտս գազտնիքը անոր
Եւ ես գոհի մը ցրծթոզ մեծերիմ պէս կը հասնիմ
Նիրվանայիդ եւ քեզի, յաւերժակա՛ն հանգիստիմ(11)»:

...■...Սիրտն արդ կը փղձկի. այլ կենսադրութեան մը թելերուն մէջ
խորասոյգ. քերթողի զոհարեման այս առթիւ: Ու կը հասնիս գաղտնագաղտ-
նիք բերկրանքին, մահէն հտք կամ առաջ:

«Եւ բանամ սիրտս, զի հոն, Յիսուսդ իմ, հանգչիս...» (12):
Հոգ չէ՛: Խօսի մեծ վարդապետն Նիրվանայ՝
«Սէր ճշմարիտ- ա՛յլ ամենայն է ոչինչ.
Սէ՛ր աւետեմ, սէ՛ր քարոզեմ, սէ՛ր շնչեմ.
Թէ սիրով կիսիք, երանեա՛լ էք յաւիտեան» (13):



Եղիա իր զբուսած քերթուն մէջ յաճակ կը խօսի «ենթակայական գրական-
նութեան» մասին (տե՛ս «Զարգացումն նոյն»), գիտնալով, որ միակն է ու
հազիւ թէ կը դիմէ ինքնարդարացման, քանի գիտէ, որ պիտի խաչուի կամ
փառաբանուի: «Հիւանդութիւնն» իսկ պէտք էր իրեն եւ կ'ուշէ, որ «Տաղցրիկ
բառ մ'այ հէ՛զ գրասէլս Առումին բժշկութեան համար» լսուի, Պոսֆորէն աս-
դին կամ անդին: «Ի՛նչ հիւանդի դիրք, ի՛նչ երանելի վիճակ», ոչ-քնազան-
ցական, այլ՝ հոգեբուական գիրքերէն դիտուած, «միամիտ» մանկան մը
կողմէ: Եղիա իր էջերէն շատերը զբեց Ազգային Հիւանդանոցին մէջ(14):

Ինքնակենսագրողիւրը կը վերյայտնուի: Բեմին վրայ, գերակատարներն
են Եղիա, միւսները (ծածկանուններ, աղջիկներ ու կիներ) եւ Աստուած: Հա-
ղորդակցութիւնը այս տարբերու գրաբովան մէջ է, որ կ'ըլլայ: Անոնք թար-
բերակցութեան մը մէջ են այն ուրիշին հետ, որ ընթերցողին է (կամ՝ ես):
Բայց թէ ինչու՞ մտորմիկ այս գրուցադրութեան մէջ չեշտը կը դբուի աստ-
ւածային գերակատարութեան վրայ(15): Քանի պէտք է անհետի շեռ (մահ-
ւան ցանկութիւն), քանի «միւս»ը հաստատելի չէ՛ բացարձակօրէն ու քո-
ղարկուած է երբեմն, կը մնայ երբորդ մը՝ Սիրտարթն կամ էն: Աստուածա-
յայտնութեան գրութիւն մըն է ինքնակենսագրականը, որ կը խօսի լինելու-
թեան վիշտը, գոյութեան névroseը Եղիայի: Յանկութիւնն է, տարածուն, ան-
յատակ. անունս: Տանջանքն է, յուշ-ցանկութիւնը «յաւերժագոյսիկ» մթասա-
ւեր գրողին, մտնազնին՝ որ յԱստուած: «Սէր բեր», կ'ըսէ Տէմիթրիկաչեանի
նոր credoն, ուր Նիրվանան Գրիստոսն է, որ կ'ըլլայ ներսը մտերմիկ մտնազնին՝

«Մարդ չը ծընիր քրիստոնեայ, Տէ՛ր: Կ'ըլլայ:
 Խաչիդ ճամբան, խիզն ընդ ոտիւք. ճակտին փուշ,
 Անոնք ըզմարդ, անո՞նք չիայն քրիստոնեայ
 Կ'ընեն: Գալու զհետ Քո ի լոյս կա՛մ մըշուշ,
 Պատրաստ եմ եւ արժանի — ո՛րք ալ ըլլա՛յ...»

Աստուածորդի է ճարգը: Եղիտ սակայն կը դառնայ իր Փանթազմին, ինք պրոպոզ չէ. այլ կ'ըսէ: Դասապարտեալն է, որ կը խօսի, ասեանին դէմ յանդիման: Կամ բարձրագոյն Խորանին Աստուծոյ: Էն կը խօսի ժեր շնորհն մէջ, անխուսափելի: Երթը աստուածարանական է: Այո՛, Եղիտ «Հիւանդ» է, ու «Հալածեալ»: Բայց հոս այլեւս հարմարաբար չէ զիս հետաքրքրողը, այլ՝ յարաբերակցական բանավէճը ուժական, որ ինք անդադար կը ստեղծէ ինծի հետ, եւ ուրիշին: Գրութիւնը բացարձակութիւնն է, ու կը յենի աստուածայինի խարխուհին:

Ինքնակենսագրականը վկայութիւնն է, ուր կը մնայ «մանուկ» մը, որ հակա-գրո՛ղն իսկ է: Յարափոփոխ, զգայնիկ: Որ մտերիմ օրագիր մը ունի (դադարի) բարձին սակ(16): Մտերիմ Օրագիր, որ ինքնակենսագրութեան ձեւն է ծայրագոյն, անձնակա՛ն, անտա՛շ, չի՛ հրատարակուիր: Ազատագրումն է (պատկերներու ցանց, նարկոտիկան Վիթաւս, պայծառութեան մը ի հաշիւ): Քողազերձու՛մ, ցոյացում: Կ'ընդլայնի, կը տարածուի, կը բացուի՝ հաւանական դառնութիւն մը ձգելով իր կտին (17), ambiguit: Կ'ուզէ կորոնցնել զիս — կը փրկէ: Կը ստեղծէ երեւակայականը, ուր միայն կը զգամ եւ կամ՝ կա՛մ: Ինքնակենսագրութիւնը ամէնէն մեծ fictionն է, ուսմանթիզմն է՝ յաւիտեանական, որ կը վերստեղծէ զիս քառսէն, աստուածութեան սկզբնաւոր պատկերին:

Եղիտ ինքզինք կը ծնի մինակ — ալ չի՛ կարօտիր ինքնագրութեան: Լուսածագ մը՝ կարծես: Չի՛ հաւատար biographismeին, որ տուտ է ու սուրը կը ծնի միայն: Ձունի կեանք, որ ըլլայ առկայի իր դրչէն, ու կը դառնայ պաշտօնակի՛ր «éveries»ին, որ հոգի՛ն է ու կ'ապրի՛ իբր խննթ, սէր, զաղանախորհուրդ ներշնչում կամ օրագրութիւն մտերմիկ (18):

ՇՈՒՇԻԿ ՏԱՄԱԳԵՏԵԱՆ

ՆՈՅԻՐ

- 1.- «On n'est jamais mieux servi que soi-même», Կ'ըսէ Փրանսուզի:
- 2.- «Մոմագո», «Լրեւելի», 29 Փետրուար 1892:
- 3.- «M. Amiel (1821-1881)», «Fragments d'un journal intime»:
- 4.- «Իմ գանգրեմութեան» մէջ Օրագիրս ու կը գրեմ, զոր չեմ անուշտ յաւանիք Ամիէլի ճեղքին օրագրին» հետ բազմապատկում...: Օրագրէս շատ բան չեմ գրիր. ծանուանեալ առաջ գրութիւններս ընդուն հաստատ սրտումս կը կտայնէ ձեռքս. ո՛հ, զանիս կրկանիկ պիտ' ըլլայի, «մամա», եթէ ձեռքս թիթեանիկ մը ու չիթուներ ձեռքիդ վրայ՝ տառի մը վրայ չը նստած դեմ՝ աչքերս օրօրիդ ձայնովս յուշիկ փակէի՛, ընդ միշտ փակէի՛...»: «Լրեւելի», «Մասիս», 9 Մարտ 1893:
- 5.- «Մոմագո», «Լրեւելի», 29 Փետրուար 1892:
- 6.- «Ենկեղեցի» ամէնուէն է, «Հայրենիք», 12 Յունուար 1892:
- 7.- «Ենտանականէ», «Մայիսի» շրջագայութիւնի եւ շաղկրատութիւնի (հասուածներ), «Մասիս», 26 Յունուար 1895:
- 8.- «Մարտ», «Մարտիկ», 11 Յունիս 1893:
- 9.- «Մեր Պոստորը», «Բիւզանդիոն», 5 Օգոստոս 1898:
- 10.- «Բուսնոյն» երգն, «Ազգայն» մը օրագիրը: Անգլերէն բաժնի՛ր՝ Shakespeare (Othello):

- 11.- «Տրուսուցիք, Օդիս Տէճիճիպաշեանին, Գանձէլ Վարուժան, «Հեքսանա երգեր», «Տրուսու Է անձ իմ միջև ի ձեռք Յիսուսի խօսք — հնթախորադրոջ»:
- 12.- «Առ Յիսուս» (բանաստեղծութիւն), «Ներկրագունտ», 1886, էջ 68 (գրուած՝ 1885թ):
- 13.- «Ներկրամա» (պատմական առ Յ. Սէթեան), «Ներկրագունտ», 1886, էջ 329 (գրուած՝ 1886թ):
- 14.- Այլ հոգեկան «հիւանդ» մը՝ Ատամով՝ իր ծառին կը գրէ «Bien sûr. Tout cela provient de la névrose, mais vous savez, même dans les pièces poétiques, la seule base certaine est presque toujours la névrose. Et je n'ai pas changé d'opinion, le seul problème est de savoir COMMENT UTILISER SES NEVROSES. Ici et Maintenant», 1964: Նոյնը կարելի է՝ Եւ Կրկնել Տէճիճիպաշեանի գրուած հանուփեան պարագային:
- 15.- ՏՆ՝ «Նոր կեանք», գրուած՝ Հոսպիւշ, 17 Ապրիլ 1886թ:
- 16.- ՏՆ՝ «Շահան Շահուր», «Կրակը կաշիս», «Մտերմիկ օրագիր», Բաղնայար «Յեռաք», Փարիզ, 1973:
- 17.- Ինչպէս կ'ըսէ Աճիլ իր Օրագրի վերլուարութեան «ni d'accord avec (lui) même, ni avec le monde, ni avec Dieu»:
- 18.- «Յո՛ իմ մտիս՝ կը գրեմ կամ գրականութիւն կ'ընեմ առանց գայտու, ինչպէս որ արեւը կը ծագի կամ (անհասկնալիս անհասկնալիս բարձր եզր) առանց կը հասի. երբ գիրքերս վար առնելով, երբ հեղինակներ հարցախոսելով գրեմ, եւ հոն չեմ, եւ այդ գրածիս մէջ չեմ, այդ գրուածն իմ չէ, խաբբ գտակ է: «Վերլուծում», «Մտիք», Պ Լճարտ 1892:
- Գուրգ Կրեւերիէն, գրին շատ ժամ կը գանձէ E. T. A. Hoffmann (1776-1822) «հասեալ յոչոչի» «Je ne parle pas du rêve qui surgit en nous lorsque nous sommes couchés sous la moelleuse couverture du sommeil. Non, je parle de ce rêve que nous rêvons toute notre vie, ce rêve qui souvent prend sur ses ailes le fardeau de toute souffrance, de toute amertume, toute lamentation et toute plainte d'un espoir déçu, car ce rêve, comme un rayon de ciel allumé dans notre poitrine, nous promet la réalisation de l'infini de nos désirs...»:

ՋԱՐԳԱՑՈՒՄՆ «ԵՍ» ԻՆ

Եթէ առտուան օրաքերքի մը մէջ երկուցած «ԵՍ»ը յօդուածին ե՛ս առիք տուի «Վերլուծում» հաստատովս՝ որպէս անտարակուսելի կը թափ, եւ եթէ քառորդ դարէ մ'ի վեր «անճաման յամառութեամբ» ենթակայական գրականութիւն ընողն ե՛ս եմ՝ օրպէս «ես»ս գիտակցութիւն ունի, պարտիմ յայտնել թէ՛ այդ գրականութիւնն է՛ր չը պարտի «նողկանք» ազդել, կամ մանաւանդ կաւ գամ հաստատով՝ թէ նողկանք չէ պատճառած ո՛չ Հայոց, ո՛չ Ներսիսեանց մէջ ենթակայական գրականութիւնն, — այն աստիճան՝ մինչ զի նոյն օրաքերքին հմբագրութիւնն ինճն ամենէն առայ կը խոստովանի (առաջին հակառութիւն) յէ ծագովորդն «համբարութեամբ մտիկ է բեր» ենթակայական կամ հաւպատու գրագէտներուն:

Գերմանական մկրտութեամբ այդ շնորհակալանք գրականութիւնն իրն է — գրականութեան չափ: Աստուածաշունչին մէջ Սողոմոն իր կամբը կը պատմէ, եւ Յար' իւր տառապանքն. ահագին Սաղմոսարանին — Տանդէի, Պօսիւէի, Լամրնէի, Միսիսիւի վսեմ այն ներշնչարանին — բազոր բայերն երկու դէմք շունչն, եզակի առաջին դէմք, (Գափթին շնորհ), եւ եզակի երկրորդ դէմք (Գափթին Աստուածն): Եթէ մեծ աստուածաշնչագէտ Ալպէտ (Իէ-Վիլլի հերս ինն իրաւամբ առարկուի թէ՛ Սաղմոսերգունն շնորհ տարագր Իսրայէլին շնորհ է, կը պատասխանեմ ե՛ս այ թէ՛ երթակալական հեղինակի մը «Վերլուծումն» բովանդակ մաքոց խումբի մը — եւ ամենէն զարգացեալ խումբին մերթ — հոգեկան վիճակին արտայայտութիւնը կամ վերլուծումն են: Իմ տասներկու սիւնակ ծառուածիս՝ որ վերաշնչեալ օրաքերթին բնադատութիւնն որոշարած է՝ հագիւ մէկ սիւնակն առանձնաբար անհասկանալի է, թէ եւ այդ «անհասկանալի» սիւնակին պարունակութիւնը՝ դերերային աշխատութեան գործնական քասագովութիւն՝ ոչ ընդհատ շնորհականք, համարգուտ է: Մնացեալ մետասան սիւնակաց մէջ կրթական եւ իմաստասիրական խնդիրք կը յազարձն՝ անհասկանալի կենաց բնութեան առթիւ: Թէ բարեխըզնաբար շնորհականք (բառին ամենպատ ճշմարտութեամբ) ներկայացուած այդ գրութիւնն որքան իրապէս եւ խորապէս համարական է, պիտի լիակիմ յայտնուի՝ եթէ յօդուածայն իրնց գլուխներն ընդլայնեմ մի առ մի մտնաւոր յօդուածոց մէջ(*):

Կըսէի թէ երթակալական գրականութիւնն իրն է աշխարհիս չափ. կը յանդիման թէ գրող միւր անձին վրայ կրնայ խօսիլ երկու եղանակաւ, ուղղակի կամ անուղղակի: Գրողներէն ռամբ կ'ընտրեն առաջին եղանակն, այն երկրորդը: Կան հեղինակք՝ որոնք իրենց շնորհ կամ կեանքը կը դնեն ուղղակի՝ իրենց գործոց մէջ. կան ալ՝ որոնք իրենց կեանքէն կը դնեն իրենց երկասիրութեանց մէջ: Հայցականի եւ բացատրական տարբերութիւն: Հանրի Հայնէ ազգակի կը յայտնէ իր շնորհ, ՏաղայէՎափի՝ անուղղակի: Սակայն ոչ Գերման բանաստեղծին, ոչ Ռուս վիպասանն, ոչ մին ոչ միւսն, ոչ, շատ երկրորդական գրողներ՝ նկատուած չեն. եւ ոչ մին եւ ոչ միւսն ոչ մէկու մը ճշմարտութեամբ ազգած են: Հիմ գրականութեանն այ օրինակ մը յիշեալ դարձնալ, ոչ արեւելագէտք՝ որոնք գայն քարգամանն են եւ ոչ արեւմտեան ժողովուրդք որոնք գայն լափած են, ճշմարտութեամբ զգացած չեն շնորհ-Սաստէն, Քիւսիւսան Չիմացի մեծ հեղինակին անձնական կամ շնորհականք՝ հոգեբանայ գործը կամ գլուխ-գործոցն:

Այդ անձնական կամ շնորհակալական գրականութիւնն — որպէս մկրտութեան գայն Գերմանացիք — մեր դարուն մէջ, սկսեալ կէօթէ՛ն՝ որ սոսկալի վերլուծող մեղաւ, անհամեմատ զարգացումն ստացաւ: Հիմերն, յափշտակուած բնութեանն՝ որոյ ծագը կ'ապրէին եւ ոյր գեղեցկութեանց նկատմամբ տակաւին բացառած չէր իրենց զգայութիւնն, հին մատնագիրներն հագիւ ուրիշ իրենք իրենց ներք կ'ամփոփուէին. եթէ նոր աշխարհը լիակիմ անձնաօրէն նախնաց, ներքին աշխարհն ալ տարտամօրէն ծանօթ էր նախնի հեղինակաց: Յափրանքն՝ ամենէն իգական զգացումն, եւ Հոգեբանութիւնն՝ ամենէն անյայտ գիտութիւնն՝ արդի մարդն ինք իր ներսն ընկրկեցին: Զանձարայի որդէն կրճուած եւ վերլուծման ստեղծն յայտնուած, մարդկային շնորհ — ճշմարտութի տիեզերական հեղինակին մեծագոյն այն գիտն — իր ցաւոց ըն-

(*) Պէտք է նկատել թէ «Վերլուծումն» հաստատու ոչ իրրեւ յօդուած գրած եմ, այլ պարզապէս բացառելու համար ճանդործութիւնք բառն՝ որ ինձ համար գործածուած է: Ծ. 8.

դաստառներում մէջ սկսաւ ինքզինքն զգալ եւ ինքզինքը նանչնալ: Եւ զգալու թիւնն ո՛րքան զորացաւ եւ ծանօթութիւնն ո՛րքան ընդարձակուեցաւ, շնորհիւ արտայայտութիւնն ալ այնքա՛ն հզօր եւ ընդարձակ եղաւ գրականութեան մէջ՝ որ եւս քան զիստ իմաստասիրական հաստատուն հիմ մ՛ումնեցաւ, իննետասներորդ դարու գրականութեան մէջ՝ որ գերազանցօրէն «ճշական» գրականութիւնն եղաւ: Ո՛րքան խոր իջան Լիւլզ Անգլիացին ուզեղին անդնդոց մէջ եւ Վաւետզ Գերմանացին՝ բովանդակ մարդկային բնախօսութեան այրուցր մէջ, այնքան կարկառ ու խորութիւն ստացաւ երթակայական գրականութիւնն: Ինքն իր մէջ հայելով է՝ որ ժողովուրդն ուրիշին մէջ հայել կ'ուսանի. Գեմ հոգեբանը միայն կրնար Լաֆօնդէնի վրայ գրել այն անմտան գիրքը, զոր ահա հրկրորդ անգամ կը սկսիմ կարդալ. եւ, ո՛չ միայն Անգլիացի հոգեբաններուն մէջ, այլեւ իր հոգեւոյն մէջ իսկ մարդկային հոգին նանչնալով է՝ որ, «Պառտէ՛՛ Դէնիսն աշակերտն որ բովանդակ նոր գրական սերնդեան վարպետն ըլլալ կոչուած է՝ կրցաւ վերլուծել Պասքլէտն եւ Ամիւլըն, աւեմէն անճանակա՛ն քանաստեղծն եւ ամենէն անճանակա՛ն արձակագիրն, որոնք Ատամ տը Բոնտաւդէնի մը միայն կրնան ճշողկանք» ազգել, եւ՝ որոնք «Ժամանակակից հոգեբանութեան փորձոյ» շարքին մէջ չը պիտ' ընդունուէին՝ եթէ շատ երկրորդական հեղինակներ» ըլլային: Ո՛չ, «սոխմար եւ աներես» գրականութիւն չէ ա՛յն, որ գրողն իր «ես» ի տես կը դնէ, իր տառապանքներն՝ իր յոյսերն եւ իր տարակոյտները կը յայտնէ. մեր իննետասներորդ դարու մարդն, այո՛, իր ներսն այնքա՛ն — եթէ ոչ աւելի — կ'ապրի քան դուրսն. եւ հոգեկան ներքին պատերազմաց իլիականը տարբեր կերպով շահեկան է քան միւս այն եին յունական «ելիական» ուր քանակ բանակը կը բազխի: Սորա մէջ Աֆիլէս կը սիրէ, դորա մէջ «ես»: Եւ «ես»ն առանց՝ իրական է քան Աֆիլէս:

«Ես»ը յօդուածն հրատարակող օրաթերթին խմբագրութեան մէջ չը կայն՝ մարդիկ, որոնք այդ բաները գիտնային. ի գա՛ւր ապրած ըլլան ի Բարիլզ, գերազանցօրէն արտաքին անշուշտ՝ այլեւ տարօրինակապէս ներքին այն ճաշակաց քաղաքին մէջ, որ ոչ միայն կը յեղշեղուին՝ այլեւ կը կատարուին ճնհրհայեցութիւն», «հոգեզննութիւն», «հոգեբանութիւն» ի մի բառ: Գըլիչն ինչո՞ւ գրագէտը չառնէ՛ր, երբ խնդիրը գրականութեան վրայ է, երբ նոր սերնդեան վրայ շատ ներգործած եւ գրականութիւնն ի՛նչ ըլլալը շատերուն արվեցուցած գրողի մը վրայ է խնդիրը. հայ ժողովրդեան գրական մաշակն ըստ երոպականին կրթել յաւակնող անձինք՝ ներքին էջերուս առթիւ ի՞նչպէս թայլ կաւ տան որ ճնողկանք գոյականը, «տխմար» անականն եւ «աներեսարար» մակըայը գործածուի այն թերթին մէջ գոր ժողովուրդին սիրընելու ոչ նուազ սատարեցի ես ալ...:

Կը զգամ որ կը դատնումս՝ հոգիս, եւ ալ չեմ ուզեր շարունակել: Խօսք մը միայն: «Սիրուելու, յարգուելու պայմաններէն է մտնալ «ես»ը» կը գորէք: Ես, ըստ բանաստեղծին կամ մանուսանդ հակառակ «բանաստեղծ»ին (որ միշտ օրինակաւ չը քարոզեր), կեանքս չը ծածկելով եւ միտքս սիւնելով մասնաւոր երատարակութեանց՝ օրագրաց ու հանդիսից մէջ, գրեթէ անձնըւեր ծառայութիւն մը մատուցած եմ ազգիս քառորդ դար մը շարունակ. ո՛չ ոք կրնայ ցոյց տալ մէ՛կն՝ որու գրկանք ըրած ըլլամ, մինչ ես մէկէն աւելի մարդիկ կրնամ ցոյց տալ՝ որոնց յաւէտ կամ նուազ կարեւոր ծառայութիւններ մատուցած եմ: Արդ, ես զիս արժանի կը զգամ Հայ ժողովրդեան սիրոյն ու յարգանաց:

(Մատիս, 13 Մարտ 1893)

*Այս առիթը լուսնած են այն նամակէն, զոր
Եղիա ուղղած է Միքայէլ Շամասեանին եւ Ար-
թուր Առանեանին, երբ այս վերջինները 4 Յոնո-
տոս 1888 թուակիւր նամակով մը Եղիայէն կ'ու-
ղէին կենսագրական ծանրաման տեղեկութե-
աներ, լուսանկարներ եւ ուրիշ նիւթեր, ամբողջու-
կան եւ ծանրաման ուսումնասիրութեան մը հա-
մար:*

Տեարք, — եւ Տիկնայք,

Իմ կեանքս ե՛րբ մըն է.

Եւ իբրեւ այն՝ այերց եւ հոգոյն կը պատկանի, ո՛չ գրչին:

Առաջին լուսանկարս — զոր հանած է Յակոբ պէյ Պալեան —
Բէմպէ հանըմին ժպտի՛ն տարրացումն է: Վերջին լուսանկարս Զա-
րուհի Աթմալուեանին սոսկո՛ւմն է ուրուագրեալ:

Եւ կեանքս ու կենդանագիրս գրուածներու մէջ են, ի մասնա-
տրի վիպակներու ու տաղերու մէջ (շատերն անտիպ), պատմուած:
Ինչո՞ւ կ'ուպէք կրկին կատարել աշխատանք մը՝ արդէն կատարուած,
եւ որ այդ անուղղակի ձեւին մէջ՝ ու ենթակայի՛ն ձեռք իսկ կատար-
ւած՝ Չերինէն աւելի հոգեբանական արժէք անշուշտ կրնայ ունենալ:

Ու կը վարմանամ նաեւ, որ գրողներուն կարգը դասած էք զիս
եւ անոնց մէջ «մեծագոյն տեղը տուած էք ինձ»: Է՞ր այդ թշնամանքն
Եղիային դէմ՝ եւ այդ սխալը քննադատութեան դէմ: Հայոց գրողներուն
մէջ չե՛մ ես, այլ տիեզերքի սիրո՛ղներուն: Արեւստ՝ պարտաւորիչ աշ-
խատանք՝ անհաշտ են յաւէ՛տ իմ բաղդներու եւ զգացումներուս հետ:
Մե՛ծ բառ կամ ծա՛նր բառ, կամ մեծ ու թէ՛ ծանր բառ՝ այդ գրող բառն
ինձ համար:

«Ու, կ'աղաչե՛մ, այլե՛ս գրի լրագրի խօսք մի՛ ընէք ինծի: Մեծ
գոհողութիւն մ'էր որ ըրի, Եւրոպայէն վերադարձիս իջնելով Նորէն
գրական ասպարէզն, եւ այնքա՛ն գէշ գնահատուեցաւ իմ գոհողութիւնս:
Ալ ո՛չ կը կարգամ եւ ո՛չ կը գրեմ»:

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

19 Օգոստոս 1899, Բերա

ԳԱԼՈՒՍՏ ՊԱՅՆԱՆԻ ՀԵՏ



Ընթացիկ տարւան ստալին շարժման, Գալուստ Պայկան կը զոծուէր Լիւնան: Իրեն ճիւղիմքի տարիներու բարեկամ՝ բնական էր, որ սրտեհասաղէա լուսանկարիչը իրեն հետ ընդէր նժոյշներ հայաստանեան լուսանկարչներու շարքին, ինչպէս քանի՜ մը տարի առաջ մեզի պատգամ էր իր նիւ ետրեան սուղծագործութիւններէն շարք մը:

Այս առիթով հարցազրոյց մը ունեցանք Գալուստ Պայկանի հետ, որ իր անձիշական սեփաբարբէն մասւ մթնոլորտին մէջ եւ պատասխանեց մեր հարցումներուն:

● Սիրելի Գալուստ, ինչպէ՞ս պատահեցաւ, որ երեսնամբ Լիւնանէն եւ, աւելի ուշ, անցնիք լուսանկարչութեան:

— Մեկնումս աւելի քան քսան տարի առաջ էր, 1961ին: Հաւանաբար ենթագիտակցութեանս մէջ կար ինքզինքս իրագործելու քաղձանքը, ձգտումը: Սակայն այդ ճամբորդութիւններուն, քաղաքներու կեանքի ընթացքին՝ Մարտէյլ, Փարիզ, Մոնրէալ, Նիւ Եորք, կար վերապրելու ճիւղը, ինչ որ պատճառ դարձաւ իրազործումի ձգտումին կամ երազին ուշացման: Սակայն, կը կարծեմ նաեւ, որ այդ ճամբորդութիւնները իրենց անուղղակի նպաստը բերին՝ կազ-

մաւորման տեսանկիւնէն: Գիտէք, որ միշտ սէր ու հակում ունեցած եմ արւեստներու, մա՛նուանիզ գրականութեան նկատմամբ, սակայն նկարչութեան առումով վրաս մեծ ազդեցութիւն ձգեց սեւ կնոջ վեհութեան նուիրուած Թարութիւն Չոլաքեանի ցուցահանդէսը՝ Նիւ Եորքի մէջ, 1973ին, ուր վերջնականապէս կողմնորոշուեցայ լուսանկարչութեան օգտին: Պէտք է ըսել նաեւ, որ առաջին անգամ բլլալով կարիւրութիւն ունէի ընտրելու ա՛յն՝ որ ես կը փափաքէի իրագործել: Նիւթական փոքր ապահովութեամբ մը եւ աշխատանքային ամսական հատուցումով՝ կրնայի վեց ամիս ապրիլ եւ նեաուեցայ այս ասպարէզէն ներս:



● Ուրեմն, տասնամեայ փորձառութիւն մը արձանագրած է՜ք այս մարզին մէջ: Ի՞նչ են տպաւորութիւններդ առաջին տարիներէն, եւ կամ՝ որո՞ւմ երանոյն գլխաւոր հա՛գրուանները:

— Ինչպէս ըսի, *Չորսօրեան հետ հանդիպումը մեծապէս նպաստուար եղաւ, մասնաւորաբար յուսանկարչութեան բնձայած կարելիութիւններուն ծանօթացման տեսանկիւնէն: Վեց տարի մը հասցի իր հարօր յուսանկարչական աշխատանոցին մէջ, դործի «Իտալացիներ», արհեստի բաժնին տիրապետելու համար, սոյնինքն՝ Բամբրաներ, սպինակներ, լոյսի, ֆիլմի եւ այլ թեքիք մանրամասնութիւններու՝ նիւթին, յուսանկարչական միջոցին ամբողջական տիրապետումին համար, որմէ ետք միայն կրնայ տեղի ունենալ ստեղծագործական աշխատանքը, ստեղծագործական հրաշքը:*

Այս շրջանէն ետք է, որ Յարութիւն Չորաքեանի հետ աշխատանքներէս նմուշներ հաւաքեցիք եւ կազմուեցաւ նիւտորիան փորձօրինակ: Այստեղ կ'ուզեմ աւելցնել, որ նիւտորքը՝ իր մշակութային այլազանութեամբ եւ իւրապատուկ մթնոլորտով, նաեւ կարելոր նպաստ բերաւ դործիս կազմաւորումին մէջ: Ամէն

պարագայի, երբեք դիւրին չէր իրեն տրուեստագէտ յուսանկարիչ ազգիւ, սակայն նահանջի բոլոր կամուրջները քանդած էի:

● Կ'ենթադրեմք, որ այս մէկը այն շարքն է, որ բերած էիք ձեր մախոթդ այնցիւրեքան: Այդ շարքէն որոշ գործեր տպուեցան Հայաստանի «Գարուն» ամսագրին մէջ (1981 Մայիս): Պէտք է ըսել, որ ինչ որոշ գործեր յատկանշակամօրէն ամերիկեան կամ Բիւ ետրեան են, ինչպէս՝ երկնաքիթի անմարդկային կրակի սին կամ ծաւային հակադրուած տունկի մը հօտը ճիւղերը, կամ մատիտ՝ եր ծախող կոյր սեւամարքը: Ասո՞ց կողքին, տարբեր աշխարհ է, օրինակ, պատագիններով շրջապատուած յուսամուտը, կեդրոնը ի կամ սիւնի մը յեղեղով ցոլացումով: Այս բոլորէն մեկնած՝ ի՞նչ էր կամ ի՞նչ է յուսանկարչութիւնը ձեզի համար:

— Նախ՝ պէտք է ճշդել, որ յուսանկարչութիւնը շատ զարգացած մարդ է Հիւսիսային Ամերիկայի մէջ. մանաւանդ՝ վերջին տասնամեակներուն եւ միայն յուսանկարչութեան զանազան երեսներուն ծանօթանալէ ետք էր, որ երբեք համար բիւրեղացան ներքին մղումներն կամ նախնաորութիւններն:





● Այս քննարակ կամ ճիշտար-
ուող մարդիմ մէջ, ո՞րք կը տեսնէ՞ք մե՛ր
նկարչութիւնը:

— Որոշ փորձառութենէ եւ փնտրո-
տութենէ ետք, կը կարծեմ, թէ հիմնա-
կան աշխատանքս կը կեդրոնանայ նկար-
չական Էստէի, այսպէս կոչուած՝ Փոքօ
Էստէի մարդին մէջ, ժամանաւորաբար՝ դի-
մանկարային Փոթո հասէի, ուր կայ մար-
դը՝ իր ընկերային ու մարդկային կացու-
թեան մէջ: Կը տեսնես, որ ցուցադրած
զորքերս առհասարակ սեւ-ճերմակ են,
զիրքորչում մը, որ կը միտի նիւթի ամ-
բողջական տիրապետումին: Գունաւոր
լուսանկարչութիւնը ընդհանրապէս խար-
կանք կը ստեղծէ, իրականութիւնը կը
զեղազարդէ, իսկ ես իրականութիւնը կը
փորձեմ գտնել, ներկայացնել եւ ոչ թէ
զեզեցիկ պատարանքք:

Այս ձեռով՝ լուսանկարչութիւնը ինչ
իր մէջ չի սահմանափակուիր, որովհե-
տեւ, արուեստի որեւէ դրսեւորումի պէս,
առանձին ու մեկուսացած մարդ կամ տի-
սիփիին չէ, այլ սերտորէն տաքնուած է
մշակութային ու ընկերային այլ ազդակ-
ներու: Այնպէս որ՝ նկարչութիւնը, ինչ-
պէս կը հասկցուի, ստացած վիճակ չէ,
հոն կայ ժամանակին հետ քայլ պահելու
նր այդ հեւքը բռնելու տաղնապար:

Այս բոլորին կողքին, սակայն, լու-
սանկարչութիւնը ամէնէն առաջ կառոյց-
ձեւ է (form) եւ համադրում (compo-

sition): Այս աշխատանքին առընթեր՝
պէտք է սերտել զառական նկարչութիւ-
նը, որ իր յստակ աւանդներն ու օրէնք-
ները ունի եւ լուսանկարչին համար ա-
մուր ենթահող մը կրնայ կազմել:

● Սակայն, ձեր լուսանկարներում
մէջ յստակ կապ մը գոյութիւն ունի լու-
սանկարիչ Գալուստ Պապեանի եւ ձեր
! իւրերում միջեւ:

— Կը կարծեմ, թէ այս յարաբերու-
թիւնը կամ հազորդակցութիւնը հիմնա-
կան է. մա՛նաւանդ՝ դիմանկարային Փո-
թօ հասէի պարագային, եթէ այդ յարա-
բերութիւնը շտեղծուի արուեստագէտին
ու նկարչուողին միջեւ, կը կարծեմ, թէ
տրուեստագէտը կը ձախողի, որովհետեւ
լուսանկարիչը մարդը մերկացնելու, զայն
բանաւոր, ճանշալու պէս բան մըն է եւ
հրաշքը կը պատահի, երբ այդ հազոր-
դակցութիւնը կը ստեղծուի: Օրինակ, կը
կարծեմ, թէ Փարանձնովը, Ասատուր
կամ Արթօ Չաթմաբեկեանը նիւթ բրած
լուսանկարներս յաջող են, որովհետեւ
կարծիքի եղած է այդ հազորդակցութիւնը
ստեղծել իրենց հետ, իրենց ներաշխարհը
բանայ: Ի դէպ, ձեռնարկած եմ միջոց-
պային ճանաչում ձեռք բերած հայ ար-
ուեստագէտներու լուսանկարներու կեն-
դանի շարք մը պատրաստել: Այդ շար-
քին մէջ կ'իշխան վերոյիշեալ անունները:

● Որքան մեզի ծանօթ է, Մանրէալի
եւ Թորոթոյի ձեր ցուցահանդէսները
հայրենի ներկայ կացութիւնը կը փոր-
ձելին ներկայացնել: Ի՞նչ ունիք ըսելիք
այս առիցութեամբ:

— Նախ պէտք է ճշդել, որ քա-
նի երկրին ծանօթ չէի (խօսքս, բնա-
կանաբար, իսկական, շօշափելի ծանօ-
թութեան մասին է), չէի կրնար առան-
ձին ծրարութեամբ մը կրթալ: Սակայն դի-
տէք, որ հայրենիքի դաղափաբով եւ ե-
րազով սնած սերունդին կը պատկանիմ,
այնպէս որ՝ զբաղանութենէն, մշակոյ-
թէն, մեր կեանքէն ու կաղմակերպութե-
նէն իկամ՝ հայրենիքի նկատմամբ խան-
դազատանք, սէր, կարօտ եւ նման հա-
զար ապրում կար մէջս եւ կ'ուզէի քա-

մերային մրայ արձանագրել՝ ինչ որ զիս չէր կրնար անտարբեր ձգել:

Հոն կային անշուշտ յուշարձանները, մտաւորականներու մտերմութիւնը եւ, մա՛նաւանդ՝ Հայրենիքի առօրեայ հեւքը: Յուշարձաններու պարագան առանձին է եւ հակառակ անոր, որ կարելի չէ անտարբեր մնալ Սարգարտագատի կամ Մի-ճեռնակարերդի յուշարձաններուն զի-մաց, եւ չնկարեցի զանոնք, որովհետեւ ընկանքապէս այս մէկը առանձին մօտեցումի եւ նստապատրաստական աշխատանքի մարգ կը նկատեմ, որ ուրիշներու կողմէ կատարուած է, եւ կամ՝ տարբեր ծրագրումով պէտք է երթալ: Հիմնականօրէ՛ջ Միջուցի մարդուն եւ իմ սերունդիս կ'ուզէի ըսել, որ Հայրենիքը պէտք է դուրս բերել մեզի համար քիչ մը օրացուցային, քարտ փաստային դարձած պատկերէն, ներկայացնել հայրենիքի մարդը աշխատանքին մէջ, ցոյց տալու համար, որ ինչպէս աշխարհի օրիւնքը քաղաքի, նաեւ մեր Հայրենիքին մէջ, շտեմարան մարգ կայ, կան արտին մէջ աշխատող մարդիկ, պազպազակ ուսող փոքրիկներ, հանրային պարտէզին մէջ խնդալող տղաք, եւայլն:

Այսպէս, երբ վերադարձայ եւ նկարները մէջտեղ եկան, տեսայ, թէ Հայրենի մարդուն կենցաղային երեւոյթները նկարած էի — տունը մաքրած եւ դրան ստջեւ կեցող աղջիկը, Հոփփիմէի տաճարին մէջ պսակուող զոյգերը, եւայլն. այս ձեւով կազմուեցաւ նկարներու երկրորդ շարքս եւ ինչպէս Նիւ Եորքի փորթ-Փայլոս կազմելու ատեն մէկտեղուած էին այդ շրջանի գործերս, Հայրենիք կատարած երկու այցելութիւններս (1980 Ապրիլ եւ Սեպտեմբեր) կազմեցին Հայաստանեան շարքը:

● Լուսանկարներուն մէջ առանձին տեղ կը գրաւէ Փարսեանովի շարքը, ի՞նչ կ'ուզէք ըսել այս մասին:

— Փարսեանովի չհանդիպած՝ անշուշտ չէի պիտէր, թէ այդ տարողութիւնը պիտի առնէ իրեն նուիրուած շարքը, նոյնիսկ չէի գիտեր, թէ ի՞նչ պիտի պատահէր: Պարզապէս առիթ ունէի այս մեծ




Հայուն հանդիպելու: Գուռը զարկի, տունն էր եւ ըսի, թէ Հայ մըն եմ, որ կ'ուզէ ձեռքը սեղմել, ծանօթանալ: Սակայն զարմանալի բան մը պատահեցաւ, երբ լուսանկարչական գործիքը տեսաւ ե զիտցաւ լուսանկարիչ ըլլալու: Կարծէք բեմադրութիւն մըն էր, ուր ինք է՛ւ բեմադրելն էր, է՛ւ դերասանը...: Անկիւններն ու դիրքերը ինք կը ճշդէր՝ բանալով իր գործանալի աշխարհը: Հազարաւակցութեան հրաշքը, որուն տեղ մը կ'ակնարկէի, իրեն հետ է, որ ուժգնօրէն պզտիկ: Կը կարծեմ, թէ բացառիկ անհասականութիւն է, կեանքէն մեծ, ինչպէս կ'ըսենք որսը անձերու կամ արուեստագէտներու մասին:

● Ի՞նչ եմ ձեր անմիջական ծրագիրները:

— Թարոնթոյնն ու Մանրէպէն ետք՝ առանձին ցուցահանդէս մը պիտի ունենամ Նիւ Եորքի մէջ, յառաջիկայ Ապրիլին, իսկ եթէ առիթը ներկայանայ, կը մտադրեմ գործերս ցուցադրել նաեւ Պէյրութի մէջ, այս տարեշրջանի ընթացքին:

Հարգապարտօյցը վաքեց՝
ՅԱՄԻՐՈՒԹԻՒՆ ՊԻՐՊԵՆԻԱՆ



ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԹԵՐՈՐ
'ՓԱՐՈՍ'

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ
ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ

Գ. Մ. Գ. Մ.-ի դասակարգը կը յայտնէ, թէ բացուած է 1883 տարեշրջանի համար «Գրական մրցանակ»ի եւ «Վերահրատարակութեան» Ֆոնտերան ձեռագիրներ ներկայացնելու առիւշտուրդը:

«Գրական մրցանակ»ի Ֆոնտին նպատակն է ձեռագիր, կամ զէթ պրոզէի ձեռն առկ լոյս շահանս զորոնքու զնահատուած եւ հրատարակուածը: «Վերահրատարակութեան» ֆոնտին նպատակն է հայ մշակոյթին համար արժէք ներկայացնող, հրատարակուած եւ սպասած զորոնքու վերահրատարակուածը:

Գ. Մ. Գ. Մ.-ի Ֆոնտին ձեռագիրներ կրնան զրկել թուր հայ մատուցականները, իրենց համար կամ ամբողջ լեզուով ձեռնարկած զորոնքու առաջնորդող դասակարգին: Առաջարկուած զորոնքու կրնան վերահրատարակուել հայ մշակոյթի զրական, իմաստաւորական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ յարակից այլ կայունաններու:

Առաջուած ձեռագիրները նախընտրելի է, որ ձեռնարկուած ըլլան եւ երեք օրինակով, կամ զէթ զրուած ըլլան գրաբնութեան ձեռագրով:

«Վերահրատարակութեան» ֆոնտ ուղղուած առաջարկութիւնները պէտք է դասակարգին հասած ըլլան մինչեւ 31 Յուլիս 1883:

«Գրական մրցանակ»ի Ֆոնտին առաջարկուած ձեռագիրները դասակարգին պէտք է հասած ըլլան մինչեւ 31 Ընդհանրեմբեր 1883:

Դասակարգին հասցէն՝

Kevoik Melidinetzi
Literary Prize
Armenian Catholicossati
Antelias -- LEBANON

ԳԻՒՄԵՆ Գ. Մ. Գ. Մ.-ի
ԴԱՏԱՎԱԶՄԻՆ

30 Դեկտեմբեր, 1882
Ամբիլիաս

Ընթացիկ տարւոյի սկիզբը, սոցթ. Բարգէն փափագանի խմբագրութեամբ սկսու լոյս տեսնել «Փարոս» նրկարաթաթերթը՝ «հայ ընտանիքին թերթը» գտնակու առաջնորդողով, որ բանահուան է հետեւեալ առիւշտուած մէջ:

«...Կ'ուզեմք ընդգծել, թէ մեր նպատակը հայ բնամիտքի յայտնակամներուն համար հանելի, օգտակար, փնտաւած պարբերաթիւրք մը դառնան էս:

Իր նպատակը պարզելէ հաջ. «Փարոս» կը յայտնէ այն հուանքը, զի ստորհամարքար պիտի յաջողի իրապէս փարոսի մը դերակատարութիւնը ունենայ եւ հազիւ շտապի լոյսի շոքը վերանելի յայտնել սպասուած յաւերակուծին:

«Փարոս» լոյս կը տեսնէ ջրաստուն էնով եւ ունի այլապէս բաժիններ, — պրական, պատմական, մշակութային, դաստիարակչական, դիտական, կենսական, աշխարհագրական, բուսաբանական, մարզական, շարժապատկերային եւ ժամանցի:

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼԻ
«ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ
ՕՐԵՐԸ» ՎԵՊԻՆ
ՌՈՒՍԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մտովնական գրոջ հրատարակչականը 50 հազար տպագրանակով լոյս ընծայած է աւարտուած նշանաւոր գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեբան» քառուած օրերը վէպը, զոր գիրքաներէնէ ուսուցիչներ վերածած են նատալիս Գնդիկան եւ Վեհովիզ Ռոզանով:

Վերֆելի վէպը կը բացուի ռուս բանաստեղծ Միխայիլ Դուզինի «Միտալիս» գազաթեմս խորագրով կրող յառաջաբանով, ուր, ի մէջի այլոց, կ'ըսուի. «Վերֆելի Ի. զարու եւրոպական մշակոյթի լուսադոյն մտածողներու՝ իտալեան Ռայմոնի եւ Թոմաս Մաննի, Լեոն Ֆելիսովանկերի եւ Փիլեա Լուգրովիտի հետ միտալեանակ, սկսու իր անձնական պատերազմը փայլովի դէմ: Ասիկա դասած պայտար էր, պայտար ո՛չ թէ փոքր լինելու համար, այլ՝ մահուան պայտար: Եւ ինչպէս իրաւաւոր յարուստագետ, որ կը փորձէ սեփական նախատարրով ըմբռնել իր ժամանակը շարժանք, ստեղծագործական անհատկանութեամբ անցնալը կապել փոքրիկուց մեծիկայի հետ, Ֆրանց Վերֆելի եւս ունեցու իր զորոնքուիմը եւ գազաթը: Ու այդ գազաթով ան անձնութեամ հասու: Իմ խօսքն կը վերաբերի «Մուսա լեբան»



Բառատուն օրերը դիցազնավայրին: Այս գիրքը գրուած է 1833ին եւ դարձած առաջին կրակոցմերէն մէկը, ուղղուած՝ ամբողջ մարդկութեան, երեսն հազարու համար արիւնու շուրճար իրական փաշիկով: Այս գործը զարգ եւ համարիչ կերպով վկայեց, որ չիբիտ եւ Մուսոյիսի Ի. դարուն ունեցած են իրենց ճանարդները, եւրոպան ու աշխարհը զգուշացուց, որ այդ աշակերտները իրենց ուսուցիչները կը գերազանցեն քէ՛ յափանդիով, քէ՛ իրենց արիւնու գործերու ճարտարութեամբ: Գիրքը ամբողջ կը սարկեց զգոմարին: Ամիկա ո՛չ միայն ընդապանութեամբ յաշարձան է, այլեւ ամէնէն առաջ՝ դիմադրութեամբ շարժուցիւր մը, որ կը մերկացնէ քէ՛ մարդկութեան զանիւնները, քէ՛ ամենց արիւնու փիկրափայտութիւնը: Եւս շարժիչի գիրքը մտածչած է մարդկութեան զանիւններուն դէմ եւ միմիւր այտոր կը շարունակէ պտտակամ իր ազնուագոյն առաքիլութիւնը: Ան քարգտնուած է երազական գրեթէ բոլոր լեզուներով (...) Երեսնամի մէջ, Հրազդանի այրատոյտայտ տփին կը գրուի ընդապանութեամբ գոհերու ազնեցիլ յաշարձանը, թուրքիայ պատմութեամբ իսլամապալութեամբ յաշարձանը: Մանաւորակ ազգայնամուտութեամբ, կարելի է ըսել Ի. դարու փաշիկի առաջին իսկական գործադրութեամբ՝ Երկային յանցարձարութեամբ, դատմութեամբ դէմ յաշարձան, յանցարձարութեամբ, որ 1915ին իսկեւ հայ ժողովուրդը:

Վարչի կէտն կեանքը: Մեր ամբողջ քաղաքակրթութեան ժողովուրդները նախազգուշացնող յաշարձանը:
Այնուհետեւ, անդադրանալով վէպի գլխաւոր հերոս Գարեթի Քարտանի եւ անոր ընկերներուն գործողութիւններուն, Միխայիլ Դուդին կը գրէ. «Ամբողջ թուրքիայ տարածքին կը կատարեն հայերը, բայց կանգուն է Մուսա լեռը՝ հայկական արիւթեամբ ամնուանիլ լեռը: Անոր պատկանակողը ես կը մէլ թալաւորի կանոնաւոր գումարտակներու գրեհները: Արեւմտ կ'ըլլայ, բայց կանգուն է Մուսա լեռը, անոր պտտակոցմանը ուրիշ կիւ չունի: Ամիկա չի գիշեր դիւրերը, ես կը մէլ քշտարին ու յարձակում կ'անցնի: Առանձին՝ ամբողջ աշխարհի մէջ, իմ օրհուրացութեամբ կրակով բռնկած, անիկա չի յանձնիր մարդկային իր ոգիի արիւթեամբ բարձունքները: Կանգուն է Մուսա լեռը: Բառատուն օր ու գիշեր անօրի, առանց հացի ու վառօդի: Կանգուն է ու կանգուն կը մնայ՝ իրբեւ աշխարհի բոլոր ժողովուրդներու, ամբողջ մարդկային եզրայնութեամբ համար առաջնութեամբ օրինակ: Անտան են Մուսա լեռան կերտները, ամենց սթորադարձութիւնը յաւերժ կը մնայ իր իսկ ժամանակի եզրային մէջ»:

ՎԱՀԱՆ ԹԷԲԵԱՆԻ ԲԵՐԹՈՒԱՍՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ

«Արքայան ցասուն» պատմական խորագրին ստեղծիչը Երբեք մէջ լոյս տեսած է Վահան Թեբեանի ջանքի գերթումներու հաւաքածան:
 Գիրքը կ'ընդգրկէ 78 բանաստեղծութիւններ եւ թարգմանուած է բանաստեղծուհի Տայանա Տէր Յովհաննիսեանի եւ Մարգարեա Մարկուսեանի կողմէ:

ՎԱՀԱՆ Բ. ԹԻԵԸ

Վերջերս, Փարիզի մէջ լոյս տեսաւ «Կանն Վերլուծական պարբերականի կրկնօրը Թեբեանի խորագրութեամբ Մարգարեանի յանդիւնը:
 Հանդիւնի բովանդակութիւնը կը կազմեն 4 կրկնաշունչ գրութիւններ: Բանաստեղծութիւն մը Վ. Օյականէն՝ «Կաննիւն ման» խորագրով, Ջարեհ Որբունիի մէջ վիպակին սուղին պատեհեցը, որ կ'երեւի զՅի Կա է կարգաւորիւն տեսնեն ստեղծուած կերտմանում Վալիեր Պենիսիսի մէջ զննարարական: Գրութիւնը՝ «Ի նպատակ բնութեան մտադասութեան, որ սուղին անգամ լոյս տեսած է 1921ին:
 Խորագրութիւնը վերհասարակած է Կանն տաղանդաւոր բանաստեղծ Նիկոլոս Մարտիանի «Կաննիւն» անուանը արձակ գրութեան սուղին բաժնիք, խոստանալով յաջորդիւ լոյս ընծայել կրկնօրը, որ ցարդ կը մնայ անսկզպ:



ՊԱՐՈՅՐ ՍԵՆԱԿԻ ԳԻՐԳԵՐԸ ԹՈՒՆԱՆՇԱՆՆԵՐՈՎ

Պարոյր Սենակի շարք Հրատարակում գերբերուն ապագանուկը կը հասնի կէս միլիոնի: Անուշա Քարգմանութիւններու ապագանուկը նկատի չի առնուած վերջինիս Քուսնուին մէջ:

Քերտուոր ապագանուկին չկուար բաժինը կը կազմէ 1972էն 1976ի միջև լոյս տեսած «Մրկերի» ժողովածուին, միասնաբար 300-000 ապագանուկով, որուն վրայ կ'ուսնան «ԱՅլանի» գանձակատուն, «Մարզը արի մէջ», «Յոյսն լոյս» եւ այլ գործերը, ինչպէս եւ՝ Սենակի գործերուն արտատաւմանն ապագրութիւնները:

Ներկայիս՝ այս թիւին վրայ կու գոյ ունէր Պարոյր Սենակի ընտիր գործերուն երեք հատրտուկը, գոտրատուած եղբարաբա զերթոյն ծննդան Յամեսակին աւթով: Ետքին առաջին հատրը լոյս տեսած է արդէն: Երեք հատրտերուն ապագանուկը, միասին հաշուած՝ պիտի ըլլայ 150-000:

ՈՂԵՂԵՆ ՀԱՅ

Յասկազէն նախկերթարանի եւ երկրորդական դասարաններու աշակերտներուն համար պատասխան ծաղկաբաղ մըն է «Ողելն» անց հատրը: որ սկսեալ արտիւղանի վերջուարութեան լոյս տեսաւ Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսութեան ապարանէն: Կ'ն սեղ գրած են հասուածներ կամ բանաստեղծութիւններ Աւետարանին, Եղեկէն, Եղեկէն, Երբեկոյն, Ենտրուիկէն,

ինչպէս եւ՝ Քուսնուին, Ղարտուին, Միասնութիւն, Մեծարանցին, Սշակունին, Զարեկցին, Պարոյր Սենակին, Բազմիկ Գաւրջանին եւ ուրիշ ծանօթ գէճերէ: Ետքաւրիսը հեղինակին հետ արուած են սեղմ ծանօթութիւններ, իսկ բանաստեղծութիւններուն կողքին՝ բառարանի բաժին մը:

Հատրը կը ներկայացնէ 22 գէճը: Մասու՛ 258 էջ:

ԹՈՒՐԻԿԻ «ԾԻԾԱՂ»ԻՆ Բ. ՀՐԱՏԲԱԿՈՒԹԻՒՆԸ

Անշուշտ աշխուզերէն լոյս տեսա Քուրթիկի «Ծիծաղը», «Ծ. Տեղիկան եւ որդիք» Հրատարակչատունէն: Իրրեւ Բ. Հրատարակութեան ծանուցումն այս ստուար հատրը (500 էջ) կ'ամփոփէ յիտանկան Քուսնուիններուն Հրատարակուած հեղինակին նշանան կարծը եւ «Ազգակ» օրաթերթի հաւարաններէն զազուած երգիծական այլ նշմարներ:

Ետըլ երեսունամայ ազգային-միջազգային կենտրոն եւ ժամանակակիցին երգիծական ուրուանկաբը կազմած «Ծիծաղը» կը հաշուէ 500 էջ, որուն մեծ մասը գրուած են Քուրթիկի ստորագրած նշմարները (էջ 13-402): Ազգային, զաղաշական, մշակութային եւ հասարակական զեպներն ու երեսութիւնը երգիծապի արագ կամիթներով ուրուանած այս կերտանկան բաժինն կը յաւերդեն «Բիլի» Քակալտիմ զեպները խորագրուել յուշագրական էջերը: «ԾԻԾ» կիւսա խորագրուել Գ. մասը (էջ 547-554) կազմուած է արմակ եւ յանգուար ետք ծանուցումներէ, իսկ վերջին գլուխին մէջ արուած են Քուրթիկի գործին եւ անմին ժամին գրուած զբախտականներն ու ժանագրութիւնները:

Հատրը գորգարուած է երգիծանկարել Տիւրան Անէճանի արմէն յղացումներով:

1982 ԹՈՒԱԿԱՆԸ ԺՊՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԻ

Կիւզարթի, 6 Յունուար 1983ի երկկոյնան, պատկերասփիւռային ելոյթով մը, հանրապետութեան նախագահ շէյխ Ամին ժեմաշէլ կատարեց պաշտօնական բացումը լիբանանցի մեծանուն գրողէն Ժպրան Մալիլ Ժպրանի ծննդան 100ամեակին նուիրուած միջազգային ստրուան:

1983 Քուսնուին Ժպրանի միջազգային ստրլ յոյտարարան նախարարաց խորհուրդի որոշումէն ստրլորդուած՝ նախագահ ժեմաշէլ ստար զիւսնազտաներուն Ամանըլը սղունեց Ժպրանի գրականութեան զազուած խոսքերով: Աստեղութիւն գրման այս պաշտօնական ընդունելութեան արտասանած նախագահին ելոյթը, նախ զիւրը, ներկայացուեցաւ պատկերասփիւռէն՝ իրրեւ Ժպրանի



Յննդկան 100ամեակը ծանուցող յայտագրի նախա-
բան:

Հասարակական, շահագործումներու եւ
խաւարամտութեան դէմ ծառայած լիբանանցի ըմ-
բաս ժողովուրդը յորհրդանիշի վերածուած փայլած
նախնի փայլանի Յննդկան 100ամեակը պետական
լափանիշով նշելու իր որոշումով՝ գտնիքը կու
զար ընդգծելու, որ վճռած է շտապոյնս արեւ-
ջրեկէ զբաղակրթական այս պատասխանաւոր-
ութիւնը: Այդ իսկ պատճառով, նախագահ Ժե-
մաշէլ որոշած է անձամբ զլիբանանցի յորհրդան-
կան զեղադոյն ժամերը, որ 100ամեակին աւի-
թով կը նախատեսէ իրականացնել հաւաքներ,
հրատարակութիւններ, ցուցահանդէսներ, թա-
սերական — պատկերասփիւռային ելոյթներ եւ
այլ ձեռնարկներ:

**ՀԵՏԱԳՐԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՆԿԱՏՄԱՐԲ**

Յայտարար Արովեսի զՎերջ Հայաստանի
վերջը թարգմանուած է լիթուաներէնի, Ռիտէ
Յանասեղայտի կողմէ: Թարգմանչուհին աւար-
տած է վերջին գլուխներէն ձեկը, սակայն
միշտ ալ հետաքրքրուած է հայ գրականութեամբ
եւ որոշած է արժիւ հայերէն լեզուէ: Այդ նպա-
տակով ալ ան գտած է Երեւան, հասեւելու պե-
տական Համալսարանի գաղթթանգրարան: Աւա-

նողական շրջանին, ան աղբւրն է այդ հասար-
տութեան գիւտերթիկին ձեկը, ուր աւելի կարե-
ւորութիւն ունեցած է՝ հայ դասընկերուհիներու
հետ խորացնելու իր նախաշուկաները:

Ռիտէ Յանասեղայտին թարգմանած է հա-
յերէն տասը գիրքեր, որոնց շարքին՝ Ա. Շիրվան-
զադէի Վամուսըք, Մկրտիչ Արմէնի Վեկնար աղ-
բիքը, Խնդէս հասե Պեր Ջէյթուկեանի, Ա-
դամի Այվազեանի եւ ուրիշ հեղինակներու ստեղ-
ծագործութիւններէն առանձին բաժիններ: Ան շտա-
պաբ ախրակուած է թարգմանիչի ժանապարհու-
թեան, զոր հասցուցած է այնպիսի՝ ժողովրդակի
մը, որ իրական է թարգմանել նոյնիսկ Վերջ
Հայաստանին:

Երեսասարդ թարգմանչուհին կ'ըսէ, որ իր
զպրոցական աւարիներուն Հայաստանի մասին
կարգացեր է այն քաղաք դերքերը, զորս կրցած
է ձեռք ձգել:

Վեկ այսօր, — կ'ըսէ ան, — երբ քարգմա-
նած եմ շարք մը գիրքեր, երբ հայ գրող քարե-
կամներ ունիմ, կրնամ համարակարգել պնդել, որ
հայկական գրականութեան ճկատմամբ ունեցած
նկատման յիմն պատասխան չէ:

Թարգմանչուհին յատկապէս հետաքրքրուած է
քարերգութեան ու երաժշտութեան ժողովրդով:
Ինք կը նշէ, որ նկատի ունի ո՛չ միայն բանաս-
տեղծութիւնը, յատկապէս միջնադարեան բանաս-
տեղծութեան՝ Նարեկացին, Ծրիկը, Նազալը եւ,
քննկատարար, Գուշակը, այլև՝ արձակը: Ձէ՞ որ
նոյն այդ երաժշտութեան եւ քարերգութեան շը-
հորհիւ է, որ Վերջ Հայաստանին արձակ բա-
նաստեղծութեան նմայ զը ծառայէ:

Վեկս ստեղծագործութիւններու մին մասին
է, — կ'ընդգծէ ան, — իսկ երբ խոսելու ըլլամք
քստ Երեւան, ուրեմն չենք կրնար շտապել այն
պատկերներով, որոնց միջոցաւ կը ներկայացուի
մարդը:

Այդ բանը հասարակու համար, ան իբրև
օրինակ կը բերէ արձակագիրներ Պեր Ջէյթուկե-
անի, Ազարի Այվազեանի եւ Հրանդ Մաթևոս-
եանի ստեղծագործութիւնները:

**40 ԼԵՋՈՒՆԵՐՈՎ
7 ՄԻԼԻՈՆ ԳԻՐԲ**

Վերջերս Երեւանի Էլէէքսանդր Միտանիկեան
գրադարանը պարզեցաւ արձակագրութեան
բարեկամութեան շտապանով, իր հիմնադրու-
թեան 150ամեակին առթիւ:

Յիշեալ գրադարանը Հայաստանի ամենամեծ
գրադարանն է: Հիմնուած է 1832ին: Մտանի տա-
րիներուց ետք է աղքատ իբրև միակ հարստու-
թիւն ունենալով 40 գիրք, 6 հանդէս եւ 3 քաղ-
տէս:

Յայտարար Արովեսի անասել նշանակումով,
գրադարանը կը կազմակերպուի եւ ամբողջովին
կը վերակառուցուի: 1925ին է, որ Երեւանի այս
կենդանական գրադարանը կը կոչուի Էլէէքսանդր

Միասնիկների անունով:

Ներկայիս, զրազարանը ունի շուրջ 1 միլիոն զինք, — ամազիբ, լրագիր, զարակետ, — Հրատարակչական հասցիներ, ուսանողներ, անդերեր, ֆրանսիերեն և այլ 40 լեզուներով:

Կան 16, 17 և 18րդ դարերի միջին ոչսոց ապագրական հայաստանի գրականության և մամուլի մեկուկես նմուշներ և ուրիշ լեզուներով լայն տեսած Հրատարակչություններ:

Միասնիկների տեսան զրազարանը միասնական գրականագիտության, մասնագիտության և հայ գրքի պատմության ուսումնասիրությանը կեդրոն մեծ է: Անկախ է Հրատարակչական շուրջ 30 հասար գիրք:

ԻՈՆԵՍՏՈՒՄԻՆԻՆԸ

«Սրուստը կարծես է, եթե որիև էպագրամ կամ նպատակ չի հետադարձը, եթե չի ծառայի էպագրամիսն սեւ խմբակի կամ կուսակցութեան փարզութեան»:

Իսկն իոնեստոյի այս խոսքերով կը սկսի Իոնեստոյի պատկերասրահի համար պատրաստած «Իոնեստո» ըմբոստ կրկնաթիղի մը տիպարը տեսն ժապավենը, որ կը ներկայացնէ Քասերազըն կենտրոն:

Ժապավենն մէջ իսկն իոնեստո կը մենարտէ, կը ներկայացնէ իր մտազգին ամուսնալուծումը, զոր հանդէպ ունեցած սիրը, զոր մահուան խոր անզրադարձը իր մրայ: Այդ օրէն սկսեալ, իոնեստոյի ժող կը սկսի զարգանալ յանցանքի պայտումը, որ բարձրագին չէ անյայտացած: Ան կը խոսի մասն իր քաղաքութեանց մէջ ներկայացուած մահուան և զեղապիտան կարգերու մասին: Իոնեստոյի մասին հանցող արուեստագիտներ, բեմադրիչներ և զերասաններ կը ներկայացնեն իրենց սպաւորութիւնները Քասերազըն կենտրոն, և զորենքու բեմադրութեանց քննազգին պատահաններէն:

ՇԱՀՆՈՒՐԵԱՆ ՀԱԲԱԹ

Շահան Շահնուրի ենդգան 80ամեակին առթիւ Շահնուրեան շարքի մը տեղի ունեցաւ Թէզեան կեդրոնին մէջ՝ Թէզեան մշակութային միութեան կազմակերպութեամբ:

Չնուարկին ամենայտականական բաժինը «Շահնուրեան զրազարան»ի բացումն էր, որ մէկտեղուած էին արժանազէրին շուրջ 700 զիրքերը՝ մեծ մասամբ Փրանսերէն, ինչպէս և՛ պարսից, սկիտաց և մուսուլմանաց: Շահնուրի զրազարանութեան զանազան երեսները զննելով՝ աստեղան Գ. Շահնուրեան, Արմէն Գարեան, Լ. Վարդան և ժիբայր Դանիէլեան: Շահնուրեան շարքուան ընթացքին՝ ներկաները անթիւր ունեցան յետու նաև Ծրեանի մայնապիտակ կայանին կողմէ պատ-



բառուած՝ Շահնուրի «Ենթանակ» մը, իր երկու հիւրերը և ուրիշները պատմութեանն ուսարտեր-ժականացումը:

ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՁԸ...» ԱՆԳՆԵՐԵՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒՄԸ

Հոնանարժանկ անդիպիր բանաստեղծ և Քարգմանէջ Միշա Գիւտեանի Քարգմանութեամբ, մերկերս լայն տեսաւ Շահան Շահնուրի «Նախան»-ը առանց երգին մէջը: Տասներկու տարի առաջ Միշա Գիւտեանի կողմէ Հիմնադրուած «Մշակուած» Հրատարակչատունին լայն տեսած այս նորագոյն զինքը կու գայ հարստացնելու հայ գրականութիւնը սոսր հասարակութեան ծանօթացնող Հրատարակչութիւններուն շարքը: Այսպէսով, «Նախան»-ը կը միանայ Վահան Թաթևեանի «Նախան»-ը կը կըն համակրական համապարհի վրայ ինքնակենսադրական միպակին, Թուսանեանի, Իսահակեանի գործերին ամուսնան նմուշներուն, Նարեկացիի «Մատենա» ռզնրգութեանցին կազմուած հարցու-տրերուն, հայկական հեթիաթերէն զազուած փունջին և «Մատենի Դուրիթ»ի Հիմնական հաստատունները անդերէնով մերազատող հատորին:

Շահնուրի կենտրոն ու ստեղծագործութիւնը համառօտ ակնարկով մը ներկայացնելէ հոնք, Գիւտեան իր ներածականին մէջ կ'անդրադարձանայ սփիւռքահայ արժանազէրին հայերէն և Փրանսերէն ստեղծագործութեանց, ապա՝ մանրամասնորէն կանգ կ'առնէ «Նախան»ը առանց երգիչին վրայ թափելով հանգոյցները մէկտեղ ույժմէական նիւթին՝ զորին զեղարուեստական զնահաստումն անցնելու արտադրութեամբ:

ՀԱՅ ՏԵՍԱԻ

ՀԱՅ ՏԵՍԱԻ

ԼՈՒՍԵՂԵՆ ՀԱՅ

(ԾԱՂԿԱՔԱՂ ԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ)

Հրատարակաբիւն

Դ Պ Ր Ե Վ Ա Ն Ո Ւ Ց

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՑ

Անթիլիան — 1982

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ԿԻՆԸ — ՎԻՍՅԱԿ —
Վազգէն Շաշանեան, Պէյրուք, 1982, տպարան «Ալքափրէս»:

ՅԱՍՄԻԿՆԵՐ — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆՆԵՐ —
Արփինէ Փիլոյեան, Պէյրուք, 1982, «Շիրակ» հրատարակչատուն:

ԿԱՂԱՆԴԻ ԵՐԳԵՐ — ՎԱՍԿԵՐԱԳԱՐՂ ԵՐԳԱՐԱՆ —
Հրատարակաբիւն՝ Լիբանանի Ազգ. Առաջնորդարանի, խմբագիր՝ Սարգիս
Փանոսեան, գեղարուեստական խմբագիր՝ Վազգէն Թիւթիւնեան, Պէյրուք,
1983, տպարան «Արագ»:

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՊՐԻՐ ՅԱԻԺՏԵԱՆ — ԵՐԳԱՐԱՆ —
Եղուարդ Յակոբեան, Գահիրէ, 1981, տպարան «Նուպար»:

ՀԱՐԱՋԱՏ ԴՊՐՈՑ — ԵՐԳԱՐԱՆ —
Եղուարդ Յակոբեան, Գահիրէ, 1981, տպարան «Նուպար»:

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Մ. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد ارثين كارنيك قرانجيان
PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN
 .
Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒՏԵԱՆ
 Խմբագիր
 ԳՕՂՈՍ ԱՆԱԳԵԱՆ
 Խմբագրության անդամներ
 ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
 Հարյալան պատասխանատու
 ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ
 B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
 Tel. 296898